


4224

3K9

4-22



31.01.2013

№ 2 ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ԳԻՒՂԱՑԻՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

1003
11402

ՆԱՄԱԿՆԵՐ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻՆ

Արևմտայամ «Պայխար»-ից

58

95

300
1123-ԱԶ

Ե 1 Բ.



ԹԻՖԼԻՍԻ

Տպ. «ԱՂՈՂՈ», Գիմնազիկական, № 1
1917

րենց իրաւասութիւնը առաջւայ նման պահպանեն և ժողովրդի վրայ իշխելու, նրան կեղեքելու նոյնքան հնարաւորութիւն ունենան, ինչ որ մինչ այդ: Այս պատճառով էլ, երբ շահագործող դասակարգերը նկատում են, որ տնտեսական կեանքի գոյութիւն ունեցող եղանակը կաւրտուրական և ամենից առաջ կուշտ կեանք վարելու հնարաւորութիւնից նրանց զրկում է, և որ երկրի տնտեսական ուժերը, նոր տեխնիկան դէպի մի աւելի ապահով կեանք են տանում, այն ինչ գոյութիւն ունեցող կառավարութիւնը կեանքի այդ առաջադիմութեան ամենաոխերիմ թշնամին է հանդիսանում, նրանք կազմակերպում են, իրենց ուժերը միացնում և այդ կառավարութիւնը տապալում, նրան աւելի դեմոկրատիկ, իրենց շահերին ու ձգտումներին աւելի համապատասխան ձև տալիս: Յեղափոխութիւնը տնտեսական և քաղաքական կեանքում կատարւում է գուզնթացարար, միաժամանակ և նրանցից մէկն առանց միւսի անհնարին է: Այնպէս որ աւելի յեղափոխութիւնը երբէք չպէտք է կատարած, իր նպատակներին հասած համարել, եթէ ժողովուրդը կարողացել է միայն նոր, քաղաքական-կառավարչական կարգեր հիմնել, առանց իր տնտեսական գոյութիւնը բարւոքելու, կամ ընդհակառակը՝ եթէ նա որոշ չափով իրան տնտեսապէս ապահովել է, բայց շարունակում է նոյն հին քաղաքական պայմաններում ապրել: Առաջին դէպքում ժողովրդական մասսաները դժգոհ կը լինեն, քանի որ դեռ չի ծնւել այն հանճարը, որ մեզ սովորեցնէր, թէ ինչպէս կարելի է միայն քաղաքական ազատութիւններով ապրել՝ առանց հայի, մսի, կաթի, շաքարի, բնակարանի, հագուստի և բազմաթիւ այլ իրերի ու նրանց արադրող գործիքների: Երկրորդ դէպքում, ձեռք բերած տնտեսական բարւոքումը շատ կարճատեւ կը լինի, քանի որ իշխանութիւնը դեռ հին ուժիմի ձեռքում է կենտրոնացած և նա ոչ մի պայմանում չի կարող թոյլ տալ, որ ժողովուրդը հարստանայ և իշխող դասակարգերի ապրուստի աղբիւրը ցամաքացնի: Յեղափոխական շարժման հիմքը տնտեսական կեանքի առաջադիմութիւնն է, բայց որովհետեւ այդ ասպարէզում ձեռք բերած յաղթանակները առանց քաղաքական իշխանութեան

պաշտպանել չի կարելի, յեղափոխական մասսաները ձրգտում են քաղաքական իշխանութիւնն էլ իրենց ձեռքը ձրգել:

Հէնց այս ուղղութեամբ է, որ կատարւում է և մեր ապրած յեղափոխական շարժումը: Ժողովրդին նա պէտք է ոչ միայն քաղաքական ազատութիւններ, այլ և տնտեսական որոշ ապահովում բերի. այլ կերպ շահագործող մասսաներին նա ոչ մի կերպ գոհացում չի տայ:

Անցնելով այժմ մասնաւորապէս գիւղացիներին, պէտք է նախ և առաջ ասենք, որ սոցիալ-դեմոկրատիայի տեսակէտից գիւղացիութիւնը մի ամբողջութիւն չի կազմում, այլ նոյնպէս է դասակարգերի բաժանում, ինչպէս և քաղաքի բնակիչները: Գիւղում էլ գոյութիւն ունեն շահագործողներ ու շահագործողներ, ճնշողներ ու ճնշւածներ, կուշտ ու քաղցածներ, իշխող ու ենթարկւող դասակարգեր: Սոցիալ-դեմոկրատիայի ձգտումն է՝ աշխարհիցս իսպառ վերացնել ամեն մի շահագործում, ամեն մի ճնշում, ինչ ձևով էլ որ նրանք արտայայտեն: Այս նպատակին համեմու համար մեր կուսակցութիւնը կազմակերպում, գիտակցութեան է բերում ժողովրդի բոլոր շահագործող, ճնշած տարրերին և իշխողներին ու շահագործողներին անողորմ կոիւ յայտարարում: Իսկ թէ այդ կեղեքիչն ու շահագործողը որտեղ ապրելիս կը լինի՝ գիւղում կամ քաղաքում, թէ նա ինչպէս է կոչւում՝ գիւղացի կամ քաղաքացի—դա սոց-դեմոկրատիայի համար ոչ մի նշանակութիւն չունի: Այդ կուսակցութիւնը ոչ թէ բոլոր քաղաքացիների ու բոլոր գիւղացիների ջանքն է պաշտպանում, այլ միայն նրանց շահագործող տարրերի շահերը: Սոցիալ-դեմոկրատիան զրանում է, որ շահագործումն ու կեղեքումը գիւղում դեռ աւելի ծանր, աւելի բարբարոս կերպարանք են ընդունում, քան քաղաքում, որովհետեւ գիւղի աշխատանքները մշտական չեն, այլ սեզոնային և գիւղատնտեսութեան մէջ աշխատող բանւորներն ու չքաւոր, սակաւաճող գիւղացիները կազմակերպման այնքան նպաստաւոր պայմաններում չեն ապրում, ինչքան քաղաքի պրոլետարիատը: Գիւղի բոլորները, վաշխաւուն և առհասարակ ամեն մի հարուստ գիւղացի

նոյնքան են մեր կուսակցութեանը թշնամի, ինչքան և քաղաքում ապրող ֆինանսիստը կամ գործարանատէրը:

Պարզ է, որ յեղափոխութիւնը գիւղում էլ կը յազթանակի, որ գիւղի բնակիչն էլ կը կարողանայ իր գրութիւնը բարեօրոյ, երբ նա գիտակցութեան կը գայ և կը ճանաչի, թէ ով է իր բարեկամը և ով իր թշնամին, երբ նա կը կազմակերպուի և իր ամբողջ ուժը դասակարգային կռիւ ասպարէզ կը հանի: Յարի արդէն տապալած կառավարութիւնը կարողանում էր դարեր շարունակ իր գոյութիւնը պահպանել և ժողովրդին ճնշել հէնց այն պատճառով, որ բոլոր քաղաքներում և գիւղերում նա խոր արմատներ ունէր թողած, որ մեր լայնածաւալ երկրի ամենախուլ անկիւններում անգամ նա ունէր իր կողմնակիցներն ու պաշտպանները: Վերջիններիս մէջ պակաս տեղ չեն բռնում գիւղի մանր բռնակալները, յեղափոխութեան այդ ոլներիմ թշնամիները: Հետեւապէս գիւղացին պէտք է իմանայ, որ ամեն մի գիւղացի էլ իր բարեկամը չէ. գիւղացին պէտք է այժմ գիտակցի, որ եթէ ինքը թշուառ ու քաղցած է, դրա պատճառը ոչ այնքան Պետրոգրադի կենտրոնական կառավարութեան մէջ է փնտրելու, ինչքան հէնց գիւղում, այնտեղի աղաների ու խալֆաների շարքերում: Գիւղի ճնշած, շահագործող տարրերը պէտք է բանւորների օրինակին հետեւեն և կազմակերպուեն դասակարգային հողի վրայ՝ շահագործողը միայն շահագործողի հետ միանալով և ոչ թէ շահագործող աղաների շարքերը մտնելով: Հին ուժերը իրենց գիրքերը հեշտութեամբ չեն դիջի. միայն կազմակերպւած և հետևողական կռիւն է, որ նրանց կատալի գիջումներ անել: Գիւղում նոյն դասակարգ. կռիւն տեղի ունի, ինչ և քաղաքում, բայց գիւղի բոլորները և նրանց շահերի պաշտպան հանգիստացող քաղաքական կուսակցութիւնները ամեն ջանք գործ են դնում և համոզում գիւղացուն, որպէս թէ բոլոր գիւղացիներն էլ միեւնոյն շահերն ունին, որ գիւղում դասակարգային կռիւ չկայ և եթէ գիւղացիների մի մասը թշուառ կացութեան մէջ է գտնուում, դրա պատճառը միայն բիւրոկրատիան, կառավարութիւնն է: Որ բիւրոկրատիան և ամբողջ հին ռէժիմը ժողովրդի թշնամի են եղել, այդ

մասին երկու կարծիք լինել չի կարող, բայց ներկայ դէպքում, երբ գիւղացիներին համոզում են, որ նրանց մէջ դասակարգեր չկան, նման մարդիկ մի նպատակ ունին միայն՝ գիւղացու գիտակցութիւնը մթափնել, նրա ուշադրութիւնը իր իսկական թշնամիներից հեռու պահել: Մենք բոլորս հայեր ենք, մենք պէտք է ոչ թէ միմեանց դէմ կռենք, այլ մեր թշնամի՝ վրացիների, թուրքերի, ուսանների և միւս ժողովուրդների դէմ, իսկ մեր շարքերում պէտք է կատարեալ համերաշխութիւն տիրի—քարոզում են հայ ժողովրդին և ամենից առաջ հայ գիւղացիութեանը հայ բոլորներն ու բոլոր տեսակի շահագործող-ճնշողները: Նոյն քաղաքականութիւնն են վարում թուրք բոլորները, համոզելով թուրք շահագործող մասսաներին, որ նրանց գլխաւոր թշնամիները օտարազգիներն են և որ բոլոր թուրքերը միևնոյն շահերն ունեն: Նոյնպէս են վարում և վրացի, ուս, լեհ և այլ ազգերի շահագործող դասակարգերը, ձգտելով ժողովուրդների մէջ թշնամական յարաբերութիւններ ստեղծել, որպէս զի իրենք պատր Զրում ձուկ որսան: Նրանք միշտ էլ ամբողջ ազգի համերաշխութիւնից են ձառում, դասակարգային կռիւ դէմ են և այդ պատճառով իրենց ազգային կուսակցութիւնն են անւանում, կուսակցութիւն, որը որպէս թէ ամբողջ ազգի շահերն է պաշտպանում: Սոցիալ-դեմոկրատիան, ընդհակառակը, այն տեսակէտն է պաշտպանում, որ բոլոր ազգութիւնների, ինչպէս և ամեն մի գիւղացիութեան շարքերում գոյութիւն ունեն դասակարգեր, որոնք միմեանց դէմ դարեր շարունակ կռիւ են մղել, և որ ամեն մի քաղաքացի իր շահերը այն դէպքում միայն կարող է պաշտպանւած լինել, երբ նա կմիանայ իր դասակարգին՝ բանւորը բանւորութեանը, թշուառ գիւղացին՝ գիւղացիութեանը: Ռուսաստանի յեղափոխութիւնը այսքան մեծ յաջողութեամբ պսակեց հէնց այն պատճառով, որ բոլոր ազգերին պատկանող բանւորներն ու գիւղացիները միացած ուժերով ընդհանուր թշնամու դէմ կռոււմ էին: Մեր կեանքը դասակարգային և ոչ թէ ազգային կռիւ ասպարէզ է: Հակառակ դէպքում, ուս ժողովուրդը հին կառավարութեան դէմ չպէտք է կռւէր, որովհետեւ կառավար-

բութեան գլուխ էին անցած իրանց «խակական» ուսմանը անուանող «հայրենասէրները»:

Ահա այս-նոյն դասակարգային տեսակէտը պէտք է ընդունի և գիւղացիութիւնը, որպէսզի իր առաջ դրած խոշոր տնտեսական-քաղաքական խնդիրները կարողանայ լուծել: Հայ շահագործող գիւղացիութիւնը պէտք է միւս ազգութիւններին պատկանող շահագործող գիւղացիներին հղբայրօրէն ձեռք մեկնի, մի ընդհանուր ղեմակրատական-գիւղացիական կազմակերպութիւն ստեղծի և համերաշխ կերպով իր շահերը պաշտպանի: Կեանքը կոխ է, և կթէ գիւղացիութիւնը իր ազատագրումը ուրիշներից սպասի, նա չարաչար սխալուած կը լինի: Ինչպէս աւսում է յեղափոխական երգում, մեզ ոչ ոք չի օգնի՝ ոչ Աստուած, ոչ թագաւորը և ոչ հերոսը: Մեր ամբողջ յոյսը մեզ վրայ պէտք է լինի, մեր դասակարգային կուռի վրայ: Այսպէս է մտածում ու այս դասակարգային հողի վրայ է գործում բանւորութիւնը և այս հանգամանքի շնորհիւ միայն իր կուռում նա մեծ յաջողութիւններ է ունենում: Նոյն տեսակէտը պէտք է ընդունի և չունեող գիւղացիութիւնը, նա էլ պէտք է կամ դասակարգային հողի վրայ կազմակերպւի և իր շահագործողներին կոխ յայտարարի, կամ դեռ երկար տարիներ քաղցի ու թշուառութեան ճիրաններում մնայ: Ազատագրման ուրիշ ճանապարհ չկայ: Մարդկային հասարակութեան պատմութիւնը դասակարգային կուռի պատմութիւն է:

Նամակ II

Գիւղացու անկ դրութիւնը

Ռուսաստանի շահագործող բազմամիլիոն գիւղացիութիւնը երկրի ազգաբնակչութեան մեծամասնութիւնն է կազմում, երկրի հարստութիւնների երկու-երրորդ մասի արտադրողն է հանդիսանում, բայց իր թւին և տնտեսական կեանքում ունեցած իր դերին համապատասխան հասարա-

կական-քաղաքական գործունէութիւն մինչև յեղափոխութիւնը չի ունեցած: Այդ հանգամանքը միշտ էլ գիւղացու դժբախտութիւնն է կազմել և ոչ թէ նրա մեղքն է եղել: Գիւղացիութեան մեծամասնութիւնը դեռ անկիրթ ու անգրագէտ է, աշխարհիս բարիքներից օգտուելու հնարաւորութիւնից զուրկ: Ոստիկանական պետութիւնը միշտ էլ ձգտում էր գիւղը քաղաքից կտրած պահել, կարծէք լրագիրը, թատրոնը, դպրոցը, երկաթուղին, հեռագիրը, հեռախօսը և ներկայ կեանքի բազմաթիւ այլ բարիքները միայն քաղաքացիների համար են ստեղծած: Գիւղացիները միմեանց մէջ էլ չէին կարող կապ հաստատել, կազմակերպւել, իրենց ցաւ ու դարձերից խօսել, միմեան և ընդհանուր ուժերով իրենց շահերը պաշտպանել: Ամենահզօր ստիճկանը հսկում էր նրանց ամեն մի քայլին, ամեն մի շարժումին, նրանց միացման և համերաշխ գործունէութեան ճանապարհին չինական պատեր կառուցելով: Շահագործողների դէմ կուսելը բանւորների համար անհամեմատ աւելի հեշտ է, քանի որ բանւորութիւնը կենտրոնացած է խոշոր քաղաքներում, մեծ մասսա է կազմում, միմեան և գիտութեան գալու աւելի հնարաւորութիւն ունի և կապիտալիստներին կամ նրանց պետութեանը կոխ յայտարարելու դէպքում կարող է գործադուլի նման մի ուժեղ գործիքի դէմել, որից գիւղացիութեան ճնշող մեծամասնութիւնը զուրկ է: Եթէ գործարանում կամ պետական երկաթուղու վրայ բանւորը հրաժարւում է աշխատելուց և գործադուլ յայտարարում, կապիտալիստներին և պետութեանը նա սովորաբար այնքան զգալի վնաս է հասցնում, որ ստիպւում է նրանց իր պահանջները մասամբ կամ ամբողջովին կատարել: Գիւղացիների մեծամասնութիւնը կուռ այդ գործիքից օգտուել չի կարող, որովհետև եթէ գիւղացին դաշտային աշխատանքների ժամանակ աշխատանքից հրաժարւի, հէնց ինքն էլ քաղցած կը մնայ: Իսկ կուռ այլ ճանապարհները մինչև յեղափոխութիւնը նրա առաջ միանգամայն փակ էին: Կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների բացակայութիւնն է, որ միշտ էլ ստիպել է գիւղացուն գանդատներով բաւականանալ և կուռ աւելի նպաստուոր պայմանների

սպասել: Իսկ եթէ երբեմն-երբեմն նրա դրութիւնն այնքան անտանելի է դարձել, որ նա մեծ ու փոքրիկ ապստամբութիւններ է կազմակերպել, վերջիններս սովորաբար անյաշողութեան են հանդիպել, որովհետեւ նրանցում մասնակցող գիւղերը անադին տարածութեան վրայ են ցրւած, գիւղացիներն էլ նախօրօք պատրաստուելու և միանալու հնարաւորութիւն չունին:

Այս պատճառով է ահա, որ վերջին տասն տարւայ ընթացքում, մինչև փետրուարեան պանծալի օրերը, Ռուսաստանի յեղափոխութեան մէջ գիւղացիութիւնը համարեալ էր մասնակցում: Արտաքին ու ներքին նպաստաւոր պայմանները դրա համար կատարելապէս բացակայում էին: Բայց հէնց որ ծագեց յեղափոխութեան արշալոյսը և աղատութեան արեւի առաջին ճառագայթները գիւղացուն տառնամեայ բնից արթնացրին, հէնց որ Ռուսաստանում քաղաքական ազատութիւններ հաստատեցին և գիւղացու տնտեսական-կուլտուրական զարգացման առաջ կանգնած խոչնդոտները վերացան, գիւղացին տնտեսապէս դարձաւ: Բոլոր յետագէ՛մ ուժերի կողմից պահպանողական-ռեակցիոն յայտարարած գիւղացիութիւնը մի ակնթարթում յեղափոխութեան ջիւղ պաշտպանը և նրա գլխաւոր սխներից մէկը դարձաւ: Իր սիրած բողաւոր-հերոս Իլիա Մուրոմեցի նման, ռուս գիւղացիութիւնը զանգաղօրէն էր աճում, բայց ոտքի կանգնելուն պէս նոյն բողաւորի նման մի անգամից սկսեց վիթխարի գործեր կատարել: Միանալով բանւորներին ու զինւորներին և հետեւելով նրանց օրինակին, գիւղացիութիւնը սկսեց կազմակերպել իր պատգամաւորական խորհուրդները և ունեցաւ բազմաթիւ տեղային, շրջանային և համառուսական խորհրդակցութիւններ ու համագումարներ, ուր արտայայտեց իր առողջ քաղաքական հասարակական բնազդը և ապացուցեց իր քաղաքական-հասունութիւնն ու պատրաստակաւութիւնը: Եւ ահա այսօր մենք ակնատես ենք համաշխարհային պատմութեան ամենավեհ երևոյթներից մէկին՝ գիւղացիութեան սերտ միացմանը բանւորների և զինւորների: Վերջիններիս պատգամաւորական խորհուրդների հետ ձեռք-ձեռքի տւած, նա ապագայ հարուստ,

կրթւած, կուլտուրական և բախտաւոր Ռուսաստանի հսկայ դեմոկրատական շէնքն է կառուցում, մի շէնք, որից մեծագոյն չափերով հէնց ինքն է օգտուելու: Եթէ մի սովորական բնակարան վաճառող երկար ու բարակ մտածելուց յետոյ է միայն այս կամ այն որոշումն անում, ինչքան աւելի զոյշ և աւելի հեռատես պէտք է լինի ներկայ դէպքում ռուս գիւղացիութիւնը, որի վիճակն է այսօր որոշում:

Մինչև փետրուարեան յեղափոխութիւնը բոլոր շահագործող դասակարգերը, նրանց հետ մասամբ և արդիւնաբերական բուրժուազիան զուրկ էին բազմաթիւ քաղաքական ու քաղաքացիական իրաւունքներից, կարելի է ասել՝ կիսատարկային դրութեան մէջ էին գտնուում: Բայց բոլոր դասակարգերի ու խմբերի մէջ գիւղացիութիւնն այդ տեսակէտից մի հզակի ծանր կացութեան մէջ էր դրած: Նա մի առանձին դաս (сословіе) էր կազմում, որի բոլոր անդամները, հարուստ թէ աղքատ—նոյնիսկ այն թշուառ մարդկային իրաւունքները չէին վայելում, որ միւս դասակարգերին էին յատուկ: Մի դեպքում հողից գիւղացին մօտ ակէտից մի հզակի ծանր կացութեան մէջ էր վճարում, քան ազնւական հողերու անգամ աւելի հարկ էր վճարում, քան ազնւական հողատէրը, նա հաղար ու մի տեսակ նստուրալ պարտաւորութիւնների—կոռ ու խարջի էր ենթակայ, որոնցից միւս դասակարգերն ազատ էին: Նրա համար առանձին դատարան գոյութիւն ունէր՝ գիւղական դատարանը, անարդարութիւնների և միջնադարեան անօրէն դատաւարութեան այդ կլասիկ հիմնարկութիւնը, որ բացառապէս գիւղի բնուցներին շահերն էր պաշտպանում. ընդհանուր քրէական ունեցքների շահերն էր պաշտպանում. ընդհանուր քրէական թղթերի համար հրատարակած լինէին. ծեծը, կտրանաւորումը, բանտարկութիւնը, ձրի աշխատանքը յանուն տէրտէրի աղօթքի, տանուտէրի և այլ ռստիկանների մտրակի ու բռնցքի, ինչպէս և ի փոռս բոլոր գիւղական վաշխաւորների, բռնցքների ու աղաների՝ նրա համար բնական, սովորական մի երևոյթ էին կազմում: Կրթութեան և պետական ծառայութեան ասպարէզներում անգամ նա քաղ-

ժաթիւ իրաւագրկութեան իւր ենթակայ: Ազնւականի կամ քաղաքացու որդին, որ միջնակարգ կամ բարձրագոյն կրթութիւն է ստացել, աւելի հեշտ էր պետական ծառայութեան ընդունում, աւելի կարճ ժամանակամիջոցում ծառայութեան բարձր աստիճաններ ստանում, քան նոյն կրթութիւնն ունեցող գիւղացու որդին, որը ազնւականից թէկուզ տասն անգամ աւելի ընդունակ, աւելի կրթուած ու աւելի բարեխիղճ մարդ լինէր: Եթէ այս բոլորի վրայ աւելացնենք 1889 թւից Ռուսաստանի ներքին նահանգներում գոյութիւն ունեցող գեմակի նաչալնիկների ինստիտուտը, կասկած չի մնայ արդէն, որ յեղափոխութեան նախորեակին գիւղացիութիւնը փաստօրէն նոյն ճորտային պայմաններում էր ապրում, ինչ և մինչև 1861 թիւը, երբ փետրւարի 19-ի ակտով ճորտատէրերի ճանկերից նա որպէս թէ ազատուց: Ժիշտ է, այս բոլոր արհաւիրքներին ունեւոր գիւղացիները ոչ այնքան մեծ չափով էին ենթակայ, ինչքան չունևորները, իսկ հարուստ գիւղացիները, որդէս կանոն, չէին էլ իմանում, չէին էլ զգում, որ նրանք կիսաճորտային դասի են պատկանում: Բայց չէ՞ որ այդ ճորտային պարտաւորութիւններից ազատելը նրանց ածանչէր նստում, չէ՞ որ ազատ քաղաքացու կեանք վարելու համար ոստիկաններին ու այլ պաշտօնեաներին նրանք պէտք է անդադար վճարէին, կաշառէին, հիւրասիրէին, նրանց առաջ տանեակ տարիներ քծնէին և վերջ ի վերջոյ իրենց համար անսկստելի կերպով ստորաքարշութեան մէջ ընկղմէին, այսպէս կոչուող լաքէյական հոգեբանութիւն ձեռք բերէին: Ոսկին որոշ չափով տանելի քաղաքացիական պայմանների մէջ էր նրանց դնում, բայց և այնպէս ստրկութիւնից բոլորովին չէր ազատում, իսկ քաղաքացիական գիտակցութիւն և ինքնասիրութիւն ունեցող մարդկանց համար դրամի երկու կողմն էլ չափազանց ծանր ու դժւար տանելի էին: Մի կրակից ազատւելով, գիւղացին միշտ էլ մի ուրիշ կրակի մէջ էր ընկնում: Արդէն չենք խօսում այն մասին, որ անվերադարձօրէն փող վճարելն էլ այնքան հեշտ գործ չէ:

Իրաւագրկութեան այս ասպարէզում բոլոր գիւղացի-

ները—չնչին բացառութիւններով— միեւնոյն պայմանների մէջ են դրած և մօտաւորապէս միեւնոյն ազատագրական ձգտումներն ունեն: Չունեւոր գիւղացիների հանդէպ գիւղական բուռնցքներն ու աղաները ինչքան էլ արտօնութիւններ էին վայելում, նրանք այնուամենայնիւ աղատ քաղաքացիներ չէին, այլ ամեն մի պաշտօնեայի կապրիզից կախւած թշառ արարածներ, որոնք ազքատ գիւղացու հետ գործ ունենալիս ասլաններ, անմատչելի աղաներ էին դառնում, իսկ ամեն մի ոստիկանի, ամեն մի կոկարդատրի առաջ ստրուկի չափ դողում, տանապատիկ կւանում, հալւում էին: Ռէակցիայի օրերին սրանք մի վերին աստիճանի զղելի արարածներ, ազատագրական շարժման կատաղի թշնամիներ էին հանդիսանում: Բայց երբ ռէակցիայի ծառի բունն ընկաւ, երբ նրա արմատներն էլ գետնի խորքերից արդէն դուրս են հանւում ու քամուն տրւում, երբ իշխանութիւնը կամաց կամաց գիւղի դեմոկրատիայի ձեռքն է անցնում՝ նախկին զայլերը, քթերը ազատագրական քամու ուղղութեամբ տնկելով, գայլին յատուկ սուր հոտաւորութեամբ պիտակցում են արդէն, թէ կեանքը մեղ ուր է տանում և սկսում իրենց շուրջը տիրող կեանքի նոր պայմաններին ու պահանջներին յարմարել: Ռէակցիայի օրերին էլ նրանք շատ լաւ էին զգում ու գիտակցում, որ ազատ քաղաքական պայմանները տնտեսական ու բարոյական առաջադիմութեան համար իրենց շատ աւելի նպաստաւոր են, քան բիւրոկրատիան, բայց յեղափոխութեան ուղին ընկելը նրանց համար անբնական, անհնարին էր: Եւ դա շատ հասկանալի է: Ինչքան էլ ազատութիւնները նրանց համար ցանկալի էին, բայց չէ՞ որ նրանց ձեռք բերելը շատ աւելի դժւար գործ է, քան գիւղացուն շահագործելը և պաշտօնեաներին ենթարկելը: Բացի դրանից, այդ կասկածոտ, երկչոտ ու հասարակական-քաղաքական կեանքում անհետկողական մարդիկ միշտ էլ իրենք իրենց հարց էին տալիս—դեռ իմ է իմանում, թէ յեղափոխութիւնը ինչով և ում յաղթանակով կը պտակւի: Լաւ է, եթէ նա մեծ դոներ ու ամենից առաջ զգալի նիւթական ծախսեր հոսանքի ու իր յաղթանակներով պիտաւորապէս գիւղական բուրժուա-

զիայի շահերին ծառայի: Իսկ եթէ յանկարծ բոլոր գծերն-
ներին ու բողոքողներին կախաղանի, բանալի և Սիրիբի
ճանապարհները ցոյց տայ կամ նրա յաղթանակները այն-
քան խոշոր լինեն, որ ճնշւածներին հնարաւորութիւն տան՝
աղաների լուծը իրենց ուսերից թօթափելու—այդ պարա-
զայում ինչ անել: Աւելի լաւ է—որոշում էին ամեն ան-
գամ գիւղի տէրերը—դեռ մի քիչ սպասենք, տեսնենք՝ գը-
լութներս ինչ է գալիս:

Այսօր ազատութիւնները արդէն նւաճած են: Եւ որով-
հետեւ ուշակցիայի վերադարձին շատ քչերն են հաւատում,
ազատութիւնից գիւղական բուրժուազիան կարող է ոչ պա-
կաս չափով օգտուել, քան աղքատ գիւղացիութիւնը: Նա էլ
այսօր յեղափոխութեան կողմնակից է դառնում, թէև ի
հարկէ ոչ այն չափով, ինչ չափով որ յեղափոխութիւնը գիւ-
ղական զեմոկրատիան է ողջունում: Ազատումն բիւրօկրա-
տական կապանքներից, գիտութիւն, նոր արդիւնաբերական
տեխնիկա և կուլտուրական, հարուստ կեանք—անա թէ գիւղի
բուրժուազիային ինչ են խօստանում այսօրւայ ազատ քա-
ղաքական կարգերը:

Եթէ Ռուսաստանի քաղաքը ուշակցիայի օրերին մի
բանտի կարելի էր նմանեցնել, գիւղը որպէս մի իսկական
գծովք պէտք էր ընդունել:

Անցնենք այժմ այն հարցին, թէ այդ գծովքից դուրս
գալու համար գիւղացիները ինչպէս պէտք է կազմակերպ-
ւեն, ինչ նպատակների ձգտեն և թէ այդ նպատակներն ի-
րականացնելու համար նրանց տրամադրութեան տակ ինչ
միջոցներ ու ճանապարհներ կան:

Նամակ III

Նախապատրաստական կազմակերպչական աշխատանք

Վեց ամսւայ ընթացքում զեմոկրատիայի տարած
յաղթանակները այնքան մեծ ու նշանաւոր են, որ յեղափո-
խական ժողովուրդն այսօր ամենայն իրաւունքով կարող է

հրճւել և ազատագրմանը նւիրած տօներ կազմակերպել:
Ցեղափոխութեան յաղթական շարժման մի բնական հետե-
ւանք է այդ բայց որովհետեւ հին կարգերի վերջնական
կործանման դեռ սկիզբն է միայն դրած, իսկ զեմոկրատա-
կան կարգերն ու կազմակերպութիւնները երկրում դեռ այն-
քան տարածւած չեն և այնքան խոր արմատներ չեն թո-
ղել, որ կարելի լինէր յետադէմ ուժերի վերադարձից չվա-
թենալ, ուստի չպէտք է միայն հրճւանքով ու տօնախմբու-
թիւններով բաւականանալ, այլ զեմոկրատիայի դիրքերը
ամրացնելու համար անհրաժեշտ է լարել մեր բոլոր ուժերը,
կազմակերպել: Կազմակերպման գործը գիւղում աւելի ուշ
սկսւեց, քան քաղաքում և շատ գիւղական շրջաններում,
մասնաւոր Անդրկովկասի հարաւային և արեւելեան մասե-
րում, գիւղացիների ճնշող մեծամասնութիւնը դեռ կազմա-
կերպւած չէ և իր անելիքի մասին պարզ գաղափար չունի:

Ցեղափոխութիւնն ուղղած է ոչ թէ անհատների կամ
մարդկային փոքրիկ խմբակների, այլ ամբողջ դասակար-
գերի գէմ, որոնք դարեր շարունակ երկրի ամբողջ հարս-
տութեան տէր ու տիրական են հանդիսացել, ժողովրդական
մասսաների աշխատանքի պտուղների նշանաւոր տոկոսը
իւրացրել, ամբողջ նւթական և քաղաքական զօրութիւնը
իրենց ձեռքում կենտրոնացրել, դպրոցը, գիտութիւնը և ժա-
մանակիս կուլտուրայի միւս բոլոր արգասիքները իրենց
ենթարկել, շահագործող, իշխող դասակարգերի համար ժո-
ղովրդական մասսաներին ճնշելու և կեղեքելու գործիք
դարձրել: Գիւղացիութեան ամենափոքրիկ թշնամիներն են
այդ դասակարգերը, նրանք միաժամանակ շատ փոքրաթիւ
են, բայց իրենց ձեռքում կենտրոնացրած հարստութիւն-
ները, իրենց ուժեղ կազմակերպութիւնները և իրենց բարձր
գիտակցութեան շնորհիւ դարեր շարունակ ժողովրդի աշ-
խատաւոր տարրերին կարողացել են իրենց ենթարկել, ի-
րենց վրայ աշխատեցնել: Գիւղացիների համար այստեղից
պարզ պէտք է լինի, որ յեղափոխութիւնը յաղթանակով կը
պսակւի, մեր առաջ դրած անտեսական-քաղաքական մեծ
հարցերը զեմոկրատիայի շահերին համապատասխան լու-
ծում կը ստանան, եթէ իշխող դասակարգերից աւելի ու-

ժեղ կազմակերպւելն, գիտակցութեամբ էլ նրանցից աւելի ուժեղ զինւած լինին: Կազմակերպութիւնն ու գիտակցութիւնը գեմոկրատիայի կուր յաջողութեան ամենամեծ գըրաւականն են կազմում և մեղ դրա լաւագոյն ապացոյցը իշխող դասակարգերն են տալիս, որոնք երկրի ընդհանուր ազգաբնակչութեան մի չնչին տոկոսն են կազմում, բայց ուժեղ կազմակերպութիւնների միջոցով ամբողջ երկիրը կարողանում են իրենց ձեռքում պահել: Ռուսաստանի գիւղացիութիւնը մի մեծ մասսա, մարդկային մի ուղիւն է ներկայացնում, բայց մօտ 130 միլիոն մարդուց բաղկացած այդ մասսան բոլորովին անգոր է, քանի որ գեւ տեղային, շրջանային ու համառուսական կազմակերպութիւններ չունի: Բանւորներին և գինւորականներին քաջ յայտնի է, որ ուժը ոչ թէ մարդկանց քանակով է հաշւելու, այլ նրանց կազմակերպութիւններով: Անկազմակերպ և անգիտակից գիւղացիութիւնը նոյնքան գործ կարող է կատարել, ինչքան և անկազմակերպ ու անգին գործը:

Բայց գիւղացիութիւնն ինչպէ՞ս պէտք է համախմբւի, ինչպէս կազմակերպւի, որ իր թշնամիներէ ուժից աւելի մեծ ուժ ներկայացնի: Դիւղերում արդէն գոյութիւն ունին կառավարչական նոր, գեմոկրատիկ մարմիններ, բայց գիւղացիութիւնը նրանցով չպէտք է բաւականանայ և իր յոյսը նրանց վրայ դնի, այլ պէտք է բանւորութեան օրինակին հետ թափ. կառավարութեան և տեղային նոր կառավարչական մարմինների պաշտպան է հանդիսանում, ինչքան որ նրանք յեղափոխութիւնը առաջ են տանում և գեմոկրատական կարգերի արմատացման հողից չեն շեղւում, բայց միևնոյն ժամանակ նա՝ բանւորութիւնը՝ իր դասակարգային կազմակերպութիւններն է ստեղծում՝ իր պատգամաւորական խորհուրդները: Վերջիններս ոչ միայն զուտ բանւորական հարցերով են զբաղւում, այլ և բաղձաթիւ ընդհանուր քաղաքական-հասարակական և անտեսական հարցեր են լուծում: Նրանք ամենուրեք երկրորդ կառավարութեան դեր են կատարում և առանց նրանց խորհրդի ու թոյլտուութեան կենարանում և գաւառներում ոչ մի խոռոհ հարց չի լուծւում: Գիւղացիութիւնն ունի իր առանձին

1003

71402

պահանջները, որոնց բաւարարման խնայողութեամբ չէ և որոնց իրաւունքները չեն միայն իր՝ գիւղացու կազմակերպւած անդամային տանքով: Ամեն ինչ մի կողմ թողած, բաւական է մատնանիշ անել հողային հարցի մեծութիւնը, նրա բարդութիւնն ու լուծման դժւարութիւնը, որպէսզի գիւղացիների մի յատուկ կազմակերպութեան անհրաժեշտութիւնը այլ ևս ոչ ոքի մէջ կասկած չյարուցի: Առանց այդ կազմակերպութեան անհրաժեշտ է ոչ միայն հողային հարցի կանոնաւոր լուծումը՝ առանց էքցեսների և անարդարութիւնների տեղի տալու, այլ անհնարին է նոյնիսկ հողային հարցի ուսումնասիրութիւնը, հողատիրութեան և հողագործութեան եղանակների հետ կապւած բազմաթիւ հարցերի պարզաբանումը: Տեղային ինքնավարութեան և տեղային կառավարչական մարմինների հետ զուգընթացաբար պէտք է գոյութիւն ունենան և յատուկ գիւղացիական ներկայացուցչական մարմինները, գիւղացու շահերի պաշտպանութեան այդ լաւագոյն գրաւականները: Մեր խօսքը գիւղացիների պատգամաւորական խորհուրդներին է վերաբերում, որոնք տարածւած են ամբողջ եւրոպական Ռուսաստանում, բայց մեղ մօտ, Անդրկովկասում, դեռ բացակայում են: Մեր երկրի գիւղացիութիւնն էլ ամենուրեք պէտք է նոյն կազմակերպութիւններն ստեղծի, նրանց շուրջը կազմակերպւի, իր ռայոնական, գաւառային, նահանգային ու շրջանային խորհուրդներն ունենայ և այնուհետև Ռուսաստանի ընդհանուր գիւղացիական շարժման և ընդհանուր գիւղացիական խորհուրդի հետ ամենատեղեկաբար հասաւորի ու նրանց հետ մի մարմին կազմի: Յեղափոխութիւնը համառուսական բընոյթ է կրում և տեղային բոլոր հարցերի լուծումը նրա համառուսական յաղթանակից է կախւած: Եւ եթէ Ռուսաստանի որոշ շրջաններում—նրանց մէջ և Անդրկովկասի հայկական ու թուրքական շրջաններում—գիւղացիութիւնը ռէակցիայի օրերին յեղափոխական կազմակերպութիւններ չի ունեցել, որոնք նրան հին ռէժիմի դէմ կուելու համար պատրաստէին, այժմ, երբ այդ գիւղացիութիւնը ազատութեան բարիքներից արդէն ճաշակել և իր պահանջները որոշ

չափով մշակել, պարզել է, այժմ նա այլ ևս չի կարող քաղաքական քուն մտնել և ազատագրման ուղիներ է փնտրում, կուրի գէնքեր պատրաստում:

Գիւղացիների պատգամաւորական խորհուրդների կազմակերպութիւնը մի անհրաժեշտ նախապայման է, առանց սրի նրանց շատ գործնական քայլերը կարող են անյաղթելի խոչընդոտների հանդիպել: Նրանց գոյութիւնը առաւել ևս այն պատճառով է անհրաժեշտ, որ Ռուսաստանի կիսում տեղային ինքնավարութիւն դեռ գոյութիւն չունի, իսկ միւս կիսում եղած ինքնավարութեան մարմինները մեծ մասամբ յետադէմ աղնականների ձեռքում են գտնւում: Քաղաքների գեմոկրատիան, շնորհիւ իր բարձր գիտակցութեան և ուժեղ կազմակերպութիւնների, կարողացաւ քաղաքային ընտրութիւններին վերաբերեալ մի օրէնք ձեռք բերել, որ իր գեմոկրատիզմով ամբողջ աշխարհում առաջին տեղն է բռնում: Քսան տարեկան հասակ ունեցող բոլոր քաղաքացիները, առանց որեւէ ցենզային սահմանափակման, քաղաքային ընտրութիւններին մասնակցելու—ընտրելու և ընտրուելու—իրաւունք ձեռք բերին: Քաղաքական իրաւունքներն ու տնտեսական բարեկեցութիւնը երկնային մանանայի նման դեռ երբեք ժողովուրդների գլխին չեն իջած. նրանց նւաճել է հարկաւոր և նւաճումը ձեռքում պահելու, օգտագործելու ընդունակութիւն ունենալ: Գիւղացիութեան առաջ կանգնած բազմաթիւ հարցեր չեն կարող բաւարար և բոլորի համար գոհացուցիչ լուծումն ստանալ, մինչև որ գիւղական շրջաններում էլ ինքնավարութեան գեմոկրատական մարմիններ չհաստատուեն: Բայց դրա մասին միայն ինքը գիւղացիութիւնը կարող է հոգալ, յանձնա իր պատգամաւորական խորհուրդների, որոնց կազմակերպութիւնն այդ պատճառով օրւայ ամենաանյետաձգելի խնդիրն է:

Դեմոկրատիան իր խոշորագոյն պահանջների բաւարարումը առայժմ յետաձգում է, նրանց Հիմնադիր Ժողովի իրաւասութեանը թողնելով: Դա մի վերին աստիճանի հեռատես քաղաքականութիւն է, որի ներկայացուցիչները ոչ թէ յեղափոխական ֆրադներով են ապրում, այլ յեղա-

փոխութիւնը տարածելու, նրան խորացնելու գործով: Գիւղացիներն էլ մի շարք խոշոր պահանջներ ունեն, որոնց լուծումը նոյնպէս Հիմնադիր Ժողովին են թողնում, քանի որ Ժանանակաւոր Կառավարութեանը նման մեծ իրաւունքներ չի կարելի տալ, քանի որ ամբողջ գեմոկրատիայի տեսակէտը այս կամ այն հարցում դեռ մշակած ու պարզ չէ: Հարկւրաւոր տարիներ շարունակ գիւղացիութիւնը սոսկալի շահագործման է ենթարկւել, բազմաթիւ անարդարութիւններ տարել և այժմ պէտք է համբերութեամբ զինւի ու մի քանի ամիս էլ սպասի, մինչև որ Հիմնադիր Ժողովը իր վճռական և հեղինակաւոր խօսքը կասի: Այս ոգով մի չափազանց կարեւոր որոշում էլ գիւղացիների համառուսական համագումարն արեց, ամեն տեսակի կալաածատիրական հողերի գրաւումը նոյնպէս Հիմնադիր Ժողովին թողնելով: Բայց չէ՞ որ սակաւահող գիւղացին հէնց այսօր հողի սուր կարիք ունի, այնքան աւելի սուր, երբ հարեան կալաածատիրական հողերը չեն մշակւում. չէ՞ որ պարենաւորման, դպրոցի և բազմաթիւ այլ հարցեր կան, որոնց յետաձգումը կը նշանակէր կեանքը գիւղում կանգնեցնել: Յետաձգել կարելի և թոյլատրելի է միայն այդ հարցերի վերջնական լուծումը, որ Հիմնադիր Ժողովի գործը պէտք է լինի, բայց անհրաժեշտ է անմիջապէս գտնել և նրանց Ժամանակաւոր լուծման եղանակը: Հողային հարցի լուծումն, օրինակի համար, պէտք է Հիմնադիր Ժողովին թողնել, քանի որ դա ամբողջ երկրին վերաբերեալ մի հարց է, բայց կալաածատէրերի հողերից առայժմ օգտուելու եղանակը պէտք է որոշել հէնց այժմ:

Գիտակից գիւղացիների և գիւղում գործող գեմոկրատական հիմնարկութիւնների գլխաւոր գործն է այսօր՝ գիւղացիների պատգամաւորական խորհուրդներ կազմակերպել, պահանջել կառավարութիւնից, որ ամենուրեք անմիջապէս գեմոկրատական զեմասուային մարմիններ հաստատուեն, ընտրած նոյն օրէնքի հիման վրայ, որը քաղաքային ինքնավարութեան համար գոյութիւն ունի, այսինքն ընդհանուր և հաւասար ընտրական իրաւունքով բոլոր հասակաւոր գիւղացիների համար՝ առանց որեւէ խտրութեան, առանց որեւէ

ցենզի: Մինչև որ գիւղական շրջաններում լայն դեմոկրատական հիմունքների վրայ դրած զեմստովային հիմնարկութիւններ չհաստատուին և նրանց հետ զուգընթացաբար գիւղացիների պատգամաւորական խորհուրդներ, մինչ այդ անհնարին կը լինի ոչ միայն տնտեսական հարցերի լուծումն, այլ և Հիմնադիր Ժողովի համար կատարելիք նախապատրաստական աշխատանքները: Գիւղացիների մէջ անհրաժեշտ է ամենալայն կերպով քաղաքական-տնտեսական հարցերի շուրջը ագիտացիա մղել, նրանց գիտակցութեան բերել, որպէսզի Հիմնադիր Ժողովի պատգամաւորների ընտրութիւնը շատ թէ քիչ կանոնաւոր հողի վրայ դրւի և գիւղացիութիւնը ամենայն գիտակցութեամբ միաբարեւել այդ հարցին, որի այս կամ այն լուծումից է կախւած լինելու նրա վիճակը տասնեակ տարիներ շարունակ:

Հիմնադիր Ժողովը կորուշէ ծայրայեղ դեմոկրատական օրէնքներ հրատարակել, որոնք ամբողջովին ժողովրդի շահերի պաշտպանութեանը նւիրւած կլինին, բայց պէտք է իմանալ, որ դեմոկրատական օրէնքը մեր դրութիւնը դեռ չի բարւոքի, եթէ բոլոր քաղաքներում և գիւղերում չլինին ուժեղ ժողովրդական կազմակերպութիւններ, որոնք յետագէմ ուժերի դէմ կուեկու ընդունակութիւն և ուժ ունենան և ժողովրդանպատ օրէնքները կեանքում կիրառել կարողանան: Հիմնադիր Ժողովի հրաւիրումը և նրա միջոցով հրատարակելիք օրէնքները յեղափոխութեան առաջին և աւելի հեշտ իրականալի քայլն են կազմում, քան այդ օրէնքների կիրառումը: Գաղաքական կեանքը մեզ մօտ զարգացած չլինելու շնորհիւ, շատերը դեռ օրէնքների վրայ մեծ յոյս են դնում, կարծելով, որ լաւ օրէնքից է կախւած մեր բարեկեցութիւնը: Բայց գիւղացիները պէտք է լաւ ըմբռնեն, որ ամենալաւ օրէնքն անգամ նրանց դրութիւնը մազաշափ չի բարւոքի, եթէ այդ օրէնքներից օգտուելու, նրանց պաշտպանելու համար իրենք պատրաստւած և կազմակերպւած չլինեն: Ամեն մի օրէնք ոչ այլ ինչ է, քան գոյութիւն ունեցող դատակարգային փոխ-յարաբերութիւնների արտայայտութիւնը և նրա կիրառումը այն ժամանակ է միայն հնարաւոր, երբ ժողովրդական մասսաները միշտ

էլ այնքան ուժեղ կը լինեն, որ յետագէմ դատակարգերին գլուխ բարձրացնելու հնարաւորութիւն չեն տայ:

Հայ և թիւրք գիւղացիութիւնը դեռ բոլորովին անկազմակերպ է, քաղաքական հարցերին համարեա անծանօթ: Եթէ նա անմիջապէս չկազմակերպւի և եռող կեանքում ամենաեռանդուն կերպով չմասնակցի, յեղափոխութիւնը կարող է նրա կողքից նոյնպէս անցնել, ինչպէս այդ 1904—7 թւականներին տեղի ունեցաւ, երբ Անդրկովկասի գիւղացիութիւնը, բացի վրացականից, գաղափար անգամ չունէր այն մասին, թէ երկրում ինչ է կատարւում, ում ձեռքով և յանուն ինչ շահերի: Հայկական և թուրքական շատ շրջաններում դեռ այսօր էլ պարզ գաղափար չունեն այն մասին, թէ ինչպէս առաջացաւ Պետական Դուման և իրանից ինչ էր ներկայացնում: Որպէսզի այսօր էլ գիւղացիութիւնը նոյն տխուր երևոյթի առաջ կանգնած չլինի և Հիմնադիր Ժողովի ու յեղափոխութեան տւած բարեփոխից լիովին օգտուել կարողանայ, նրան նախ և առաջ կազմակերպում է հարկաւոր:

Մեր բոլոր սպառնալիքները այն դէպքում միայն կարող են իրականանալ, երբ մեր թշնամիները ջախջախւած կը լինեն և մեր առաջ գործունէութեան ազատ ասպարէզ կստեղծուի: Մեր կեանքի բարւոքումը դեռ երկար տարիներ շարունակելիք դատակարգային կուի հետեանք կարող է լինել և ոչ թէ գիտակից մարդկանց կամ բարեգործների աշխատանքի հետեանք: Եթէ մայրը հրեխային չի կերակրում, մինչև որ վերջինս լաց չի լինում, ժողովրդական մասսաներն առաւել ևս չեն կարող ուրիշներից, այն էլ իրենց թշնամիներից որեւէ սպասելիքներ ունենալ: Կազմակերպւող և կուող, միայն իրենց վրայ յոյս դնող դատակարգերն են, որ կեանքի կուում կարող են յաջողութիւն ունենալ:

Նամակ IV

Գիւղացիութեան ներկայացուցիչները Հիմնադիր Ժողովում

Ռուսաստանի Ժողովուրդներն այսօր մի անցողական

շրջան են ապրում: Հին կառավարութիւնը իր հազարաւոր հակաժողովրդական օրէնքներով այլեւ գոյութիւն չունի. կառավարչական ղեկը գտնուում է այսօր ժամանակաւոր Կառավարութեան ու նրա տեղային մարմինների ձեռքում, որոնք բոլորն էլ—շատ թէ քիչ չափով—բանւորների, գինւորի և գիւղացիների պատգամաւորական խորհուրդների ազդեցութեան տակ են և առանց նրանց թոյլտուութեան ու համաձայնութեան սովորաբար ոչ մի խոշոր պետական-հասարակական գործի չեն ձեռնարկում: Բայց իրերի այս դրութիւնը երկար տևել չի կարող, երկրի ապագայի համար չափազանց վտանգաւոր է: Ինչպէս տունը չի կարելի կառուցած համարել, երբ նրա համար անհրաժեշտ քարը, աղիւսը, ցեմենտը, փայտեղէնը և այլ նիւթերը բերել, կիտել են ապագայ տան տեղում, բայց դեռ մի վերջոյ պատ չի դրած, այնպէս էլ յեղափոխութիւնը չպէտք է աւարտած համարել, քանի որ Ռուսաստանի ապագայ պետական-հասարակական շէնքի համար դեռ միայն նիւթեր ենք ժողովում, իսկ շէնքի կառուցմանը անհրաժեշտ արհեստաւորներն ու ճարտարապետները դեռ բացակայում են: Վերջինսերին դերը կարող է կատարել միայն Հիմն. Ժողովը, ընտրած բոլոր հասակաւոր քաղաքացիների-քաղաքացուհիների կողմից: Նրա անդամները ժողովրդից որոշ և պարտադիր հրահանգներ կը ստանան և իրաւունք կունենան այն բոլոր խնդիրները լուծելու, որ այսօր կանգնած են մեր երկրի ղեկավարատիայի առջև և որոնց ժողովրդանպաստ լուծումից կախած է Ռուսաստանի ամբողջ ապագան: Պետութեան ձեռք, բանւորական, գիւղացիական, ազգային, պատերազմի ու հաշտութեան և բազմաթիւ այլ հարցերի լուծումը ներկայումս գոյութիւն ունեցող բոլոր պետական-հասարակական հիմնարկութիւնների իրաւասութիւնից վեր է: Ամբողջ ժողովրդի կամքը արտայայտող Հիմնադիր Ժողովն է միայն, որ մեր կենսաքի այդ հիմնական հարցերը իրաւունք կունենայ քննութեան առնել և նրանց լուծել:

Գիւղացիութիւնը Ռուսաստանի ազգաբնակչութեան համարեա երեք-քառորդն է կազմում. նա մի փոքրաթիւ մասսա չէ, որ իր վիճակի որոշումը կարողանար ուրիշն-

րին թողնել կամ ուրիշներին հաւատար: Ոչ ոք գիւղացու դարդերին այնքան մօտ չի կանգնած, նրանց այնքան լաւ չի ծանօթ և գիւղացու վերքերը ոչ ոք այնքան յաջողութեամբ չի կարող բուժել, ինչքան ինքը գիւղացիութիւնն է ընդունակ այդ անելու: Անկախ ամեն մի բարի ցանկութիւնից, ժողովրդի երեք-քառորդի վիճակը նրա մի քառորդը երբէք որոշել չի կարող, որովհետեւ բաւական չէ լաւ որոշումներ կայացնել—նրանց պէտք է դեռ իրականացնել, իսկ դա միայն գիւղացիական մասսաների գործը կարող է լինել:

Ահա ինչու սոցիալ-դեմոկրատիան կոչ է անում շահագործող, ճնշւած, աղքատ ու քաղցած գիւղացիութեանը՝ ունենալ իր սեփական կազմակերպութիւնները, ամենալայն չափերով քննութեան առնել Հիմնադիր Ժողովում լուծելիք հարցերը և ամենալուրջ ու եռանդուն ընտրական պայքար մղել, որպէսզի Հիմնադիր Ժողովում գիւղացիութիւնն ունենայ իր հարազատ, հաւատարիմ և իր թիւին համապատասխան ներկայացուցչութիւն: Եթէ գիւղացիութիւնը հէնց այժմ գործի չանցնի և անմիջապէս չձեռնարկի իր կենսաքի ալիքոծող հարցերի քննութեանն ու Հիմնադիր Ժողով ուղարկելիք իր ներկայացուցիչների ընտրութեանը, նա կարող է նոյն տխուր վիճակին արժանանալ, ինչ որ երրորդ ու չորրորդ Դումաների օրին, երբ նա՝ իր անկազմակերպութեան և անդիտակցութեան շնորհիւ՝ իր թշնամիների շարքերից էր պատգամաւորներ ընտրում: Այդ տեսակէտից չափազանց ծանր պատկեր է ներկայացնում հայ և թուրք գիւղացիութիւնը, որը զառի մորթի հագած գայլերին սովորաբար իր բարեկամների տեղ է ընդունում, երբ նրանք քաղցր լիզով երգեր են ասում և չեն քաշում գիւղացիներին խոստումներ անել, որոնցից մէկն անգամ մինչև օրս չեն կատարած: Հայ և թուրք դեմոկրատիայի ձայներով ընտրած պատգամաւորները հէնց որ Պետրոգրադ էին հասնում, իրենց խոստումներն ու երդումները ջուրն էին լըցնում, Դումայում աղայական ֆրակցիաների մէջ գործում, իսկ Կովկաս վերադառնալիս իրենց ընտրողներին այնքան էին մոռացած լինում, որ չէին էլ ենթադրում, որ դէպի

Նրանց գոնէ հաշւետութեան պարտաւորութիւն ունին: Երբ Սկոբելը, Չխէիձէն, Չխենկելին, Ժորգանիան, Չուրաբեանը և բանւորութեան ու վրաց շահագործող գիւղացիութեան միւս ընտրեալները Կովկաս էին վերադառնում, նրանք օր ու գիշեր գաղտնի ժողովներ էին կազմակերպում, զրքեր ու թուղիկներ հրատարակում, որպէսզի տեղիս դեմոկրատիային ծանօթացնեն իրենց գործունէութեան հետ, նրա ձայնը լսեն և նրանից նոր հրահանգներ ստանան:

Այս պատճառով էլ Կովկասեան դեմոկրատիայի այդ իսկական ներկայացուցիչները ստիպւած էին լինում համարեա անլեզու կեանք վարել, կառավարութեան ներկայացուցիչներից գաղտնի պարել: Նրանց ամբողջ գործունէութիւնը հին կարգերի դէմ է ուղղած, յանուն ժողովրդի ճշւած մասսաների շահերի պաշտպանութեան: Բայց մտաբերէք մի րոպէ, թէ հայ գիւղացիութեան ձայներով ընտրած պատգամաւորները այդ նոյն ժամանակ ինչով էին զբաղւում: Պետրոգրադում նրանք մինիստրների և այլ բարձրաստիճան պաշտօնեաների շէմքերն էին մաշում, Կովկաս վերադառնալիս էլ իրենց առաջին այցելութիւնը ոչ թէ իրենց ընտրողներին էին տալիս, այլ ժողովրդի ռեսերմ թշնամի փոխարքաներին ու նրանց օգնականներին: Խեղճ ու կրակ ժողովուրդն էլ այնքան անգիտակից էր, որ բարձրաստիճան պաշտօնեաներին մի-մի աստուած էր համարում և շատ ուրախանում, իմանալով, որ փոխարքան Դումայի պատգամաւորներին լաւ ընդունելութիւն է ցոյց տւել: Ներան երբէք չէին հասկացրել, որ ժողովուրդը ինքը պէտք է լինի իր բաղդը տնորինողը, որ աշխարհումս ոչ ոք այնքան պատիւ ու յարգանք չպէտք է վայելի, ինչքան ժողովրդի ներկայացուցիչը և որ ամեն մի կառավարութիւն, սկսած ամենաբարձրաստիճան պաշտօնեաներից, ժողովրդի ներկայացուցչական մարմինն՝ պառլամէնտին պէտք է ենթարկւի: Եւ միթէ այլ կերպ կարող էր մտածել զարերով ճշւած ու իր ամբողջ կեանքը զանազան աղաների ենթարկող մի ժողովուրդ, երբ նրա մէջ տարածւած, իրենց ազատամիտ և նոյն իսկ յեղափոխական կոչող թերթերը

ամեն անգամ ուրախութեամբ արձանագրում էին, թէ ինչպէս այս կամ այն մինիստրը կամ փոխարքան Դումայի պատգամաւորին ընդունելութեան են արժանացրել և հետը 15—20 րոպէ անուշ զրուցել, մաերիմ խօսակցութիւն ունեցել: Այն ժամանակ, երբ սոցիալ-դեմոկրատիան ու նրա անդամ պատգամաւորները ժողովրդին գիտակցութեան էին բերում, նրան քաղաքական կրթութիւն տալիս, իր շահերը հասկացնում և կառավարութեան դէմ կազմակերպում, որպէսզի մի գեղեցիկ օր հին կարգերը բոլորովին տապալեն և Ռուսաստանում ժողովրդական հասարակապետութիւն հաստատեն, այդ նոյն ժամանակ հայ ազգային կուսակցութիւններն ու իրանց հայ ազգի ներկայացուցիչ անւանող պատգամաւորները ժողովրդի քաղաքական-հասարակական գիտակցութիւնը մթափում էին և նրան սովորեցնում ու համոզում, որ իր փրկութեան յոյսը «հայասէր» փոխարքայի կամ նոյնքան չափերտաւոր հայասէր կառավարութեան ու թագաւորի վրայ դնի: Կարմիրու ընդունակութիւնը կորցրած հայ ազգայինները չլսած հեշտութեամբ մոռացութեան տւին այսօր արդէն տապալւած կառավարութեան կազմակերպած կոտորածները, որոնց զոհ գնացին և հարիւրաւոր հայեր: Նրանք թիւրքահայերի ապատաղըրումն էլ այդ նոյն կառավարութիւնից էին սպասում, որը հարիւր հազարաւոր տաճկահայերի կոտորածներում պակաս մեղաւոր չէր, քան սուլթանի կառավարութիւնը:

«Ապա սոցիալ-դեմոկրատները ծրարել էին, երբ Դաշնակցութիւնը հայ ժողովրդին կազմակերպում էր», յաճախ լսում ենք մեր այդ հակառակորդներից: Այսօր ամենքին էլ յայտնի է, որ սոցիալ-դեմոկրատներն այն ժամանակ մեծ ու փոքր Նիկոլայներին փառաւոր ընդունելութիւններ չէին կազմակերպում, այլ ներկայիս յեղափոխութիւնն էին պատրաստում, իսկ եթէ երբեք էր նրանք հայկական դաւաճներում աշխատել էին ուղղում, Դաշնակցութեան կողմից պահաս խոչնդոտներ չէին հանդիպում, քան հին ու ժամի կողմից: Ազգի թշնամիներ են սոցիալ-դեմոկրատները, բրոշիւրներով կերակրող անհեռատես մարդիկ, տգէտներ, յիմարներ են նրանք, պրոլետարիատից ազատ հայութիւնը պրոլետարի-

զացիայի ենթարկողներ—ահա այն գոհարները, որոնցով վիճաբանութիւնների ժամանակ Դաշնակցականները արժանացնում էին սոցիալ-դեմոկրատներին: Ժողովրդին կազմակերպելու փոխարէն, դաշնակցականները նրան իրենց հրապարակներ էին դարձրել և ինքնուրոյնութիւնից բոլորովին զրկել: Մինչև ներկայ յեղափոխութիւնը Դաշնակցութիւնը մի զուտ բիւրոկրատական կազմակերպութիւն է եղել, ուր ամեն ինչ վերևում ընդունած որոշումներով է պայմանաւորել:

Ռուսաստանի յեղափոխութեան շնորհիւ հին ուժերից ազատւած հալ գիւղացիութիւնը պէտք է թօթափի իր ուսերից և Դաշնակցութեան ծանր լուծը, որպէսզի գոյութիւն ունեցող ազատութիւններից լիովին օգտւել կարողանայ, կազմակերպւի և առանց դայեակների իր հասարակական-քաղաքական գործերը վարի: Յեղափոխութիւնը մեր առաջ այնքան մեծ հարցեր է դրել, որ նրանց լուծումն ու համապատասխան որոշումների կիրառումը միայն ժողովրդի մեծամասնութեան միջոցով են հնարաւոր: Եւ գիւղացիութիւնը պէտք է ամեն ջանք գործ դնի, որ Հիմնադիր Ժողով ուղարկի իր լաւագոյն գաւազներին: Գիւղացիութիւնը պէտք է լաւ իմանայ, որ նման յեղափոխութիւն կատարելը հեշտ գործ չէ և եթէ Հիմնադիր Ժողովը իր յոյսերը չարդարացնի, նա տասնեակ տարիներ կարող է իր այսօրւայ չարքաշ կեանքից չազատւել: Հիմնադիր Ժողով ուղարկելիք ժողովրդի ներկայացուցիչները պէտք է ոչ միայն լուրջ քաղաքական պատրաստականութիւն ունենան, այլև իրենց ամեն մի խօսքում, ամեն մի գործնական քայլում ընտրող ժողովրդի առաջ իրանց պատասխանատու համարեն: Անպատասխանատու պատգամաւորը անպատասխանատու բիւրոկրատից ոչ միայն չի տարբերւում, այլև կարող է նրանից աւելի վնասակար ու վտանգաւոր լինել:

Հասարակական-քաղաքական կեանքի բոլոր ասպարէզներում անհրաժեշտ է ազատութիւն և դրա հետ անքակտելի կերպով կապւած պատասխանատւութիւն հաւատարմութիւնը:

Պետական Դումայի ընտրութիւններով հայ գիւղացիութիւնը երբէք չի հետաքրքրւել, քանի որ նրա աչքում Դու-

ման մի նոյնքան «կադիօնի» հիմնարկութիւն է հանդիսացել, ինչքան և նահանգապետի կանցելիարիան, իսկ կանցելիարիաներից ժողովուրդը սպասելիքներ առհասարակ չէր կարող ունենալ: Նախընտրական պայքարի մասին հայ գաւառը գաղափար էլ չուներ, քանի որ Դումայի ընտրութիւնները միշտ տանուտէրերի և զանազան պաշտօնեաների ձեռքով են կատարւել: Այս ինչ գաւառական քաղաքը հարկաւոր է այսքան մարդ ուղարկել՝ նահանգապետի պահանջով, դիմում էր տանուտէրը գիւղական հասարակութեանը: Իսկ թէ ինչ նպատակով և ինչպիսի մարգիկ ուղարկել, այդ մասին միշտ էլ խոր լուծիւն էին պահպանում ոչ միայն ուսուիկանն ու պաշտօնեան, այլև գիւղացիութեան մէջ գործող և նրա անունից խօսող ազգային-քաղաքական կուսակցութիւնները: Գիւղացիները միշտ էլ իրենց թշնամիներին էին ընտրում, կառավարութեան ձեռքում խաղալիք դարձած մարդկանց, հին ուժերի բարեկամներին ու պաշտպաններին, նրանք այսպէս էին վարւում, որպէսզի իրենք ժամանակ չկորցնեն և ծախքի տակ չընկնեն մի գործի համար, որը իրենց ոչինչ չէր խոստանում: Յաճախ էլ ժողովրդին տասնեակ տարիների ընթացքում թալանած այդ տգորւկները ընտրութեան էին արժանանում, ժողովի հէնց սկզբում յայտարարելով, որ եթէ իրենց ուղարկեն, գիւղից նրանք մի կողմէ չեն վերցնի, այլ գիւղացիութեան աղքատ դրութիւնը նկատի առնելով, ամբողջ ծախքը իրենց գրպանից կը հանեն: Եւ անգիտակից գիւղացիները մասամբ էլ ուրախանում էին, որ իրենց շարքերում այդքան ջլաւ աղաներ», այդքան «բարեախրոտ մարդիկ» են ապրում:

Ներկայիս քաղաքական ազատութիւնները գիւղացիների համար ինքնագիտակցութեան գալու և կազմակերպւելու ամենանպաստաւոր պայմաններ են ստեղծել. արտաքին խոչնդոտները այլևս գոյութիւն չունեն և այսօր գիւղացիների հեռատեսութիւնից և սեփական շահերը ըմբռնելուց է կախւած, թէ ինչպէս կը կազմակերպւեն, ում հետ կը միանան և ում Հիմնադիր Ժողով կուղարկեն: Եթե անասուն տարի է, որ միջազգային սոցիալ-դեմոկրատիան կոչ է անում ժողովրդի շահագործող տարրերին, որ աղաներին

նրանք չհաւատան և իրենց ամբողջ յոյսը միայն իրանց վրայ դնեն: Հայ իրականութիւնը կուտուրական երկրներից այնքան է յետ մնացել, որ ամեն քայլափոխում անհրաժեշտ է այս ճշմարտութիւնը կրկնել և ժողովրդին ինքնուրոյնութեան, ինքնագործունէութեան ճանապարհի վրայ դնել, նրան ազաների խնամակալութիւնից ազատել:

Անցնում ենք այժմ այն հարցերին, որ գիւղացիները պէտք է անպայման քննութեան առնեն, որպէսզի Հիմնադիր ժողով ուղարկուելիք իրենց ներկայացուցիչներին համապատասխան հրահանգներ (նախադիր) տան և նրանցից հաշւետուութիւն ստանալու հնարաւորութիւն ունենան:

Նամակ V

Քաղաքական պահանջներ—ընդհանուր ընտրական իրաւունք

Բոլոր կուտուրական երկրներում ժողովրդական մասսաների գլխաւոր քաղաքական պահանջն է՝ հաստատել ընդհանուր ընտրական իրաւունքը, այն հիմնական իրաւունքը, առանց որի ժողովրդի իշխանութիւնը անհնարին է: Մինչև որ տւեալ երկրում ժողովուրդն այս իրաւունքը ձեռք չի բերել, նրա բաղդի որոշումը ուրիշներից և այն էլ հէնց իր թշնամիներից է կախուած: Իսկ ամբողջ աշխարհում միայն սոցիալիստական կուսակցութիւններն են, որ այս իրաւունքի հետևողական կողմնակիցներ և պաշտպաններ են հանդիսանում, առանց որեւէ սահմանափակումի:

Ուր էլ ընտրութիւնները կատարուելիս լինեն—հիմնադիր ժողով, պարլամենտ, գեմաութ, քաղաքային դումա, հողաբարձութիւն և ամեն տեսակի հասարակական-քաղաքական հիմնարկութիւններ—այդ բոլոր պարագաներում էլ սոցիալ դեմոկրատիան պահանջում է, որ ընտրական իրաւունքը վայելի ամեն մի հասակաւոր քաղաքացի—սկսած 20 տարեկանից, անկախ նրանից, թէ այդ քաղաքացիները ինչ ազգի, կրօնի, սեռի են պատկանում, հարուստ են թէ աղ-

քատ, կրթւած թէ անգրագէտ: Բուրժուաների (հարուստների) կուսակցութիւնները իրենց նոյնպէս այդ իրաւունքի կողմնակից են յատարարում, բայց կեանքում նրանք միշտ էլ այդ իրաւունքը 25 կամ 30 տարեկան հասակ ունեցողների և այն էլ ունեւոր և կրթուած մարդկանց են միայն տալիս, իսկ կանանց ընտրական իրաւունքի մասին ներանք լսել անգամ չեն ուզում: Եւ Եւրոպայի օրինակը ցոյց է տալիս, որ նրանց ընդհանուր իրաւունքից փաստօրէն հասակաւոր քաղաքացիների մի քառորդը կամ մի հինգերորդն է օգտուում:

Սոցիալ-Դեմոկրատիան այն տեսակէտի վրայ է կանգնած, որ ամեն մի քաղաքացու պարտաւորութիւններին պէտք է համապատասխանեն և նրա իրաւունքները: Իսկ որովհետեւ 20 տարեկան ամեն մի գիւղացի դաշտային և գիւղի բոլոր միւս աշխատանքները ինքնուրոյն կերպով արգէն վարել կարող է, որովհետեւ սովորաբար դեռ մինչև այդ հասակ հասնելը գիւղացի երիտասարդները հասակաւորների հետ համահաւասար իրենք իրենց կերակրում են և ամբողջ երկրի համար էլ հաց ու այլ գիւղատնտեսական մթերքներ արտադրում, սոցիալ-դեմոկրատիան պահանջում է, որ այդ հասակից սկսած բոլոր քաղաքական-հասարակական գործերում բոլոր գիւղացիներն էլ վճռական ձայն ունենան, այսինքն կարողանան և ընտրել և ընտրել: Ունեւոր դասակարգերին այս պահանջը տարբօրինակ է թւում, իրականութեանը չը համապատասխանող և սոցիալ-դեմոկրատների նրանք երազներով ապրող մարդիկ են յայտարարում: Եւ դա հասկանալի է. չէ՞ որ ունեւոր դասակարգերի շարքերում երիտասարդները մինչև 25—30, երբեմն նոյն իսկ մինչև 35—40 տարեկան հասակը ծնողների հաշուով են, ապրում. մինչև այդ նրանք ինքնուրոյնութիւնից զուրկ են սովորում են կամ ուղղակի պարապ-սարապ փողոցները չափում, մինչև որ միանգամից չաղ պաշտօն են գտնում: Բայց սոցիալ-դեմոկրատիան այդպէս մտածել չի կարող, որովհետեւ նա բանւորութեան և շահագործող գիւղացիութեան կուսակցութիւն է, իսկ այդ երկու դասակարգերում էլ ոչ միայն 20, այլ սովորաբար արգէն 16—17 տարեկան հա-

սակ ունեցողները իրենք իրենց կերակրում են և կեանքի լաւ ու վատ կողմերի հետ էլ աւելի ծանօթ են, քան կըրթութիւն ստացած, բայց կեանքի բովով չանցած ունևոր երիտասարդները:

Երբ սոցիալ-դեմոկրատիան ընդհանուր ընտրական իրաւունքի պահանջ է դնում, կանանց նա նոյն չափով ներկատի ունի, ինչ չափով որ տղամարդկանց: Չունևոր գիւղացիները համար այս պահանջը նոյնքան պարզ և հասկանալի պէտք է լինի, ինչքան և քսան տարեկանները հարցը: Գիւղացի չունևոր կանայք ոչ միայն բոլոր տնային աշխատանքներն են կատարում, այլև տղամարդկանց հետ համահաւասար մասնակցում են դաշտային աշխատանքներին, անասնապահութեանը, իսկ յաճախ նոյնիսկ արհեստաւորի դեր են կատարում: Եթէ կինը նոյն իսկ միայն տնային աշխատանքներով բաւականանար, վերջիններս այնքան բարդ, ծանր ու յաճախ անհաճելի են, որ այդ դէպքում էլ նրան ընտրական իրաւունքից չէր կարելի զրկել: Ինչ վերաբերում է գիւղացի կնոջ գիտակցութեանը և կրթութեանը, պէտք է ասել, որ այդ ասպարէզում նա տղամարդուց ոչնչով չի տարբերւում: Ծիշդ է, գիւղացիների մեծամասնութիւնը այդ հարցում հակառակ տեսակէտի վրայ է կանգնած, ընդունելով, որ հասարակական-քաղաքական գործերում մասնակցելու կինը ոչ ընդունակ է և ոչ արժանի: Բայց այդ անարդարացի, բարբարոսական վերաբերմունքը դէպի կինը հին կարգերի հետևանք է, որոնք հիմնւում էին ամբողջ երկրի ստրկութեան վրա: Կինը ստրուկ էր տղամարդու առաջ, երիտասարդ սերունդը—հասակաւորների, երեխաները—ծնողների, աշակերտները—ուսուցիչների, զինւորներն ու պաշտօնեաները—իրենցից աւելի բարձր չին ունեցող զինւորականների ու պաշտօնեաների, բոլոր քաղաքացիները—կառավարութեան առաջ: Իսկ այսօր, երբ ստրկութեան այդ բոլոր շղթաները ջախջախւած են ու քամուն տւած, իր գոյութիւնը չի կարող և չպէտք է էլ պահպանի անդունդը նետւած այդ անվերջ շղթայի մի օղակը՝ կնոջ ստրկական լուծը: Մինչև որ մարդկութեան կէտը իր այդ իրաւունքը ձեռք չի բերի, խօսք էլ չի կարող

լինել այն մասին, որ տւեալ երկրում դեմոկրատական կարգեր են հաստատուել: Այնտեղ, ուր ժողովրդի կէտը դեռ կիսաճորտային դրութեան մէջ է և նիւթապէս ու բարոյապէս տղամարդկանց է ենթարկւում, այնտեղ ոչ թէ ժողովրդագետութիւն, այլ տղամարդկանց իշխանութիւն է տիրում: Եւ մարդկութեան ուղիղ կէտի ազատագրումն մի այնքան հսկայական գործ է, որ ամեն մի գիտակից և դեմոկրատ գիւղացի, կին թէ տղամարդ—պէտք է դարաւոր քնից կանանց արթնացնի, ցոյց տայ նրանց կնոջ մեծ դերը գիւղական կեանքում և նրա իրաւունքն ու ընդունակութիւնը՝ քաղաքական-հասարակական կեանքի բոլոր ասպարէզներում տղամարդուն հաւասար իրաւունքներ վայելել: Գիւղում ապրող ամեն մի գիտակից ընկերոջ պարտաւորութիւնը պէտք է լինի՝ բոլոր ժողովների կանանց էլ հրաւիրել, յատուկ կանանց ժողովներ կազմակերպել և նրանց քաղաքացիական գիտակցութեան բերել, որպէսզի Հիմնադիր ժողովի ընտրութիւններին նրանք էլ իրենց թւին համապատասխան մասնակցութիւն ունենան: Այստեղ դեռ չենք խօսում այն մեծ պատմական դերի մասին, որ ունեցել է կինը երկրագործութեան ծագման և նրա առաջադիմութեան գործում, հազարաւոր տարիների ընթացքում:

Ընտրական իրաւունքը ընդհանուր լինելու համար պահանջւում է այնուհետեւ, որ ոչ մի սահմանափակող ցենզ գոյութիւն չունենայ, այսինքն ունևորներին աւելի ձայն չտրւի, քան չունևորներին, կրթւածներին աւելի, քան անկրթներին: Եւրոպական մի քանի երկրներում հարուստները ընտրութիւններին մինչև 25 ձայնի իրաւունք են վայելում, այն ինչ չունևորները այդ իրաւունքից կամ բոլորովին զուրկ են, կամ մի ձայն ունեն: Դեմոկրատիզմը պահանջում է, որ ամեն մի քաղաքացի, ինչ հարստութեան կամ կրթութեան տէր էլ լինի՝ մի ձայնից աւելի չունենայ: Ինչ վերաբերում է կրթութեան հարցին, սոցիալ-դեմոկրատիան այն տեսակէտն է պաշտպանում, որ եթէ քաղաքական իրաւունքները միայն ունևորների ու կրթւածների սեփականութիւնը կազմեն, այդ դէպքում ժողովրդական մասսաները ընդմիշտ անգրագէտ կը մնան: Անգրագէտներին

գրագէտ ու կրթւած մարդիկ դարձնելու գործում ոչ ոք այնքան շահագորգուած չէ, ինչքան սոցիալ-դեմոկրատիան, բայց մեր կուսակցութիւնը միևնոյն ժամանակ գտնում է, որ աղքատ ու անգրագէտ բանւորի և գիւղացու շահերը միայն այդ դասակարգերի ներկայացուցիչները կարող են պաշտպանել: Եթէ քաղաքական իրաւունքը այսուհետեւ էլ միայն ունենոր ու կրթւած դասակարգերի ձեռքում լինի, գիւղացին իր անել գործիւնից երբէք էլ չի ազատւի: Ահա ինչու սոցիալ-դեմոկրատիան պահանջում է, որ ընտրական իրաւունքը անգրագէտներն էլ վայելեն: Չէ որ ոչ մի սակաւահող կամ հողադուրկ գիւղացի չէք դառնի, որը հրաժարէր հող ստանալուց և միաժամանակ ոչ մի կրթւած կալածատէր չէք գտնի, որը կամովին իր հողերը գիւղացիներին յանձնէր: Հետևապէս, գիւղացին պէտք է գերադասի Հիմնադիր Ժողով անդրադէտ, բայց իր շահերին նուաճելու գիւղացու ուղարկել, քան կրթւած, բայց գիւղացու շահագործումով ապրող կալածատիրոջ կամ այլ բուրժուայի: Այս ենթադրութիւնը այն դէպքին է վերաբերում, երբ աւելի շրջանում գիւղացիները իրենց միջից չեն կարող կրթւած մի մարդ ընտրել. բայց սա մի հազադիւտ, եղակի դէպք կարող է լինել, որովհետեւ երբ անգրագէտները ձայն կստանան, նրանք կաշխատեն Հիմնադիր Ժողով ուղարկել ոչ թէ անգրագէտի, այլ գրագէտ ու կրթւած մարդու, որը իրանցից աւելի գիտակից է, աւելի պատրաստւած և իրենց շահերը պաշտպանելու աւելի ընդունակ: Ինչքան էլ գրագիտութիւնը Ռուսաստանում քիչ է տարածւած, նման մարդիկ ամեն տեղ էլ գտնւում են, այնպէս որ այս կողմից գիւղացիութիւնը առանձին դժարութիւնների չի հանդիպի և կրթւած աղաներն ու կալածատէրերը գիւղացու շահերը պաշտպանելու հոգսից իրենց կարող են ազատ համարել:

Այս է ահա ընդհանուր ընտրական իրաւունքը, որ տարածւում է անխտիր բոլոր քաղաքացիների վրայ: Բայց այդքանով սոցիալ-դեմոկրատիան չի բաւականանում, որովհետեւ ընտրական տեխնիկային, ընտրութեան եղանակին կարելի է այնպիսի բնոյթ տալ, որ ընդհանուր ընտրական

իրաւունքից վերջին հաշւում էլի բուրժուազիան, հարուստներն օգտւած կը լինեն: Այս պատճառով էլ սոցիալ-դեմոկրատիան պահանջում է, որ ընտրութիւնները կատարեն ուղղակի և դադարի եղանակով: Առաջին պահանջը նրանում է կայանում, որ ամեն մի ընտրող ինքն է անմիջապէս ձայն տալիս պատգամաւորին և ոչ թէ լիազօրներ կամ ընտրողներ է ջոկում իր միջից, որոնք առանձին ժողով են ունենում և իրենց ցանկացածին ընտրում: Ժողովրդի լայն մասսաները ոչ նիւթական միջոց ունեն և ոչ ժամանակ, որպէսզի կարողանան զաւառական կամ նահանգական քաղաք գնալ և ընտրութիւններին 10—15 օր նստիլ: Այդ պատճառով էլ անուղղակի ընտրութիւնները խղճաբար նրանով են վերջանում, որ՝ ընտրութեան ընթացքում ժողովրդի շահերի իսկական պաշտպանները բնի յետեն են մընում, մաղւում, թափւում են և չնայած ընդհանուր ընտրական իրաւունքին, դեմոկրատիայի ձայներով պատգամաւոր է ընտրւում այդ նոյն դեմոկրատիայի հակառակորդը, ինչպէս այդ Պետական Դումայի ընտրութիւններին էր տեղի ունենում, երբ Ռուսաստանի գիւղացիութիւնը ապշած էր մնում, տեսնելով, թէ ինչպէս իր ձայներով Դումա են անցել հպիսկոպոսներ, յետադէմ քահանաներ, կալածատէրեր և գիւղի մեծ ու փոքր բուռնցքներ:

Ընտրութիւնների ժամանակ դեմոկրատիայի համար պակաս նշանակութիւն չունի և գաղտնի քուէարկութիւնը: Ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը ունեւորներից կախում ունի, այնպէս որ եթէ ընտրութիւնները բաց-աշխարհ են կատարւում, շատ ընտրողներ ստիպւած են լինում իրանց թշնամիներին ձայն տալ: Նրանք լաւ են իմանում, որ եթէ կալածատիրոջ, խանութպանի, վաշխաւի կամ տէրտէրի թեկնածուներին ձայն չտան, կալածատէրը նրանց հողից կը զրկի կամ կապալավորձը կը բարձրացնի, խանութպանը առանց կանխիկ դրամի ապրանք չի բաց թողնի, վաշխաւուն անմիջապէս իր տոկոսը կը պահանջի և նրան դատարան քաշ կը տալ, իսկ տէրտէրը նրան անէծքի կենթարկի: Բայց քուէարկութիւնը մանաւանդ վտանգաւոր է գիւղերում, ուր բոլորը միմեանց ճանաչում են: Ժողովրդին այս բոլոր

պատուհասներէց ազատելու համար է, որ սոցիալ-դեմոկրատիան գաղտնի քէշարկութիւն է պահանջում, տոմսերի միջոցով, որպէս զի ոչ ոք չը կարողանայ իմանալ, թէ ով և է ում ձայն տւել:

Հիմնադիր Ժողովի, Ռուսաստանի ապագայ պարլամենտի, ինչպէս և տեղային ինքնավարութեան մարմինների դեմոկրատական կազմի գլխաւոր գրաւականը յիշեալ պայմաններով ապահոված ընդհանուր ընտրական իրաւունքն է: Առանց այդ իրաւունքի հաստատման, Հիմնադիր Ժողովը կարող է իշխող դասակարգերի ձեռքն ընկնել և յեղափոխութեան շատ նուաճումներից ժողովուրդը կը զրկուի: Ահա ինչու գիւղացիութիւնը պէտք է ամենուրեք ժողովներ կազմակերպի և Հիմնադիր Ժողովի հրաւերով զբաղուող յանձնա-ժողովից պահանջի, որ ընտրութիւնները լինեն անպայման կանանց և տղամարդկանց համար՝ ընդհանուր և հաւասար, առանց որ և է խտրութեան, ուղղակի և գաղտնի քէշարկութեամբ:

Այս հիմնական հարցին իր համար նպաստաւոր լուծում տալուց յետոյ է միայն, որ գիւղացիութիւնը կարող է Հիմնադիր Ժողովին կատարեալ հաւատ ընծայել և համոզւած լինել, որ իր ներկայացուցիչներն այնտեղ բաղմաթիւ կը լինեն և իր անտեսական ու քաղաքական պահանջները իրականացնելու հնարաւորութիւն կունենան:

Նամակ VI

Քաղաքական պահանջներ—հասարակապետութիւն տեղային լայն ինքնավարութիւնով:

Սոցիալ-դեմոկրատիան բոլոր միւս քաղաքական կուսակցութիւններից նրանով է տարբերուում, որ շահագործող և ճնշւած մասսաների անտեսական ապահովումը և նրանց վերջնական ազատագրումը միայն սոցիալիստական կարգերում է հնարաւոր գտնում, երբ արտադրութեան բոլոր միջոցները—հողը, գործարանները, մեքենաները, հում նիւթե-

րը և այլն—հասարակութեան սեփականութիւն կը կազմեն և ոչ թէ առանձին անհատների կը պատկանեն, ինչպէս մինչև օրս: Շահագործող գիւղացիութեան վերաբերմամբ էլ մեր կուսակցութիւնը նոյն տեսակէտի վրայ է կանգնած: Հասարակութեան բոլոր անդամները սոցիալիստական կարգերում անտեսապէս կապահովւեն և աշխարհիս բոլոր բարեքները վայելելու հնարաւորութիւն կստանան: Բայց սոցիալ-դեմոկրատիայի ձգտումների առարկայ կազմող այդ կարգերը ներկայումս իրականացնել չի կարելի, որովհետեւ դրա համար գեւ բացակայում են թէ այն նիւթական-տեխնիքական ուժերը, որոնք սոցիալիստական հասարակութեան հիմքն են կազմելու և թէ ցիտակից ու կազմակերպուած ժողովրդական մասսաները, որոնք այդ մեծ յեղափոխութիւնը կատարելու են:

Ներկայիս հասարակական-քաղաքական շարժումով Ռուսաստանը ոչ ոքի այնչափ պարտաւոր չէ, ինչքան բանւոր դասակարգի կազմակերպուած, ցիտակից և հեռատես շարքերին, և այդ դասակարգի շահերի պաշտպան հանդիսացող սոցիալ-դեմոկրատիային: Բայց սոցիալ-դեմոկրատիան երազներով ապրող կուսակցութիւն չէ: Նրա ամբողջ ծրագիրը, նրա բոլոր ձգտումները կենքի տւեալների վրայ են հիմնւած և այդ կուսակցութիւնը շատ լաւ է իմանում, թէ ամեն մի պատմական շրջանում, հասարակական կենքի առաջադիմութեան ամեն մի աստիճանի վրայ ժողովրդի շահագործող տարրերը ինչ սպասելիքներ կարող են ունենալ, իրենց ձգտումների մը մասը կարող են իրականացնել: Սոցիալ դեմոկրատիան գտնում է, որ ներկայիս յեղափոխութիւնն էլ Ռուսաստանում սոցիալիստական կարգեր հաստատել չի կարող—գիւղում նոյնպէս, ինչպէս և քաղաքում: Բայց և այնպէս ներկայ յեղափոխութեան կատարեալ յաղթանակին ոչ մի կուսակցութիւն այնպէս չի ձգտում, ոչ մի կուսակցութիւն այդ յեղափոխութեան շրջանորհիւ ստացած մեծ ազատութիւնները այնքան բարձր չի գնահատում, ինչքան սոցիալ-դեմոկրատիան:

Գործին անտեղեակ մարդկանց թւալ կարող է, որ այստեղ մի ինչ որ թիւրիմացութիւն, մի խոշոր հակասու-

թիւն կայ, Մեզ կարող են հարցնել, թէ սոցիալ-դեմոկրատիան ինչպէս կարող է այդքան բարձր գնահատել մի հասարակարգ, որը բանւորներին և շահագործող գիւղացիներին վերջնական փրկութիւն չի բերելու: Այո, ներկայումս ստեղծող հասարակութեան վրայ սոցիալ-դեմոկրատիան մեծ յոյսեր չի դնում. այդ հասարակութեան շրջանակներում էլ բանւորն ու չունկոր գիւղացին իրենց շահագործողներին դէմ կուրեն մղելու, որպէս զի իրենց բարոյական և նիւթական գրութիւնը բարւոք են: Մինչև յեղախոխութիւնը ժողովրդի շահագործող տարրերը այդ հնարաւորութիւնից զուրկ էին: Զկար միութիւնների, ժողովների և գործադուլ յայտարարելու ազատութիւն, չկար խօսքի, մամուլի և խղճի ազատութիւն. իսկ առանց այդ ազատութիւնների, ստրկական գրութեան մէջ գտնւող մարդիկ մի քայլ անգամ չէին կարող անել, իրենց կեղեքիչներին դէմ ոչ միայն կուրելու, այլ նոյն իսկ նրանց քննադատելու հնարաւորութիւն չունէին:

Իսկ ով կարող է ժխտել այն տարրական ճշմարտութիւնը, որ այս բոլոր հնարաւորութիւնները ժողովրդական մասսաների համար չափազանց մեծ, ուղղակի անգնահատելի բարիքներ են: Նրանց շնորհիւ է, որ Ռուսաստանի դեմոկրատիան տնտեսական և հոգեկան առաջադիմութեան այն համեմատաբար բարձր աստիճանին կը հասնի, որի վրայ վաղուց արդէն Արևմտեան Եւրոպայի ժողովրդական մասսաներն են գտնւում: Այդ ազատ դեմոկրատիկ կարգերի մթնոլորտում է միայն, որ մեր երկրի բանւորութիւնն ու շահագործող գիւղացիութիւնը պիտի կարողանան իրենց գրութիւնը բարւոքել, գիտակցութեան դալ, կազմակերպւել և իրենց վերջնական ազատագրման միջոցի՝ սոցիալիստական յեղափոխութեան համար պատրաստութիւններ տեսնել: Հին կարգերում ազատ չնչել չէինք կարող, իսկ ներկայումս գործունէութեան ամենալայն հորիզոններ են մեր առաջ բացւում: Առանց այս յեղափոխութեան և նրա հետեանք հանդիսացող դեմոկրատական պետութեան առանց ժողովրդական մասսաների կուրի ու կազմակերպման հնարաւորութիւն ստեղծելու, սոցիալիստական կարգերի իրականացման մասին խօսք անգամ չի կարող լինել:

Հետեալէս, ներկայումս հաստատող բուրժուական հասարակարգը մի էտապ է, որ ժողովրդի շահագործող տարրերը պէտք է անպայման անցնեն, որպէս զի նիւթապէս որոշ չափով ապահովեն, գիտակցութեան դալ, կազմակերպւեն և սոցիալիստական հասարակութեան իրականացման ձգտեն: Իսկ Ռուսաստանի դեմոկրատիայի առաջ կանգնած ամենախոշոր խնդիրն է այսօր՝ կազմակերպող պետական-հասարակական հիմնարկութիւններին այնպիսի ձև տալ, որ նրանցում իր դասակարգային կուրը հնարաւորապէս քիչ խոչնդոտների հանդիպի և որ ժողովուրդը կարողանայ իր բոլոր նիւթական ուժերն ու հոգեկան ընդունակութիւնները զարգացման հնարաւորապէս բարձր աստիճանի հասցնել:

Այդ նպատակին հասնելու համար սոցիալ-դեմոկրատիան ձգտում է երկրում դեմոկրատական հասարակապետութիւն—ոչսպառնալիկ—հաստատել, այսինքն ազատել թագաւորներից, մեծ ու փոքր իշխանւորներից, անպատասխանաւոր մինիստրներից, և պետական բարձրագոյն իշխանութիւնը ժողովրդի ձեռքում կենտրոնացնել: Բայց որովհետև ոչ մի ժողովուրդ չի կարող իր ամբողջ ժամանակը միայն քաղաքական հարցերին նւիրել և մի տեղ ժողովուրդը նրա համար տեխնիքապէս էլ անհնարին է, նա իր լաւագոյն զաւակներից մի կենտրոնական ժողով—պարլամենտ է կազմում, որը և որոշում է երկրին վերաբերեալ բոլոր հարցերը: Պարլամենտական երկրներում բոլոր պատգամաւորները այս կամ այն քաղաքական կուսակցութեան անդամ և թեկնածու են հանդիսանում և պարլամենտում այդ կուսակցութեան ծրագիրն էլ պաշտպանում են: Որովհետև քաղաքական կուսակցութիւնների վերաբերմունքը դէպի խոշոր քաղաքական-տնտեսական հարցերը նախօրօք արդէն պարզած ու ամենքին յայտնի են, ամեն մի ընտրող ոչ այնքան տեսալ պատգամաւորի անձնաւորութեամբ է հետաքրքրւում՝ ինչքան նրա կուսակցութեան ծրագրով:

Չնչին բացառութիւններով, բոլոր պարլամենտական երկրներում բացի ժողովրդական ներկայացուցիչների պալատից կամ ներքին պալատից՝ պարլամենտն ունի և մի

վերին պալատ, որի անդամները բացառապէս իշխող դասակարգերի ներկայացուցիչներն են: Իբրև օրինակ կարող են ծառայել Ռուսաստանում—Պետական Խորհուրդը, Անգլիայում—լորդերի պալատը, Ֆրանսիայում—Սենատը և այլն: Եթէ նրանց անդամների ընտրութիւնները նոյն սկզբունքներով կատարւէին, ինչ որ ներքին պալատի ընտրութիւնները, այդ դէպքում պալատները իրենց կազմով միմիանցից ոչնչով չէին տարբերւի և վերին պալատի գոյութիւնը անմտութիւն կը լինէր: Այդ պալատի գոյութեան նպատակն է՝ կռել ներքին պալատի, այսինքն ժողովրդական իշխանութեան սկզբունքի դէմ և նրա ամեն մի քայլը ոչ այլ ինչ է, քան ներքին պալատում ընդունւած դեմոկրատական օրինազօծերի խախտումը: Այդ պատճառով էլ նրա կազմը պէտք է ներքին պալատի կազմից աւելի յետադէմ լինի և նրա ընտրական օրէնքն էլ հազար ու մի սահմանափակումներով աւելի հարուստ, քան ներքին պալատի ընտրական օրէնքը: Դեմոկրատիան տարիներ, երբեմն տասնեակ տարիներ շարունակ կռւում է, որպէս զի այս կամ այն օրինազօծն պարլամենտում անցկացնի: Երբ երկար աշխատանքից ու կռիւից յետոյ նրան այդ յաջողում է, վերին պալատը մի քանի ժամայ ընթացքում ոչնչացնում է նրա ամբողջ աշխատանքի պտուղը, ներքին պալատում ընդունած օրինազօծը չհաստատելով: Այն երկիրը, որ պարլամենտի վերին պալատ ունի, երբեք չի կարող դեմոկրատական երկիր համարւել: Այս պատճառով էլ սոցիալ-դեմոկրատիան ձգտում է հաստատել միպալատեան պարլամենտ, որի անդամները երկու տարով են ընտրւում: Պարլամենտական կարգերը ենթադրում են, որ միմիատրութիւնը և ամբողջ կառավարութիւնը ոչ թէ թագաւորին կամ հասարակապետութեան նախագահին են ենթարկւում ու նրանց կողմից նշանակւում, այլ միայն պարլամենտին: Անգլիան օրինակ դեռ թագաւոր ունի, բայց որովհետև այդ երկրի միմիատրութիւնը միայն պարլամենտին է ենթարկւում, Անգլիան պարլամենտական երկիր է:

Որպէսզի քաղաքական և հասարակական-տնտեսական կեանքը առանց խոչընդոտների զարգանալ կարողանայ և

քաղաքացիների մարդկային արժանապատուութիւնը պաշտպանւած լինի, սոցիալ-դեմոկրատիան պահանջում է, որ այդ դեմոկրատական հասարակապետութիւնը բոլոր քաղաքացիների, ապահովի՝ անձի և ընկարանի անձեռնմխելիութիւն, խղճի, խօսքի, մամուլի, ժողովների, գործադուլների և միութիւնների անսահման ազատութիւն, տեղափոխութեան և զբաղմունքի ազատութիւն, բոլոր քաղաքացիների կատարեալ հաւասարութիւն օրէնքի առաջ, անկախ սեռից, կրօնից, ազգութիւնից և ցեղից: Այս պահանջների տրամաբանական հետևանքն այն է, որ կը վերացան զանազան դասերի (сословія) քաղաքացիական սահմանափակումները: Ինչպէս յիշած է արդէն երկրորդ նամակում, դասային այդ սահմանափակումների վերացման մէջ ամենից շատ գիւղացիութիւնն է շահագրգռւած, որի համար յատուկ ճորտային օրէնքներ գոյութիւն ունեն և որի ուսերին դեռ մի քանի միջնադարեան պարտաւորութիւններ են ծանրանում, որոնցից բոլոր միւս դասերն ու հասարակարգերը ազատ են:

Ներկայումս մի ընդհանուր համոզմունք է տիրում, որ Ռուսաստանում անպայման դեմոկրատական հասարակապետութիւն է հաստատուելու, վերև յիշած բոլոր ազատութիւններով ու նրանց պաշտպանման գրաւականներով: Այսօր այլևս ոչ ոք չի համարձակւում խօսք բարձրացնել այն մասին, թէ Ռուսաստանի ազդաւնալութիւնը նման կարգերի ինչքան արժանի է: Եւ տարօրինակ էլ կը լինէր այդ հարցը բարձրացնել մի ժողովրդի վերաբերմամբ, որը կարողացաւ աշխարհիս ամենախոշոր յեղափոխութիւններից մէկը կատարել և ծայրայեղ դժուար արտաքին ու ներքին պայմաններում իր առաջադիմութեան գործը վերին աստիճանի կազմակերպւած կերպով է տանում: Երբ այս կամ այն ժողովրդի համար ազատութիւններ նւաճելու ժամանակը հասունանում է, նւաճումը հնարաւոր դառնում, սոցիալ-դեմոկրատիան այդ ժողովրդի ինքնասիրութեան համար չափազանց վիրաւորական է համարում այն հարցը, թէ տեալ ազատութիւնների համար նա ինչքան հասունացած, ինչքան պատրաստ է: Մեր կուսակցութեան տեսակէտից, ամբողջ աշխարհում չկայ և ոչ մի ժողովուրդ, որը ամենալայն ա-

զատութիւններից խելացի կերպով օգտուել չիմանայ: Եթէ կայ մի բան, որի համար ժողովուրդները հասունացած չեն և երբէք չեն էլ հասունանայ, որը նրանք երբէք չըկարացնեն ընդունած և ապագայում էլ չեն ընդունի, դա ոչ թէ ազատութիւնն է, այլ ստրկութիւնը: Յայտնի է, որ այսպէս կոչուող վայրերն ցեղերը անսահման ազատութիւն են վայելում, և այդ ազատութիւնը երբէք ի չարը չեն գործադրում: Կեանքը դասակարգային կուէի ասպարէզ է, ասում է սոցիալ-դեմոկրատիան, և ինչ որ այդ կուէի միջոցով կը նւաճէք, այն էլ կստանաք: յոյսներդ ուրիշներից կտրէք: Ինչպէս յայտնի է, հայ գիւղացիութեանը բաշտ ծանօթ Դաշնակցութիւնը տաճկահայերի ազատագրումը նրա վրա էր հիմնում, որ տաճկահայութիւնը արժանի է աւտոնոմիայի և կուլտուրական եւրոպական պետութիւնները նրան չեն զրրկի մի քաղքից, որին նա պատմականօրէն արժանի է: Սոցիալ-դեմոկրատները նման տիրացուական քարոզներին պատասխանում են. կարող էք հազար անգամ արժանի լինել, բայց ձեր ուղածը երբէք չէք ստանայ, եթէ նրան պահելու համար համապատասխան ուժեղ կադմակերպութիւն չունէք, որը կուէի ընդունակ լինէր և ոչ թէ իր ամբողջ կեանքը մուրացկանի դերում մնար: Պէտք է կադմակերպւել, գործել, կուէլ, ասում են սոցիալ-դեմոկրատները և ոչ թէ ծալապատիկ նստել ու երկնային մանանայի սպասել:

Կեանքը այսօր չափազանց բարդացել է. հասարակապետական ազատ կարգերում ժողովրդի տնտեսական-կուլտուրական կեանքը հազար ու մի նոր պահանջներ կառաջացնի, որոնց բաւարարութիւն տալու համար հարկաւոր կլինի համապատասխան մարմիններ ստեղծել: Խոշոր քաղաքների վերաբերմամբ ապացուցած է, որ մի կենտրոնական քաղաքային դոման նրանց բոլոր գործերը վարել չի կարող. այդ պատճառով էլ հարկւր հազարաւոր և միլիոնաւոր բնակիչ ունեցող քաղաքներում—բացի կենտրոնական դոմայից—կադմակերպւում են նաև ռայոնական, քաղաքամասային դոմաներ: Գիւղում էլ կեանքը տարէց տարի առաջադիմում է, գիւղն սկսում է կամաց-կամաց նոյն կուլտուրական պայմաններում տարել, ինչ և քաղաքը: Ռուսաս-

տանի գիւղացու առաջ դրած ամենախոշոր հարցն է այսօր՝ իր արտադրութեան ուժերը աճեցնել, հողը պարարտացնել, նրանից երեք-չորս անգամ աւելի բերք ստանալ, քան մինչև օրս: Այդ խոշոր և դժւար իրագործելի նպատակին հասնելու համար նիւթական միջոցներ են պահանջւում և մասնագիտութիւն ունեցող մարդիկ: Առանց փողի ու դպրոցի, առանց լրագրի ու փոստի, առանց հաղորդակցութեան ճանապարհների ու անհրաժեշտ գործարանների, առանց գիտական հիմունքների վրա դրած անասնապահութեան և հողագործութեան, իր ներկայ անել դրութիւնից շահագործող, թշուառ գիւղացին երբէք չի կարող դուրս գալ: Բայց երկրի կենտրոնական պարլամէնտը կարող է միայն ընդհանուր, բոլորին վերաբերեալ հարցերով զբաղւել. նա հաստատելու է միայն այն ընդհանուր նորմաները, կանոնները, որոնք ամբողջութեանն են վերաբերում: Եթէ այդ պարլամենտի անխտիր բոլոր անդամները ժողովրդի լաւագոյն, նրա շահերին նւիրւած պաշտպանները լինեն, այդ գէպքում էլ պէտք է ընդունել, որ Սիբիրին, Կովկասին և այլ ծայրագաւառներին վերաբերող բազմաթիւ հարցերի լուծումն կենտրոնական պարլամենտի ուժերից վեր կը լինի: Հողային յարաբերութիւններն ու հողագործութիւնը Անգրիկովկասում բոլորովին այլ պայմաններում են գտնւում, քան արևելեան և հիւսիսային Ռուսաստանում. մեր քաղաքից երկրի կուլտուրան, լեզուն, հողը, կլիման, աշխարհագրական և այլ պայմանները շատ հարցերի միատեսակ լուծումն ամբողջ Ռուսաստանի համար աննպատակաբար և անհնարին են դարձնում: Եւ որովհետև աշխարհիս լաւագոյն աղմիկիստրացիան անգամ այդ բոլոր խնդիրներին շատ թէ քիչ բաւարար լուծում չի կարող տալ, որովհետև դա տւեալ շրջանի ամբողջ ազգաբնակչութեան գործունէութեան հետևանքը միայն կարող է լինել, սոցիալ-դեմոկրատիան պահանջում է, որ ծայրագաւառներն ունենան իրենց ժողովրդական ներկայացուցչական մարմինները, իրենց տեղային պարլամենտները կամ սեյմերը: Այն բոլոր հարցերը, որ ամբողջ Ռուսաստանին են վերաբերում, իրենց լուծումը կենտրոնական պարլամենտում կստանան,

իսկ միայն տեւալ ծայրագաւառին վերաբերող հարցերը կարող է որոշել տեղային պարլամենտը: Հողային յարաբերութիւնները կանոնաւորումը կամ հողագործութեան առաջադիմութեան գործը, տեղային ճանապարհների կամ դըպրոցների հարցը և բազմաթիւ այլ պահանջներ ժողովրդի կենտրոնական ներկայացուցչութիւնը լուծել չի կարող: Նշման բոլոր գործերը պէտք է տեղային սէյմերի իրաւասութեան առարկայ կազմեն:

Ինչպէս մի քիչ վերև ասացինք, խոշոր քաղաքների ազգաբնակչութեան բաղմապիսի պահանջները չեն կարող բաւարարել, եթէ այդ քաղաքներում միայն մի դումա գոյութիւն ունի, իսկ թաղային դումաները բացակայում են: Իսկ եթէ մի դուման քաղաքի բոլոր պահանջները բաւարարելու գործում թոյլ ու անզօր է, մի շարք նահանգներին վերաբերեալ գործերում քանի անգամ աւելի թոյլ ու անզօր կը հանդիսանայ տեւալ երկրամասի սէյմը, առանց տեղային բաժանմունքների օգնութեան: Կեանքն այսօր այնքան է բարդացել, մեր տնտեսական-կուլտուրական պահանջներն այնքան աճել, որ նրանց բաւարարումն միայն ամբողջ ժողովրդի մասնակցութեամբ է հնարաւոր: Այժմ բոլորն էլ ձգտում են ոչ միայն կուշտ լինել, այլ կուլտուրայի ամեն մի բարիքից օգտւել, իսկ նման պահանջի բաւարարումը ամենաբարեխիղճ պաշտօնեայի ուժերից էլ վեր է: Ահա ինչու սոցիալ-դեմոկրատիան պահանջում է, որ բոլոր գիւղերն ու նրանց միութիւնները ունենան իրենց տեղային պարլամենտները, իրենց զեմստային մարմինները, որոնք միայն կարող են լուծել տեւալ գիւղին կամ շրջանին վերաբերող կուլտուրական-տնտեսական հարցերը: Բայց որովհետեւ գիւղական ամեն մի շրջան ամենուրեք էլ պահանջ չի ունենայ առանձին մասնապիտակաւ դպրոցի, կամ այդ դպրոցը և այլ հիմնարկութիւնները տնտեսապէս ապահովելու հնարաւորութիւնից զուրկ կը լինի, այդ հիմնարկութիւններից կարելի է մի-մի հատ բացել ամեն մի գաւառում կամ ամեն մի նահանգում: Պէտք է գաւառի կամ նահանգի շրջանում որեւէ ճանապարհ անցկացնել, հողերը ոռոգել, մի ելեքտրական կայարան կառուցել և նման բազ-

մաթիւ այլ հարցեր լուծել: Չէ՞ որ զեմստային մանր մարմինների ուժից վեր գործ է այդ:

Այս պատճառով էլ անհրաժեշտօրէն պէտք է գաւառային և նահանգային զեմստային մարմիններ գոյութիւն ունենան:

Տեղային ինքնավարութեան իրաւասութեանը ոչ միայն տեղային ընդթ կրող տնտեսական ու կուլտուրական հարցերն են պատկանելու, այլ նրանց է ենթարկւելու նաև ոստիկանութիւնը, նրանք են ընտրելու նաև հաշտարար դատաւորներին: Մի խօսքով, ինքնավարութեան մարմինները մի-մի տեղային կառավարութիւններ և պարլամենտներ են հանդիսանալու: Նրանց իրաւասութեան տակ է գտնւելու մեր կենսական պահանջների մեծագոյն մասը: Առանց տեղային ինքնավարութեան այդ մարմինների, ժողովրդի ցաւ ու դարձերին դարման անող չի լինի և նշման բացակայութեան դէպքում երկիրը երբեք չի կարող դեմոկրատական համարւել:

Բայց բաւական չէ որեւէ հիմնարկութիւն ստեղծել, — պէտք է ժողովրդին նրանից օգտւելու, նրանում գործելու հնարաւորութիւն տալ: Այդ հնարաւորութեան երկու գլխաւոր նախապայմաններն են, որ ընտրութիւնները զեմստային բոլոր մարմինների համար ընդհանուր ընտրական սխեմայով կատարւեն և որ ամեն մի քաղաքացի իրաւունք ունենայ բոլոր հասարակական-պետական հիմնարկութիւններում այն լեզուով բացատրւել կամ գրաւոր կերպով այն լեզուով նրանց դիմել, որին ինքը տիրապետում է: Հետևապէս այդ հիմնարկութիւնների բոլոր ծառայողներն էլ պէտք է տեղային գլխաւոր լեզուներին տիրապետեն:

Նախակ VII

Քաղաքական պահանջներ. — հարկային, զինուորական, կրօնական եւ ազգային ճնշումների վերացում: Դպրոց:

Դեմոկրատական հասարակապետութիւնը ենթադրում

է, որ բոլոր քաղաքացիները ոչ միայն թղթի վրայ են հաւասար, այլ հասարակական—քաղաքական կեանքի և ոչ մի ասպարէզում նրանցից մէկը միւսից աւելի իրաւունքներ, որ և է արտօնութիւններ չի վայելում: Ինչ ծագում էլ ունենան քաղաքացիները, պետական կամ հասարակական հիմնարկութիւններում ինչ պաշտօն էլ վարեն նրանք,— մինիստրից սկսած մինչև վերջին պաշտօնեան—օրէնքի առջ նրանք բոլորն էլ հաւասար պէտք է լինեն և ամեն մի քաղաքացի իրաւունք է վայելիլու պաշտօնեաներին նոյն կարգով դատի ենթարկելու, ինչ և երկրի միւս բոլոր ընտանքներին: Դատաւորներն էլ, ինչպէս նախկին նամակում յիշած է, պէտք է ընտրւեն ժողովրդի կողմից՝ տեղային ինքնավարութեան մարմինների միջոցով:

Սօցիալ-դեմոկրատիայի տեսակետից, ազատութիւններ և հաւասարութիւն պաշտպանող օրէնքները ոչ թէ ժողովրդի նպատակը պէտք է կազմեն, այլ պէտք է մի գործիք հանդիսանան, որի միջոցով ժողովուրդը կիրականացնի իր գլխաւոր նպատակը՝ իր նւթական և հոգեկան կեանքի բարելաւումը: Բաւական չէ ցարի կառավարութիւնից ազատելը, այլ պէտք է հրաժարել և այն քաղաքական-տնտեսական գործիքներից, որոնցով այդ կառավարութիւնը մեզ ճնշում, ստրկացնում էր: Այդ գործիքների մէջ առաջնակարգ տեղ է բռնում գոյութիւն ունեցող հարկերի սիստեմը, որոնց ճնշող մեծամասնութիւնը անուղղակի հարկեր են: Դիւզացին եթէ միայն ուղղակի հարկ վճարէր, ենթադրենք՝ 15 կամ 30 ուրլի տարեկան, դրա դէմ ոչինչ չէր կարելի ասել, որովհետեւ առանց այդ վճարումների պետութեան գոյութիւնն իսկ անհնարին է: Ամեն մի քաղաքացի պարտաւոր է իր եկամտի որոշ տոկոսը պետական գանձարանին և տեղային ինքնավարութեան մարմիններին յատկացնել. այլ կերպ այդ հիմնարկութիւններին մենք չենք կարող և ոչ մի պահանջ ներկայացնել. ներկայ հասարակակարգում առանց փողի ոչ առանձին անհատները և ոչ պետական կամ հասարակական հիմնարկութիւնները մի քայլ անգամ չեն կարող անել: Այնպէս որ հարցը ոչ թէ հարկ վճարելու է, այլ վճարած հարկերի քանակում և

սխտեմուտ։ Եւ ահա այս վերջինների դէմ է, որ սոցիալ-դեմոկրատիան բողոքում է, պահանջելով, որ գոյութիւն ունեցող հարկերը վերացեն և փոխարինեն մի ընդհանուր հարկով—ուղղակի եկամտային հարկով։ Շուկայում դժար է մի ապրանք գտնել, որը գնելու միջոցին մենք հարկ չվճարէինք, բայց այդ հարկերը մեզանից վերցնում են աննկատելի կերպով, ապրանքի գնի հետ միասին, այնպէս որ գործին անտեղեակ մարդիկ կարծում են, թէ տեւալ ապրանքը հէնց այդքան էլ արժի։ Հարցը նրանում է, որ բոլոր ապրանքների վրայ կառավարութիւնը որոշ մաքս կամ աքցիկ է դնում, որ ինքը ստանում է ապրանքատիրոջից, նախ քան ապրանքը գործարանից դուրս է բերել կամ արտասահմանից Ռուսաստան մտել։ Շնորհիւ մաքսի և արքիղի՝ շաքարը, թէյը, սուրճը, հազուատեղէնը, ոտնամանը, մեքենաներն ու գործիքները և բազմաթիւ այլ անհրաժեշտ իրեր մեզ մօտ անհամեմատ աւելի թանկ են, քան արեւմտեան Ներսիսայում։ Անհրաժեշտ է նախ և առաջ վերացնել այդ բոլոր անուղղակի հարկերը, որոնք իրենց ամբողջ ծանրութեամբ ժողովրդի չունեւոր տարրերի վրայ են ընկնում, իսկ հասարակական և պետական ծախքերը ծածկելու համար սահմանել բոլորի համար հաւասար ուղղակի եկամտային հարկ։ Բաւական չէ, որ մինչև օրս քաղաքացիներն ու գերդասցիութիւնը բազմահարկւոր միլիոն անուղղակի հարկեր էին վճարում, նրանց վճարած ուղղակի հարկերն էլ համեմատաբար աւելի բարձր էին, քան ունեւոր դասակարգերինը։ Գիւղացին, օրինակ, իր ամեն մի դեռեալին հողից երկրի զանազան շրջաններում 10-ից մինչև 50 տոկոս աւելի բարձր հարկ էր վճարում, քան ազնւական կալածատերը։ Նոյն յարաբերութիւնը գոյութիւն ունի և բնակարանային հարկի վերաբերմամբ քաղաքներում։ Համեմատական չափով վերցրած, բանւորն ու քաղաքի միւս չունեւոր բնակիչները միևնոյն տարածութիւն բռնող բնակարանի համար մէկ և կէս—երկու անգամ աւելի հարկ են վճարում, քան ունեւոր դասակարգերը։ Ժողովրդական մասսաների տնտեսական կեանքը քայքայող այս անարդարութեանը վերջ տալու համար, սոցիալ-դեմոկրատիան առա-

Չարկում է, որ հարկատուութիւնից կատարելապէս ազատ լինեն այն քաղաքացիները, որոնց տարեկան եկամուտը ընտանիքի անհրաժեշտ պահանջներին հազիւ բաւարարում է, եկամտի այս նւազագոյն մասը պէտք է հաշուել մօտաւորապէս 1000—1200 ռուբլի, իսկ այդ գումարից աւելի բարձր եկամուտ ստացողները պէտք է հարկատուութեան ենթարկւեն՝ իրենց եկամտի մեծութեանը համապատասխան:

Սոցիալ-դեմոկրատիան գտնում է, որ աշխարհումս գոյութիւն ունեցող բոլոր բարիքները, բոլոր հարստութիւնները աշխատանքի արդիւնք են և որ գործարանատէրերը, խանութպաններն ու կալւածատէրերը իրենց հարստութիւնները ոչ թէ իրենք են արտադրել, այլ աշխատող մասսաների քրտինքով ձեռք բերած բարիքների գրաւումով դիզել: Այս պատճառով էլ մեր կուսակցութիւնը պահանջում է, որ բարձր եկամուտ ունեցողները որպէս եկամտային հարկ իրենց օգտի աւելի մեծ տոկոսը վճարեն, քան ցած եկամուտ ստացողները: Օրինակ, եթէ հազարից մինչև տասն հազար ռուբլի տարեկան եկամուտ ստացողները մէկ կամ երկու տոկոս են վճարում, այսինքն՝ հարիւրից մէկ կամ երկու ռուբլի, տասից մինչև քսան հազար ստացողները պէտք է երեք կամ չորս տոկոս վճարեն, քսանից մինչև երեսուն հազար ստացողները—հինգից եօթը տոկոս, իսկ հարիւր հազարաւոր և միլիոնաւոր ռուբլի եկամուտ ունեցողները մինչև 70—80 տոկոս: Կապիտալիստների տեսակէտից, դա ծայրայեղ անարդարութիւն է, իսկ սոցիալ-դեմոկրատիայի տեսակէտից՝ ոսնատակ տւած արդարութիւնը վերականգնելու միակ ճանապարհն է այդ: Հազար ռուբլի եկամուտ ունեցող բանւորը կամ գիւղացին 10 ռ. հարկ է վճարում և որպէս ամբողջ տարւայ իր աշխատանքի վարձատրութիւն 990 ռուբլի է ստանում, իսկ աշխատանքի ու քրտինքի մասին գաղափար չունեցող կապիտալիստը, որ տարեկան հարիւր հազար ռուբլի մաքուր օգուտ ունի, եթէ նրանից 70—80 հազարը պետութեան տայ, իրան դեռ 20—30 հազար կը մնայ, իսկ մի միլիոն օգուտ ունեցող կապիտալիստին 200—300 հազար ռուբլի է մնում: Գիշեր ցորեկ աշխատելու համար մէկը 990 ռուբլի է ստանում, իսկ ոչինչ

չանկելու համար միւսը՝ տասնեակ և հարիւր հազարներ է ձեռք բերում: Պատերազմի ընթացքում հարկի այդ տոկոսը Անգլիայում բարձրացրին մինչև 100-ից 60 ռ. և դա ոչ թէ շատ է, այլ քիչ: Բանւորական դեմոկրատիան ձգտում է կապիտալիստների օգուտը կամաց կամաց նւազեցնել, մինչև որ սոցիալիստական յեղափոխութիւնը աշխատող մասսաների արտադրած բոլոր բարիքները իրենց արամադրութեան տակ կը դնի և դրանով կը վերացնի ամեն մի շահագործում:

Հարկային դեմոկրատիզացիային սոցիալ-դեմոկրատիան չափազանց մեծ նշանակութիւն է տալիս, գտնելով, որ ազատ լինելու համար ժողովուրդը նախ և առաջ պէտք է իր տնտեսական ստրկութեան շղթաները ջախջախել: Ամեն մի մի տւեալ երկրում հարկային լուծն այնքան աւելի ծանր է, ինչքան այդ երկիրը շատ գինւորական ծախքեր ունի: Մեր աչքի առաջ, վերջին երեք տարւայ ընթացքում պատերազմական ծախքերը ծածկելու նպատակով բազմաթիւ նոր հարկեր հաստատւեցին: Նկատի ունենալով, որ պատերազմը ժողովրդին բացի ֆլասկ ոչինչ չի բերում, նրանից անթիւ-անհամար մարդկային ու նիւթական զոհեր է պահանջում և որ զօրքի գոյութեան միակ նպատակը պատերազմ մղելն է, սոցիալ-դեմոկրատիան ձգտում է ամբողջ աշխարհում այնպիսի միջազգային կարգեր հաստատել, որ պատերազմն անհնարին դառնայ և պահանջում է մշտական զօրքի կատարեալ վերացում: Բայց որովհետև մինչև սոցիալիստական կարգերի հաստատումը, բոլոր պետութիւնների վիճակը իշխող գասակարգերի ձեռքում է գտնւելու, որոնց տեսակէտից պատերազմը մի պատմական անհրաժեշտութիւն, մի անխուսափելիութիւն է, ուստի երկիրը հնարաւոր արտաքին յարձակումներից պաշտպանելու համար սոցիալ-դեմոկրատիան գտնում է, որ պէտք է ամբողջ ժողովուրդը զինած լինի: Այդ դէպքում վերանում է ներկայիս կադարման, միլիոնաւոր մարդիկ անզոր շատելու և բթանալու, անբարոյականալու փոխարէն հողագործութեամբ կամ գործարանային աշխատանքով են զբաղւում, ժողովուրդն ազատւում է հարկւրաւոր միլիոնների հասնող գինւորական

ծախքերից և պատերազմը այն դէպքում միայն կարող է տեղի ունենալ, երբ նա իսկապէս անխուսափելի է, որովհետեւ երբ երկրորդ գեմոկրատական կարգեր են տիրում և զինւորական ուժը ամբողջ ժողովրդի ձեռքում է գտնուում, այդ ժողովուրդը չի վնայ ուրիշներին կոտորելու և ինքը չի կոտորել, մինչև որ համոզւած չի լինի, թէ տեւալ պատերազմն իսկապէս անհրաժեշտ է:

Բոլոր պետութիւններում գոյութիւն է ունեցել և այսօր գոյութիւն ունի մի խոշոր հիմնարկութիւն էլ, որը ժողովրդին պակաս փաստներ չի հասցրել, քան միլիտարիզմը, զինւորական ուժը: Այդ հիմնարկութիւնն է եկեղեցին: Միջին դարերից սկսած, համարեա բոլոր պետութիւններում եկեղեցին ամենախոշոր կալածատէրն ու ճորտատէրն է եղել, հին ստրկական կարգերի լաւագոյն պաշտպանը: Եթէ աշխարհական կալածատէրերը ժողովրդին միայն նիւթապէս էին շահագործում, եկեղեցիներն ու վանքերը, չքաւահանանալով շահագործման այդ եղանակով, իրենց յետադէմ թէրիախերով ու գաղափարներով ժողովրդին բթացնում, նրա գիտակցութիւնը թունաւորում էին, համոզելով խեղճ ու կրակ մարդկանց, որպէս թէ ճորտութիւնն ու նրա հետ կապւած մարդկային անհաւասարութիւնը Աստծու կողմից օրհնած հիմնարկութիւններ են և որ ժողովուրդը այս աշխարհում պէտք է առապի, քաղցի ու ցրտի զոհ գնայ, որպէսզի մահից յետոյ դրախտի արժանանայ: Այդ տեսակէտից ելնելով, պէտք է ենթադրել, որ ունեւորները և նրանց հետ հոգեւորականութեան ճնշող մեծամասնութիւնը երբեք դրախտի դռնով չեն անցնի, քանի որ այս աշխարհում նրանք իրենց շրջապատից միշտ էլ անհամեմատ աւելի լաւ են ապրել, քաղցի ու ցրտի մասին գաղափար չեն ունեցել: Դրա լաւագոյն ապացոյցներից մէկն էլ այն է, որ ժողովրդի ոչ մի տարր այնքան երկարատեւ կեանք չի վարում, ինչքան հոգեւորականները, մասնաւորապէս վանականները:

Եկեղեցու ազդեցութիւնը քաղաքում այնքան մեծ ու զգալի չէ, ինչքան գիւղում: Այս պատճառով էլ հոգեւոր ստրկութիւնից ազատւելու ոչ ոք գիւղացիութեան չափ շահագործուած չէ: Ահա ինչու գիւղացիները պէտք է լաւ

մտածեն այն մասին, թէ տէրտէրը, վարդապետն ու եպիսկոպոսը իրենց կեանքում ինչ դեր են խաղում. գիւղացուն ինչ են տեսել և նրան ինչ զրկանքների ենթարկել: Սոցիալ-դեմոկրատները գտնում են, որ բոլոր եկեղեցիները—նրանց մէջ և հայ-լուսաւորչականը—միշտ էլ հին կարգերի, այսինքն ժողովրդին ճնշող, կեղեքող թագաւորների, միւստերների, պաշտօնեաների, կալածատէրերի, գործարանատէրերի, խանութպանների, վաշխառուների և այլ տղրուկների ամենամտերիմ բարեկամը, պաշտպանն ու ներկայացուցիչն են հանդիսացել, որ հոգեւորականներին ժողովուրդը պակաս տուրք չի վճարում, քան կառավարութեանը, և որ եկեղեցական տուրքերի ու ծէսերի մեծամասնութիւնը Քրիստոսի ուսմունքի հետ ոչ միայն որեւէ առնչութիւն չունեն, այլ այդ ուսմունքին հիմնովին հակասում են, նրան կատարելապէս ժխտում:

Սոցիալ-դեմոկրատիան խղճի անսահման ազատութեար պաշտպան է համարում և այդ պատճառով էլ պահանջում է, որ պետութիւնը որեւէ է եկեղեցու հետ կապւած չլինի և իր տրամադրութեան տակ գտնուող ուժերից չօգտուի՝ այս կամ այն կրօնի հետևողներին բռնի ուժով իշխող եկեղեցուն ենթարկելու, ինչպէս այդ հարկւրաւոր տարիներ շարունակ Ռուսաստանում է տեղի ունեցել, ուր պրաւոսլաւ եկեղեցին ոռոս և բոլոր միւս ժողովուրդների համար պակաս չարիք չի եղել, քան ցարի կառավարութիւնը: Աւելի ճիշտն ասած, եկեղեցին այդ հին, այսօր արդէն տապալած կարգերի սիւներից մէկն է հանդիսացել: Իր խղճի ասպարէզում ամեն մի քաղաքացի կատարելապէս ազատ պէտք է լինի և հետևի այն կրօնին, որը իր տեսակէտից աւելի բարձր ճշմարտութիւններ է քարոզում: Պետութիւնը չպէտք է անգամ հետաքրքրւի այն հարցով, թէ ինչ կրօնի է հետևում տեւալ աշակերտը, որ ուզում է պետական դրսրոց մտնել կամ տեւալ քաղաքացին, որ պետական հիմնարկութիւններում պաշտօն է փնտրում: Պետական հիմնարկութիւններից ելնող ոչ մի վկայականում չպէտք է յիշատակւի այն մասին, թէ վկայականի տէրը պրաւոսլաւ է, կաթոլիկ, մահմեդական, մովսէսական կամ այլ կրօնի հե-

տևող: Պետական «պատարտի» վերացման հետ միասին պէտք է չքանայ և հոգևոր անցագիրը: Իսկ երբ քաղաքացիները պարտաւոր չեն իրենց կրօնական համոզմունքների մասին զեկուցել ու տեղեկութիւններ տալ, պարզ է, որ ներանք կարող են և ոչ մի կրօնի չհետևել, մի բան, որ Ռուսաստանում մինչև յեղափոխութիւնը և ուրիշ շատ երկրներում մինչև օրս էլ արգելւում է: Որպէսզի այս պահանջը հայ գիւղացիներին անբնական ու տարօրինակ չթւայ, աւելորդ չենք համարում այստեղ հաղորդել, որ եւաղոնացիների մի նշանաւոր տոկոսը ոչ մի կրօն չի ընդունում, կրօնական համոզմունքների մասին գաղափար չունի և որ Ռուսաստանում էլ նման մարդիկ շատ կան:

Կրօնը մասնաւոր գործ է, ասում է սոցիալ-դեմոկրատիան. եկեղեցին ոչ թէ պետական, այլ մասնաւոր հիմնարկութիւն պէտք է լինի: Քահանաները ռոճիկ պէտք է ստակութիւն պէտք է լինի: Քահանաները ռոճիկ պէտք է ստանան ոչ թէ պետութիւնից, այլ իրենց կրօնական համայնքից: Ինչպէս պետութիւնը չի կարող կրօնական գործերին խառնել, այնպէս էլ եկեղեցին պէտք է պետութիւնից բաժանւած լինի, նրա վրայ ազդելու հնարաւորութիւնից զուրկ: Պարզ է, որ դեմոկրատական պետութեան մէջ պէտք է վերանայ և մի այլ չարիք՝ եկեղեցու կործանիչ ազդեցութիւնը դալրոցի վրայ: Յայտնի է, որ եկեղեցին գիտութեան ամենաոխս բիւթ թշնամին է և բոլոր հին ուժերի բարեկամը, յետադէմ գաղափարների պաշտպանը: Մատաղ սերունդը պէտք է ազատել յետադէմ, տգէտ, բթամիտ և փարիսեցի հոգևորականների կաղմալուծիչ ազդեցութիւնից և նրան նորագոյն գիտութեան ոգով կրթել: Պետական դպրոցներում կրօնը կարող է ուսման առարկայ լինել այն դէպքում միայն, երբ ծնողները այդ կցանկանան և կրօնուսոյցի համար պահանջուող ծախսերը իրենց զբաղանքից կը վճարեն:

Հին ուժի մի ձեռքում ճնշման ամենաուժեղ գործիքներից մէկն էր հանդիսանում և ազգային ճնշումը: Ռուսաստանում մօտ 140 ազգութիւն է ապրում, որոնց նախկին կառավարութիւնն աշխատում էր տգիտութեան մէջ պահել, միմիանցից բաժանել և միմիանց դէմ թշնամացնել, որպէսզի իր պիւրը ամուր մնայ: Մինչև 1905 թւի յեղա-

փոխութիւնը համարեա բոլոր մանր ազգութիւններն զուրկ էին իրենց կուլտուրան զարգացնելու հնարաւորութիւնից. նրանցից շատերին թոյլ չէր տրւում նոյն իսկ տարրական դպրոց ունենալ կամ իրենց լեզուով լրագիր հրատարակել. իսկ լատիշներին արգելւած էր նոյն իսկ իրենց ազգային այբբենարանը գործ ածել: Ամենից ծանր պայմաններում մինչև փետրւարեան յեղափոխութիւնը հրէա ժողովուրդն էր գտնւում, զուրկ համարեա ամեն մի քաղաքացիական իրաւունքից, նոյն իսկ մի կտոր հաց վաստակելու իրաւունքից: Տնտեսական, պետական և հասարակական գործունէութեան շատ քիչ ասպարէզներ կային, ուր հրէան գործելու և իր կեանքը նիւթապէս ապահովելու հնարաւորութիւն ունէր: Նրան արգելւում էր երկրի որոշ մասերում և նոյն իսկ տեւալ քաղաքի որոշ փողոցներում ապրելը: Հրէական կոտորածները, ինչպէս և հայ-թուրքական կոտորածները ամբողջովին հին ուժի մի գործն էին, որը ձգտում էր ժողովրդի քաղցած դրութեան պատասխանատուութիւնը իրենց վերցնել և հրէայ ժողովրդի վզին փաթաթել, կամ յեղափոխական շարժման առաջն առնելու նպատակով կոտորածներ էր կազմակերպում, որպէսզի ժողովուրդների միացման առաջն առնի և դրանով իր դրութիւնը փրկի: Սոցիալ-դեմոկրատիան գտնւում է, որ ազգային ճնշումները կատարելապէս կը վերանան միայն սոցիալիստական հասարակութեան մէջ, որը վերջ է դնելու ճնշման ու շահագործման ամեն մի եղանակի: Ինչքան էլ երկիրը դեմոկրատականացած լինի, բայց քանի որ դասակարգային կռիւ և ապրանքային շուկայում ուժեղ մրցում գոյութիւն ունեն, մեծ ազգութիւններին պատկանող բուրժուական դասակարգերը իրենց շահերը պաշտպանելու նպատակով կարող են երկրի մի որոշ մասը անտեսական առաջադիմութեան աննպաստ պայմաններում դնել և դրանով այնտեղի ժողովրդին տնտեսական ու կուլտուրական յետամնացութեան դատապարտել: Դրա լաւագոյն օրինակներից մէկը Անգլիան է հանդիսանում, որը չնայած իր դեմոկրատական կարգերին, իրլանդացիներին և բաղմաթիւ այլ ժողովուրդների մինչև օրս էլ ճնշում, խեղդում է, որպէսզի գործարանային ար-

դիւնաբերութիւնը և միջազգային առևտուրը միայն անգլիական բուրժուազիայի ձեռքում կենտրոնացած լինի:

Այդ ազգային ճնշումներից ամենից շատ տուժում են ի հարկէ ժողովրդի աշխատող մասսաները: Սոցիալ-դեմոկրատիան ձգտում է ազգային յարաբերութիւններին այնպիսի բնոյթ տալ, որ երկրի բոլոր մասերը տնտեսապէս առաջադիմելու հնարաւորութիւն ստանան և ժողովրդի շահագործող մասսաները այնպիսի պայմաններում դրեն, որ դասակարգային կռիւ մղելը նրանց համար հնարաւորապէս հեշտանայ, հնարաւորապէս առանց խոշոր զոհերի ու ցաւերի անցնի: Բայց որովհետև Ռուսաստանը չափազանց մեծ երկիր է և նրանում ապրող ազգութիւնները գտնուում են տնտեսական ու հոգեկան կուլտուրայի տարբեր աստիճանների վրայ, սոցիալ-դեմոկրատիան ազգային հարցի լուծման համար մի ընդհանուր միջոց հրաժարւում է առաջարկել: Աղատագրման այն եղանակը, որ անհրաժեշտ և օգտաւէտ է օրինակ Ֆինլանդիայի կամ Լեհաստանի համար, կարող է ֆասսակար լինել հայերի կամ վրացիների վերաբերմամբ: Այդ պատճառով էլ մեր կուսակցութիւնը պահանջում է, որ ազգային հարցը ամեն մի ազգութեան վերաբերեալ առանձին լուծում ստանայ, մի լուծում, որ համապատասխանէր այդ ազգութեան կեանքի տնտեսական և կուլտուրական ընդհանուր պայմաններին: Եւ ամեն մի ազգութիւն ինքն է որոշում, թէ տեւալ երկրամասում ինչ բաղադրական-հասարակական կարգեր պէտք է հաստատել, որպէսզի ներկայիս կուլտուրայի բոլոր բարեքներից օգտուելը հնարաւոր դառնար: Սա է, որ ազգերի ինքնորոշման իրաւունք է կոչւում և դեմոկրատիզմի ամենազգլխաւոր պահանջներից մէկն է: Սակայն, երբ սոցիալ-դեմոկրատիան պահանջում է, որ ազգերին իրենց վիճակը որոշելու իրաւունք տրւի, նա ենթադրում է, որ հարցը քննութեան կառնուի և կը լուծւի ոչ թէ տեւալ ազգութեան իշխող դասակարգերի կողմից միայն, այլ ամբողջ ժողովրդի կողմից, ընդհանուր ձայնատուութեամբ: Իշխող դասակարգերը սովորութիւն ունեն խօսել և գործել ամբողջ ժողովուրդների անունից և եթէ աւտոնոմիայի, ֆեդերացիայի կամ

անջատման պահանջները նրանց կողմից միայն առաջարկւեն, սոցիալ-դեմոկրատիան նման պահանջներ երբեք չի պաշտպանի: Ընդհակառակը, եթէ այդ նոյն պահանջները դրւում են ժողովրդի շահագործող տարրերի կողմից, որոնք բաղմակողմանի քննութիւնից յետոյ են այդ լուրջ որոշումն ընդունել և գտնում են, որ իրենց շահերի պաշտպանումն առանց այդ նոր կարգերի անհնարին է, այդ դէպքում սոցիալ-դեմոկրատիան իր ամբողջ ուժով նման պահանջների պաշտպան կը հանդիսանայ: Սոցիալ-դեմոկրատիայի տեսակէտից, աշխարհիս բարձրագոյն օրէնքը ժողովրդի մեծամասնութեան կամքն է, այնպէս որ եթէ տեւալ ազգութեան մեծամասնութիւնը մի որոշում է կայացնում և այդ որոշումն շահագործող դասակարգերի պաշտպանութեանն է նւիրում, սոցիալ-դեմոկրատիան, որպէս հետևողական դեմոկրատական կուսակցութիւն, այդ պահանջն անպայման կը պաշտպանի:

Սոցիալ-դեմոկրատիայի պահանջած այս բոլոր կարգերը հաստատուելուց յետոյ, ժողովուրդը կարող է պահանջած չափով նրանցից օգտուել և տնտեսական ու կուլտուրական զարգացման աւելի բարձր մակարդակի հասնել, եթէ նա կուենայ և ազատ դպրոց: Սոցիալ-դեմոկրատիան պահանջում է, որ կրթութիւնը լինի մայրենի լեզուով, քանի որ ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը միայն մայրենի լեզւին է տիրապետում, և որ պետութիւնն ու տեղային ինքնավարութեան մարմինները պարտաւոր լինեն այնքան դպրոցներ պահել, որ դպրոցից դուրս և ոչ մի երեխայ չմնայ: Կրթութիւնը պէտք է ոչ միայն ձրի, այլ և պարտադիր լինի, այնպէս որ եթէ ծնողներից ոմանք չը կամենան իրենց երեխաներին դպրոց ուղարկել, օրէնքը նրանց կը ստիպի այդ անել: Իսկ որովհետև ծնողների մի խոշոր տոկոսը նիւթական այնքան ծանր պայմաններում է ապրում, որ երեխային չի կարող ոչ բաւարար կերակրել, ոչ նրա համար հագուստ, ոտնաման և ուսման պիտոյքներ գնել, սոցիալ-դեմոկրատիան պահանջում է, որ այդ բոլոր ծախքերը իրենց վրա վերցնեն պետութիւնն ու տեղային ինքնավարութեան մարմինները: Քաղցած մարդը չի կարող

ոչ ուշադրութեամբ ուրիշին լսել, և ոչ լսածը ըմբռնել: Պետական—հասարակական հիմնարկութիւնների միջոցով է, որ ժողովրդին այս հնարաւորութիւնները կտրւեն և բոլոր երեխաները, մինչև 16 տարեկան հասակը, ընդհանուր և պրոֆեսիոնալ կրթութիւն կստատան:

Նամակ VIII

Ինչքան հող կայ Ռուսաստանում.

Ռուսաստանն այսօր աշխարհիս ամենաազատ երկիրն է, և եթէ իր ազատագրման գործը դեմոկրատիան կարողանայ կազմակերպւած կերպով, համերաշխութեամբ և հետաետեութեամբ առաջ տանել, նաճած բոլոր դիրքերը հաստատ պահել, այդ պէպքում համոզւած կարելի է լինել, որ նախընթաց նամակներում յիշած սոցիալ-դեմոկրատիայի բոլոր պահանջներն ամենամօտ ապագայում կիրականանան: Բայց միայն ազատութիւններով ապրել չի կարելի: Քաղաքական ազատութիւնները մի միջոց են, որ մեր տնտեսական ու կուլտուրական զրուութիւնը բարւոքելու հնարաւորութիւն են տալիս: Առանց ազատ քաղաքական կարգերի տնտեսական բարգաւաճումն անհնարին է, սակայն կասկածից դուրս է և այն, որ մեր գոյութեան հիմքը ներթափանց բարիքների արտադրութիւնն է կազմում: Յեղափոխութեան գլխաւոր նպատակն էլ հէնց այդ է՝ ժողովրդի տնտեսական զրուութեան բարւոքումը, որ արտադրողական ուժերի աճումից է կախւած:

Հողագործ գիւղացիութեան համար արտադրութեան գլխաւոր միջոցն ու ուժը հողն է հանդիսանում և հողային հարցի լուծումն է, որ չունենոր գիւղացիներին յեղափոխութեան կողմնակիցներ, նրա յաղթանակի մէջ շահագրգռւած մի տարր է դարձնում: Հին ուէժիմի գլխաւոր հիմքը խոշոր ու միջին հողատիրութիւնն էր կազմում, այնպէս որ այդ ուէժիմը վերջնականապէս ընկած և յեղափոխութեան յաղթանակները ապահոված չի կարելի համարել, մինչև որ

չունենոր գիւղացիութեան ստրկացման գլխաւոր գործիքը՝ կալաճատիրական հողը՝ այսօրւայ տէրերից չառնւի և ժողովրդին չյանձնւի: Հողային հարցի լուծման եղանակը ոչ միայն գիւղացիութեան, այլև բոլոր յեղափոխական դասակարգերի, ուրեմն և յեղափոխութեան վիճակի համար ահագին նշանակութիւն ունի: Այս պատճառով էլ իրենց գործունէութեան մէջ և ծրագրներում քաղաքական կուսակցութիւնները հողային հարցին մեծ տեղ են տալիս:

Անցնում ենք այժմ այն հարցին, թէ Ռուսաստանում ներկայումս ինչ հողային յարաբերութիւններ են տիրում, երկրում ինչքան և ինչ տեսակի հող կայ և ում է նա պատկանում: Այս հարցի պարզաբանումն անհրաժեշտ է առհասարակ ամեն մի պարագայում, իսկ ներկայումս նա անհրաժեշտ է առաւել ևս այն պատճառով, որ Ռուսաստանի բոլոր անկիւններում բազմաթիւ աֆերիստներ են բռնել, որոնք գիւղացիութիւնը կազմակերպելու, իրերի իսկական զրուութեան հետ նրան ծանօթացնելու փոխարէն՝ նրան երազներով են կերակրում, հողուն մի տեղ 15, մի ուրիշ տեղ 30 դեսեատին հող խոստանալով: Մեզ յայտնի է այդ տիպի «գործիչների» մէջ ամենքից աչքի ընկնողն և օրինակելին այն շառւատանն է, որ յեղափոխութեան առաջին ամիսներում Բագի նախահողերում աշխատող հողագործ բանւորներին համոզում էր, որ եթէ բոլոր մասնատիրական հողերը զրաւին, ամեն մի գիւղացու 37 ու կէս դեսեատին հող կը հասնի: Այդ զազրելի և յանցաւոր ճանապարհով է, որ որոշ կուսակցութիւնների ագիտատորներ իրերի զրուութեան անտեղեակ մարդկանց իրենց կողմն են քաշում և նրանց համոզում, որ սոցիալ-դեմոկրատիան գիւղացիութեան շահերի մասին բոլորովին չի էլ մտածում, նրանց այս կամ այն չափի հող տալուց հրաժարւում է:

Քաղաքական կուսակցութիւնները ոչ բանկիրներ և ոչ էլ խոշոր կալաճատէրեր են: Հետեապէս, նրանք ոչ ոքի ոչինչ տալ կամ խոստանալ չեն էլ կարող: Քաղաքական կուսակցութիւնը կազմակերպում է մասսաներին, նրանց գիտակցութեան բերում, իրենց ազատագրման ճանապարհն ու միջոցները պարզում, և իրանք մասսաներն են միայն,

որ այս կամ այն խոշոր նպատակի կարող են հասնել, իրենց այս կամ այն պահանջը իրականացնել: Ինքնագործունեությունն և սեփական կազմակերպություններ ունենալու անհրաժեշտությունն գիտակցությունը հայ շահագործող գիւղացիների շարքերում իսպառ բացակայում է: Հայ իրականությունն մէջ տիրող քաղաքական կուսակցություններն ու հոսանքները հայ ժողովրդին կազմակերպելու, գիտակցություն բերելու, ինքնագործունեություն և ինքնուրոյնություն ուղիով տանելու փոխարէն՝ նրան միշտ ստրկային դրութեան մէջ են պահել, նրա մէջ մի համոզմունք միայն արմատացրել, որպէս թէ հայ ժողովրդի փրկիչներն են՝ աղան, հայ կապիտալիստը, հայոց կաթողիկոսը և... ռուսական ցարը: Ահա ինչու հայ գիւղացուն անհրաժեշտ է նախ և առաջ իմանալ, թէ երկրում ինչքան ազատ հող կայ և համոզել, որ նրան ոչ ոք հող չի տայ, եթէ նա չը կազմակերպւի և իր հարեան ազգութիւններին պատկանող գիւղացիների հետ չմիանայ:

Ռուսաստանի ամբողջ ցամաքը 1976 միլիոն գետնատին տարածութիւն է բռնում, այնպէս որ եթէ անխտիր բոլոր հողերը—լեռներ, ճահիճներ, տունդրաներ, անապատներ, անտառներ և այլն—ազգաբնակչության թւի վրայ բաժանենք, մարդագլուխ մօտ 11 գետնատին հող կընկնի: Բայց յայտնի է, որ երկրի բոլոր մասերը, իրենց աշխարհագրական, կլիմայական և հողային պայմանների շնորհիւ, հաւասարապէս չեն բնակեցրած: Եւրոպական և Ասիական Ռուսաստանի ամբողջ հիւսիսը տունդրաներով է բռնած, ուր մարդս բնակութիւն հաստատել չի կարող, ուր հողագործութիւնը միանգամայն անհնարին է: Միայն Եւրոպական Ռուսաստանում տունդրաները մօտ 50 միլիոն գետնատին տարածութիւն են բռնում: Միեւրոյն Ռուսաստանի ամբողջ տարածութեան մօտ երկու-երրորդ մասն է կազմում մօտ 1150 միլիոն գետնատին, բայց այդ հսկայական երկրում ընդամենը 11 միլիոն ժողովուրդ է ապրում: Ազգաբնակչության երկու-երրորդը գործարանային արդիւնաբերութեան և սև հողի շրջաններում է ապրում: Այդ պատ-

ճառով էլ երկրի որոշ մասերում հողուն մի քանի տասնեակ և մի քանի հարիւր անգամ աւելի հող է հասնում, քան երկրի այլ մասերում: Այսպէս օրինակ Լեհաստանում հողուն ընկնում է մի գետնատին հող, Մալարոսիայում—1,4 (մի ամբողջ, 4 տասնորդական), Նովորոսիայում—3, Հիւսիսային Կովկասում—4 և կէս, Անդրկովկասում—3,4, Անդրկասպիան երկրում—35, Կիրգիզների մօտ—60, Արևմտեան Սիբիրում մօտ—100, Արևելեան Սիբիրում մօտ—350, Եսկուտսկի շրջանում—1300 և այլն: Երկրի կուլտուրական և խիտ բնակչութիւն ունեցող մասերում, որոնցով գլխաւորապէս հետաքրքրւում է այսօր գիւղացիութիւնը, մարդագլուխ 3 և կէս գետնատին հող է ընկնում, իսկ մշակման պիտանի հող գիւղական ամեն մի բնակչի՝ երկուսից մինչև երկուս ու մի քառորդ գետնատին: Ճիշտ է, հողով առատ շրջաններում հողուն 8—10—12, իսկ ընտանիքին 50—80 գետնատին հող է հասնում, բայց չպէտք է մոռանալ, որ միլիոնաւոր մարդիկ բոլորովին հողազուրկ են և որ գիւղացիութեան մի նշանաւոր տոկոսը սակաւահող է, ինչպէս Մալարոսիայում կամ հարաւ արևմտեան շրջանում, ուր ամեն մի ընտանիք հաղիւ 5—6 գետնատին հող ունի: Ռուսաստանի ամենափոքր մասերին է պատկանում և Անդրկովկասը, ուր որոշ գաւառներում ընդհանուր տարածութիւնից հողուն հաղիւ 1—2 գետնատին է ընկնում: Գիւղացիներին խոստումներով կերակրող պարոնները թող իմանան, որ եթէ Անդրկովկասի ազգաբնակչութիւնը որեւէ հրաշքով կարողանայ շահագործել անապատները, ճահիճները, լեռների գագաթները և երկրի այլ «հրապուրիչ» հողամասերը, այդ դէպքում էլ Բազի և Գանձակի նահանգներում ընդհանուր տարածութիւնից հողուն երեք և կէս գետնատին կը հասնի, Թիֆլիսի նահանգում—երկու և կէս, Երևանի նահանգում—երկու, Քութայիսի նահանգում—1,6, Ալեքսանդրապոլի գաւառում—1,4, Երևանի և Շորապանի գաւառներում—1, 3, Քութայիսի գաւառում—1 գետնատին, Թիֆլիսի գաւառում—մի գետնատինից էլ պակաս (0,9):

Ռուսաստանի ազգաբնակչութիւնը—այդ թւում և Անդրկովկասի ազգաբնակչութիւնը—չափազանց արագ է ա-

ճուճ: Ամեն մի հազար մարդուն տարեկան աւելանում է 16—17 հոգի. հետևապէս Ռուսաստանի մօտ 180 միլիոն ազգաբնակիւթիւնը տարեկան աճում է աւելի քան երեք միլիոնով: Յայտնի գիտնական Մենդելէի հաշուով 1950 թւին մեր երկրի ազգաբնակիւթիւնը 283 միլիոն է կազմելու, աճելով — ներկայիս հետ համեմատած — 55 տոկոսով: Հետևապէս 35 տարուց յետոյ, մօտաւորապէս կիսով չափ կնւազի և ամեն մի բնակչի հասնելիք հողի քանակը:

Մեզ կարող են առարկել, որ ազգաբնակիւթեան աճմանը զուգընթացաբար աճելու է և շահագործող հողերի տարածութիւնը, որ ներկայումս ամայի ընկած կամ առհասարակ չշահագործող բազմաթիւ հողամասեր կռուգւեն կամ կը չորացնւեն, անտառից կը մաքրւեն, կը պարարտացնւեն և դրանով հողային ֆոնդը նշանաւոր չափերով կաճի, այնպէս որ սակաւահողութեան մասին առայժմ խօսք լինել չի կարող: Անհերքելի ճշմարտութիւն է ի հարկէ, որ ազատ դեմոկրատական կարգերում պետութիւնը, տեղային ինքնավարութեան մարմինները և իրանք գիւղացիք այդ ասպարէզում խոշոր գործեր են կատարելու, բայց մեծ սպասելիքներ դնել դրա վրայ և յուսալ, որ սակաւահողութիւնը այդ ճանապարհով հնարաւոր է ոչնչացնել, չի կարելի: Դրան անհերքելի ապացոյցներ է տալիս թէ Ռուսաստանի և թէ Եւրոպայի պատմութիւնը: 18-րդ դարի վերջերին Ռուսաստանի սե հողային շրջանում ամեն մի գիւղացի տղամարդի 8—13 դեսեատին հող էր ընկնում: 1905 թւին այդ քանակն իջել էր մինչև 3,4 դեսեատին. ոչ—սե հողային շրջանների համար համապատասխան մեծութիւններն են՝ 7 և 1, 8 դեսեատին: Կար ժամանակ՝ ընդամենը 100—150 տարի մեզանից առաջ—երբ Արևմտեան Եւրոպայում էլ հողի առատութիւն էր, բայց ազգաբնակիւթեան աճման շնորհիւ այսօր մի հոգու հետեւալ քանակի հող է ընկնում. Ֆրանսիայում—1,3 դեսեատին, Գերմանիայում—6 տասներորդական, Անգլիայում—կէս դեսեատին և Բելգիայում—4 տասնոր. դեսեատին: Յայտնի է նոյնպէս, որ այդ բոլոր երկրներում հողն այնքան է մշա-

կած, որ Ռուսաստանը մի քանի տասնեակ տարուց յետոյ նրանց դիւղատնտեսական վիճակին հաղիւ կարողանայ արժանանալ:

Հողի քանակը գիւղատնտեսութեան մէջ ահագին նշանակութիւն ունի, բայց և այնպէս վճռական դերը ոչ թէ քանակին, այլ որակին է վերագրելու. կուլտուրական և ոչ մի երկրում գիւղացին այնքան սոսկալի թշուաւ կացութեան մէջ չի գտնուում, ինչքան Ռուսաստանում, և այդ չնայած ամենքին յայտնի այն երեւոյթին, որ Ռուսաստանի գիւղացին աւելի հող ունի, քան արևմտեան Եւրոպայի գիւղացին: Գիւղացիական ամեն հարիւր տնտեսութիւնից 5 դեսեատինից պակաս հող Բելգիայում 90-ը ունին, Գերմանիայում—77, Ֆրանսիայում—71, իսկ Ռուսաստանում միայն 11-ը: Առաջին հայեացքից հակասական թւացող այդ երեւոյթը նրանով է բացատրուում, որ ամեն մի դեսեատին հողը Եւրոպայում չորս-հինգ անգամ աւելի ցորենի կամ հաճարի բերք է տալիս, քան Ռուսաստանում:

Բաւական չէ, որ հողը մեզ մօտ չնչին բերք է բերում. մշակած հողերն էլ երկրի ընդհանուր տարածութեան մէջ չնչին տոկոս են կազմում: Մօտ 2000 միլիոն դեսեատին տարածութիւնից ցանւում է ընդամենը 102 միլիոն դեսեատին, այսինքն ամեն 20 դեսեատինից մինը: Իսկ երկրի առանձին շրջաններում ամեն հարիւր դեսեատինից ցանւում է՝ Վիսլայեան երկրում 46, Կովկասում 20, Եւրոպական Ռուսաստանի 50 նահանգում—18, Թուրքեստանում—2, Արևմտեան Սիբիրում նոյնիսկ մի տասներորդ դեսեատին, այսինքն՝ 1000 դեսեատինից մէկը: Յիշեալ 102 միլ. դեսեատինից 100 միլիոնը բռնւած է հացով, իսկ մնացածը ճակընդեղով (տակ), բամբակով, արեածաղկով, ծխախոտով: Բացի դրանից, մօտ 4 ու կէս միլիոն դեսեատին գետնախնձոր է ցանւում և 2 միլիոն դեսեատին եգիպտացորեն (սիմինտր): Այնուհետև 250 հազար դեսեատին խաղողի այգիներն են բռնում և 600 հազար դեսեատինից աւելի այլ մրգերի այգիները: Այդ ընդհանուր քանակի մէջ Կովկասին հասնում է 5 միլիոն դեսեատին ցանքս և 163 հազար դեսեատին այգի, որից 102 հազար դեսեատինը խաղողի այգիներ են:

Ինչպէս տեսնում էք, մշակած հողերն Ռուսաստանում չնչին տարածութիւն են բռնում: Եւ դրանում զարմանալու ոչինչ չկայ: Երկրի մօտ մի երրորդը անտառներով է ծածկւած՝ 600—700 միլիոն դեսետին, (Անդրկովկասում երեք և կէս միլիոն): Անվերջ տարածութիւններ են բռնում նաև տունդրաները, ճահիճները, լճերը, տարածութիւններ, որոնք մշակման և հողագործութեան համար անհասարակ պիտանի չեն: Ինչ վերաբերում է մասնաւորապէս անտառներին, թէև նրանք շատ մեծ տարածութիւններ են բռնում, բայց նրանց ոչնչացման գործում պէտք է ծայրայեղ զգոյշ լինել և իմանալ, որ անտառների մեծ մասը կլիմայական այնպիսի շրջաններում է գտնւում, ուր գերադասելի է անտառատնտեսութեամբ զբաղել, քան հողագործութեամբ, բայց զբաղւել ի հարկէ ոչ այսօրւայ նման, երբ Ասիական Ռուսաստանի անտառների ամեն մի դեսետինից պետութիւնը 6 կոպէկ եկամուտ է ստանում, Հիւսիսային Ռուսաստանում—25 կոպ., Կովկասում—31 կոպ., Եւրոպական Ռուսաստանի կուլտուրական շրջաններում 5—6 ռուբլի, և ամբողջ երկրի անտառներից միջին թւով 41 կոպ, այն ինչ գերմանական Պրուսիա թագաւորութեան մէջ ամեն մի դեսետին անտառը տարեկան 22 ռուբլի եկամուտ է բերում:

Առհասարակ, հասարակական կեանքում ամեն ինչ չի կարելի արշինով չափել, որովհետև աշխատանքի այդ եղանակը յաճախ կարող է անսպասելի և վտանգաւոր հետեանքներ ունենալ, հիասթափում առաջացնել: Եւրոպական Ռուսաստանում օրինակ 145 միլիոն դեսետին պետական հող կայ, բայց այդ անագին տարածութիւնը հողագործի գիւղացիութեան համար օգնութեան դուռը չի բացելու, որովհետև մշակելու համար պիտանի այնտեղ ընդամենը 4 միլիոն դեսետին հող է գտնւում: Հարցը հետեապէս անտառով ու ճահիճներով, քարով ու աւազով, ձիւնով ու սառուցով պատած հողերի մէջ չէ, այլ մշակութեան ընդունակ հողերի մէջ: Դժբախտաբար հայ գիւղացիութեան համար, մինչև օրս նրա վիճակը տնօրինող, նրա տնտեսական-քաղաքական կեանքը ղեկավարող կուսակցութիւններն ու անհատները զուրկ են եղել և այսօր էլ զուրկ են նոյնիսկ արշինով չա-

փելու այդ տարրական ընդունակութիւնից, աւելի ճիշտն ասած՝ ցանկութիւնից: Թւաքանութիւնը մահ է նրանց համար: Այդ պատճառով էլ նրանք գերադասում են միշտ և ամենուրէք՝ որոշ թւական տեսլաների հետ գործ ունենալու փոխարէն՝ ճոռոմաբանութիւններով և մշուշային դատողութիւններով սահմանափակել: Հակառակ դէպքում, նրանց մշուշապատ ծրագիրների բացատրութիւնը անհնարին է դառնում: Զէ որ իրականութեան տեսլաների վրայ հիմնւելով բաւական դժար է գիւղացիութեանը նոր հողեր խոստանալ մի այնպիսի դաւառում կամ շրջանում, ուր ազատ հողերն իսպառ բացակայում են:

Տեսնենք այժմ, թէ զանազան դասակարգերի և հիմնարկութիւնների մէջ այդ հողերն ինչպէս են բաժանւած և թէ գիւղացիութիւնն ինչ քաղաքականութիւն է վարելու, որ նրան տանջող գործիքից հողը նրա բարեկեցութեան միջոց դառնայ:

Նամակ IX

Հողատիրութիւնը Ռուսաստանում:

Մօտ երեք դար շարունակ Ռուսաստանի գիւղացիութեան մեծամասնութիւնը ճորտային դրութեան մէջ էր, զուրկ թէ ազատութիւնից և թէ հողի մի այնպիսի քանակից, որը իր տնտեսութեան պահանջներին բաւարարէր: Ճորտատէրերի լծից գիւղացիութեանը յաջողեց ազատւել երկու դար տեղդ կռից յետոյ միայն, 1861 թւին: Սակայն, ազատագրումն այնպիսի բնոյթ ստացաւ, որ երկրի շատ շրջաններում գիւղացիների համար դժար էր նոյն իսկ որոշել, թէ հին ու նոր կարգերի մէջ ինչ տարբերութիւն կայ: Մտացած ազատութիւններն այնպիսի սահմանափակումներով էին համեմած, որ քաղաքացիական իրաւունքների ասպարէզում գիւղացին կիսաճորտային դրութեան մէջ մնաց: Իսկ ինչ վերաբերում է ստացած հողի քանակին, այդտեղ արդէն գիւղացին այնպիսի պայմանների մէջ դըր-

ւեց, որ մինչև «ազատագրումն» ենթադրել անգամ չէր կարելի: Ցած ղիւղատնտեսական կուլտուրայի շնորհիւ, ճորտութեան ժամանակ էլ գիւղացիութիւնն իր տրամադրութեան տակ եղած հողերով չէր կարողանում բաւականանալ և նրա դարաւոր ձգտումն է եղել՝ սեփականացնել բոլոր կալաձառտիրական և մասամբ պետական հողերը: Վերջիններս մշակման ընդունակ էին դարձել այն հսկայական աշխատանքի շնորհիւ միայն, որ հարկւրաւոր տարիներ շարունակ թափել էին ղիւղացիութեան բազմաթիւ սերունդներ, մի տեղ հողը չորացնելով, մի ուրիշ տեղ—նրան անտառից մաքրելով, երրորդ տեղը—նրան ոռոգելով և այլն: Այնպէս որ եթէ հարցին մօտենանք նոյն իսկ զուտ բարոյական կամ իրաւաբանական տեսակէտից, այդ դէպքում էլ կը տեսնենք, որ յիշեալ հողերի գրաւումը գիւղացիութեան անկապտելի իրաւունքն էր: Բայց գիւղացուն հող տալու փոխարէն, 1861 թւի այսպէս կոչուող «մեծ բարենորոգումն» ազատագրեց գիւղացուն նրա սեփական հողերի մի մասից: Երկրի շատ մասերում գիւղացին կալաձառտիրոջ հանդէպ նոյն ստրուկը մնաց, ինչ և ճորտութեան շրջանում, որովհետեւ նրա գլխաւոր միջոցը հողն էր, իսկ հողի ամենալաւ կտորները կրկին կալաձառտէրերի ձեռքում մնացին: Ինչքան էլ գիւղացին իրաւաբանօրէն ազատ լինէր, իրականութեան մէջ նա ստիպւած էր հողատիրոջը ենթարկւել, նրա ցանկութիւններով ղեկավարւել, որովհետեւ այլ կերպ նրանից հող չէր ստանայ և քաղցած կը մնար:

Գիւղացիութիւնը զրկւեց իր հողերի մի մասից, այն էլ լաւագոյն մասից: Սե—հողային շրջանում նրանից խլւեց մօտ 4 միլիոն ղեսեատին հող, որ այդ շրջանի գիւղացիութեան ընդհանուր հողային սեփականութեան քառորդն էր կազմում: Վոլգայի ափերին, Մալոբոսիայում և Նովոբոսիայում ազնւականները իւրացրին գիւղացու հողերի մօտ մի երրորդ մասը: Ամենից քիչ գիւղացիութիւնը տուժեց երկրի ոչ-սե հողային շրջանում, ուր հողը ոչ պտղաւէտ էր և ոչ բարձր արժէք ունէր. այստեղ նա կորցրեց ունեցած հողի մի տասներորդ մասը—մօտ մէկ և կէս միլիոն (1437 հազար) ղեսեատին: Բախտը մի քիչ ժպտաց միայն Լեհաս-

տանի գիւղացիներին: յօգուտ որոնց կառավարութիւնը ազնւականներից կտրեց 2,300,000 ղեսեատին հող: Այս քաղաքականութեամբ կառավարութիւնը ուզում էր միաժամանակ երկու նապաստակ սպանել, այսինքն՝ իր կողմն անցկացնել, կաշառել լեհ գիւղացուն և մի խոր վէրք հասցնել լեհ ազնւականութեանը, թուլացնել նրան, որպէսզի այլևս անջատողական ձգտումներ չունենայ: Սա վրէժխնդրութեան մի ակտ էր, որ անուղղակի կերպով արեւմտեան նահանգների գիւղացիութեանը չափազանց շահաւէտ էր:

Պարզախ ու նենգամիտ մարդիկ հողն այնպէս ձեռքին, որ ամեն մի հարկւր գիւղացուց միայն 11 հոգի 5 ղեսեատինից աւելի հող ստացաւ, 42 հոգի—երեքից մինչև հինգ ղեսեատին, 41 հոգի—մէկից մինչև երեք ղեսեատին և 6 հոգի—մի ղեսեատինից պակաս: Մօտ 900 հազար հոգի ճորտութեան լծի տակից բոլորովին հողագուրկ դուրս եկան: Ստացած հողերի համար էլ գիւղացիութիւնն ստիպւած էր ղեռ վճարել և մինչև 1905 թիւը վճարեց 1534 միլ. ուրբլի:

Գիւղացու հողաբաժինը կամ նաղէլը ղեռ վաթսուական թւականներին իր տիրոջը չէր բաւարարում. ազգաբնակչութեան աճումն էլ այն հետեւեալն ունեցաւ, որ ազատագրումից կէս դար յետոյ ամեն հոգու 25—60 տոկոսով պակաս հող էր ընկնում, քան 1862 թւին: Ճորտութեան անկումը նրանով վերջացաւ, որ ազնւականութեանը հողագուրկ անելու փոխարէն նրա հողերը ղեռ աւելացրեց և «ազատագրումից» յետոյ այդ դասակարգի ձեռքում 82 միլ. ղեսեատին հող թողեց: Այնպէս որ 1861 թւի բարենորոգումներն ոչ այնքան գիւղացիներին ազատագրեցին կալաձառտէրերից, ինչքան կալաձառտէրերին գիւղացիներից: Սակաւահող գիւղացիների դրութիւնը ժամանակի ընթացքում ղեռ աւելի վատթարացաւ, շնորհիւ ազգաբնակչութեան աճման: Եւրոպական Ռուսաստանի սե-հողային շրջաններում 1861—1905 թւերի ժամանակամիջոցում գիւղացիների նաղէլները նւաղել են մօտ մի քառորդով (24 առ հարիւր), իսկ ոչ սե-հողային շրջաններում համարեա կիսով չափ (44 առ հարիւր): 1905 թւին Սարատովի և մի քանի այլ նահանգներում այնքան մանր հողաբաժիններ կային, որ՝

գիւղացիների ասելով—եթէ նրանցում շան գլուխն ու մարմինը տեղաւորեն, պոչն անպայման հարեանի հողաբաժնում կը մնայ: Հողը մշակուում ու պարարտացում էր հրաշագործական միջոցներով, այնպէս որ մանր հողաբաժիններից օգտուելն անհնարին էր դառնում:

Գիւղացին, գուրկ լինելով տնային կենդանիներից, գործիքներից և դրամից, չէր կարող կապալով հող վերցընել և իր հողն էր, որ կապալով ունեւորներին էր տալիս կամ հնարաւորութեան դէպքում նրան վաճառում:

Հողը, տնային կենդանիներն ու գիւղատնտեսական գործիքները սկսեցին կամաց-կամաց ունեւորների ձեռքն անցնել, գիւղական բուրժուազիայի ձեռքում կենտրոնանալ: Ութսունական թւականներին զեմսովային մարմինների միջոցով կատարած հետազոտութիւնները ցոյց տւին, որ դասակարգային շերտաւորումը գիւղում, չնայած համայնքի գոյութեանը, շատ սուր կերպարանք է ընդունել: Բազմաթիւ նահանգներում գիւղացիների ձեռքում եղած հողի 30—50 տոկոսը, այսինքն մի երրորդից մինչև կէսը այդ նահանգների գիւղացիութեան 20 տոկոսի կամ մի հինգերորդի ձեռքում էր կենտրոնացած, իսկ գիւղացիների 50 տոկոսին ընդհանուր գիւղացիական հողերի միայն 20—30 տոկոսն էր պատկանում:

Նոյն յարաբերութիւններն էին իշխում և առևտրի ու արդիւնաբերութեան ասպարէզում: Առևտրաարդիւնաբերական ձեռնարկութիւնների կէսը գիւղացիութեան մի հինգերորդ մասին, նրա ունեւոր տարրերին էր պատկանում: Նոյն շերտաւորումը, հարստութեան մօտաւորապէս նոյն կենտրոնացումը նկատուում է և տնային կենդանիներով ապահով ու նրանցից գուրկ գիւղացիների փոխ-յարաբերութիւններում: Ուսումնասիրած 21 նահանգի 112 գաւառում, ուր 15 միլիոն գիւղական բնակչութիւն կար, Վլ. Իլիինի տւեալներով, գիւղացի ծխերի մի քաւորը տնային կենդանիներից բոլորովին գուրկ էր, երկրորդ քաւորը այնքան քիչ կենդանիներ ունէր, որ ծխին 1 գլուխ կենդանի էր ընկնում, երրորդ քաւորին—երկուական գլուխ, իսկ ծխերի մի հինգերորդ մասին պատկանում էր տնային կենդանիներ.

րի համարեայ կէսը—47,7 տոկոսը: Եւրոպական Ռուսաստանի 49 նահանգների համար լրիւ տւեալներ գոյութիւն ունեն ձիերի վերաբերմամբ: 1888 և 1891 թւականների տւեալներով, այդ 49 նահանգում 10 միլիոնից աւելի գիւղացիական ծուխ էր ապրում, որոնցից 2,777 հազարը (27,3 տոկոս) բոլորովին ձիազուրկ էին, մօտ երեք միլիոնը միայն միական ձի ունէին, 2,247 հազարը—երկուական ձի, իսկ 2,228 հազար ծուխը կամ բոլոր ծխերի 22 տոկոսը այնքան ձի ունէր, որ ամէն մի ծխին 3—5 և աւելի ձի էր ընկնում: Ձիերի 17 միլիոն ընդհանուր թւից նրանց պատկանում էր կիսից աւելին—56 տոկոսը կամ ինն ու կէս միլիոն ձի: 1896—1900 թւականների տւեալներով: 1888 թւից յետոյ ձիազուրկ և մի ձի ունեցող ծխերի թիւը 56 տոկոսից բաձրացել էր մինչև 59 և կէս տոկոս կամ 5651 հազարից մինչև 6604 հազար ծուխ: Ծխերի թիւն էլ այդ ժամանակամիջոցում աճել էր մօտաւորապէս մի միլիոնով:

Երկրում տիրող յետադէմ քաղաքական կարգերը խոչընդոտ էին հանդիսանում և գործարանային արդիւնաբերութեան ընդարձակմունը, այնպէս որ սակաւահող և հողազուրկ գիւղացիութեան մեծամասնութեան համար քաղաքը չէր կարող որպէս գոյութեան աղբիւր ծառայել: Գործարանային կեանքը այնքան դանդաղ էր առաջ ընթանում, որ տարեց տարի աճող աղքատակութիւնն անգամ այդ ասպարէզում չէր կարող իր համար զբաղմունք գտնել: Բազմամիլիոն պրոլետար և կիսապրոլետար գիւղացիութիւնը, քաղցից մի կերպ խուսափելու համար, սկսում է աշխատել կալաւածատէրերի և գիւղացիական բուռնցքների մօտ, օրական 10—20 կոպ. աշխատավարձ ստանալով, իսկ երեխաներն ու կանայք մի ամբողջ օրւայ աշխատանքի համար սովորաբար ստանում էին 10—5, երբեմն և երեք կոպէկ: Մինչև այսօր էլ այդ կիսաքաղց դրութիւնից նրանց չյաջողւց ազատել:

Գիւղացիութեան միջին դասը կարող էր հողագործութեամբ զբաղւել և այդ աշխատանքի պտուղներով իր գոյութիւնը պահպանել միայն հողի կապալի միջոցով, որ նա խոշոր կալաւածատէրերից էր վերցնում: Արդէն անցեալ դա-

րի ութսունական թւականներին եւրոպական Ռուսաստանի գիւղացի ծխերի 55 տոկոսը կապալով հող էր վերցնում: Ներկայ դարի սկզբում նոյն շրջանում կապալով վերցրած հողերը մօտ 40 միլիոն դեսիատին մի ահագին տարածութիւն էին կազմում կամ ամբողջ Կովկասի չափ մի երկրամաս: Մեր դարի սկզբում կապալավարձը մի գեսեատնից 5-ից մինչև 30—40 ռուբլի էր կազմում: Գիւղացիութեան մեծամասնութեան համար կապալավարձը պէտք է որ 12—15 ռուբլի կազմէր, այնպէս որ հողերը կալւածատէրերի ձեռքում մնալու շնորհիւ եւրոպական Ռուսաստանի գիւղացիութիւնը այդ նոյն կալւածատէրերին որպէս կապալավարձ տարեկան 500—600 միլիոն ռուբլի փող էր վճարում: 1901—1906 թւականների գիւղացիական շարժման հետևանքներից մէկն էլ այն եղաւ, որ կապալավարձը յաջողեց իջեցնել 15—20 տոկոսով, բայց ժամանակաւորապէս, ինչքան որ յեղափոխութեան ալիքները մեր հասարակական կեանքի ասպարէզում իրենց ծաւալման համար դեռ հող էին գտնում:

Գիւղացիութեան մի այլ մասն սկսեց իր փրկութիւնը գաղթի մէջ փնտռել գլխաւորապէս դէպի Սիբիր, իսկ վերջին 20 տարւայ ընթացքում և դէպի Ամերիկա, ուր միայն 1612 թւին 353 հազար մարդ է գնացել: Տարեկան մի քանի տասնեակ հազար մարդուց գաղթող գիւղացիների թիւը մեր դարի սկզբում հարիւր հազարների հասաւ—մինչև 700 հազարի: Կառավարութիւնն ամէն կերպ աջակցում էր այդ գործին, տալով գաղթականներին ընդարձակ հողաբաժիններ և նրանց դրամական օգնութիւն հասցնելով: 20րդ դարի սկզբից Սիբիրում էլ պիտանի հողերի պակասութիւնը, զգացւեց, այնպէս որ սկսած այդ ժամանակից Սիբիր գաղթողներին մարդագլուխ 15 դեսեատին հող է տրւում և ամէն տնտեսութեան համար 250—400 ռուբլի փող, վերադարձնելու պայմանով: Կալւածատիրական կառավարութիւնը յուսով էր, որ այդ ճանապարհով հնարաւոր կը լինի սակաւահողութիւնը մեղմացնել, գիւղացիական շարժման առաջընթացի կերպով առնել և խոշոր հողատէրերին իրենց սեփականութեան մէջ հաստատ պահել, հողերի գրաւման ուր-

ւականից նրանց ազատել: Բայց այդ խաբուսիկ յոյսերը շատ շուտով ի դերե ելան: Տաճկահայ գաղթականները կարճ են Կովկասում հողագործութեամբ զբաղւել, եթէ նրանց այստեղ առատօրէն հող բաժանի: Դրա միակ պատասխանն է՝ ոչ մի դէպքում: Հողագործութեան համար պահանջւում են ոչ միայն որոշ չափով կուլտուրական միջավայր, այլ և տնային կենդանիներ, դիւղատնտեսական գործիքներ, սերմացու, բնակարան և այլն: Կառավարութեան օգնութիւնը, նրա դրամական օժանդակութիւնը այդ ահագին բացերը ծածկելու համար անբաւարար էին: 200—400 ռուբլի փողով մարդիկ հազիւ գաղթավայրերն էին հասնում ու իրենց համար մի խրճիթ կառուցում կամ մի զոյգ եղ գնում: Սիբիրի հեռաւոր, ամբողջ աշխարհից կտրած անկիւնները գաղթողների դրութիւնը, այնքան յուսահատական էր լինում, որ նրանց մի մասը սովորաբար յետ էր գալիս:

1898 թւին Սիբիրից Եւրոպա վերադարձաւ 15 հազար մարդ, 1900ին՝ արդէն 68 հազար հոգի և 1911—1912 թւին 231 հազար հոգի: 1861—1913 թւականներին եւրոպական Ռուսաստանից Ասիա է գաղթել 5 միլիոն մարդ:

Գաղթողների կէսից աւելին, նրանց 54 տոկոսը, 3—5 դեսեատին հող ունեցող գիւղացիներն էին, մի աւելորդ ապացոյց այն բանի, թէ մեզ մօտ հողագործական կուլտուրան և տեխնիկան ինչքան ցած աստիճանի վրայ են գտնւում: Հողազուրկները և մի դեսեատինից պակաս նաղել ունեցողները գաղթողների 24 տոկոսը կամ հազիւ նրանց մի քառորդն էին կազմում:

Ռուսաստանի տնտեսութիւնն ու մտաւոր կուլտուրան, ինչպէս և քաղաքական կացութեան պայմանները հողագործութեան առաջխաղացման համար միշտ էլ չափազանց աննպաստ են եղել: Իսկ երբ հողագործութեան ինտենսիֆիկցիան—հողի պտղաբերութեան աճեցումն—անհնարին է, հողագործի առաջ քաղցից խուսափելու մի ելք է մնում—ընդարձակել իր հողային սեփականութիւնը: Եւ պատմութիւնը մեզ ասում է, որ ճորտութեան վերացման հէնց երկրորդ օրը գիւղացիներն սկսեցին դիմել և այս միջոցին, գնելով կալւածատէրերի հողի մի մասը:

Ճորտութեան անկումը պայմանաւորող առաջնակարգ հանգամանքներից մէկն էլ այն էր, որ ազատագրման նախօրեակին հացի արտահանումը տարեց տարի ուժեղանում էր, Եւրոպական շուկայի պահանջներէն բաւարարութիւն տալու համար կալածատէրերը պէտք է մեծ քանակութեամբ հաց արտահանէին, իսկ դրա համար հարկաւոր էր հողի պարարտացում և նրա մշակումը մեքենաներով ու պրոֆեսիոնալ կրթութիւն ստացած գիւղատնտեսներով, Բայց ճորտութեան գոյութիւնը գիւղատնտեսական կուլտուրան անհնարին էր դարձնում և այդ պատճառով էլ հացի առևտուրով զբաղող կալածատէրերը ճորտութեան վեցամանն էին ձգտում: Եւ նրանք իրենց նպատակին հասան—ճորտերից ազատեցին և միաժամանակ հող ու փող ստացան: Սակայն, Եւրոպայի շուկայի վրա դրած յոյսերը չարդարացան: Ռուս նախկին ճորտատէրերը անզօր դուրս եկան Ամերիկայի հետ մրցել: Ամերիկան Եւրոպային աւելի աժան հաց էր մատակարարում, քան այդ Ռուսաստանը կարող էր տանել, թէև տարածութիւնը Ամերիկայի և Եւրոպայի մէջ շատ անգամ աւելի է, քան Ռուսաստանի և Եւրոպայի մէջ: Հողատէրերի համար մանաւանդ կործանիչ դուրս եկաւ հաղորդակցութեան ճանապարհների բացակայութիւնը այն շրջաններից, ուր ամենից շատ հաց էր արտադրւում:

Ստացած հողերը օգտագործել չկարողանալով, հողատէրերն սկսեցին նրանց շուկայ հանել, նրանց համար գնողներ փնտրել: Եւ գնողներ իսկոյն գտնւեցին յանձինս վաճառականների, գործարանատէրերի, մէջնանների և գիւղացիների: Ինչպէս վերը յիշեցինք, վաթսուներկու թւերի ընկերքին ազնւականները Եւրոպական Ռուսաստանում ունէին 82 միլիոն դեսեատին հող. 1887 թւին նրանց հողատիրութիւնը նւազել էր մինչև 65 միլիոն դեսեատին և 1905 թւին՝ մինչև 53 միլիոն դեսեատին: 1877 թւին ազնւականներին պատկանում էր մասնատիրական հողերի 78 տոկոսը, իսկ 1905 թւին—արդէն 52 և կէս տոկոսը, այսինքն չորս հինգերորդ մասից իջել էր մինչև կէս մաս: Ինչքան յեղափոխական շարժման ալիքներն աւելի էին բարձրանում, ինչքան հողի գրաւումը գիւղացիների կողմից աւելի ըս-

ղառնալից և հնարաւոր էր դառնում, այնքան ազնւականներն աւելի մեծ քանակով հող էին վաճառում: Այնպէս դարի վաթսուներկու թւականներին նրանք տարեկան մօտ կէս միլիոն դեսեատին հող էին վաճառում, նոյն դարի վերջում—մի միլիոն, իսկ 1906 թւին վաճառել և վաճառքի էին հանել մօտ 8 միլիոն դեսեատին հող:

Այդ հողից գիւղացիութիւնը ձեռք էր բերում տարեկան, միջին թւով վաթսուներկու թւականներին—մօտ հարիւր հազար դեսեատին, ութսուներկու թւականներին—համարեա կէս միլիոն, ինսուներկու թւականներին—700 հարիւր հազարից աւելի: Մինչև 1905 թիւը գիւղացիներն այդ միջոցով ձեռք բերին 24,6 միլիոն դեսեատին հող, որից 11,4 միլիոնը գիւղական համայնքների և գիւղացիական ընկերութիւնների էր պատկանում, իսկ 13,2 միլիոնը գիւղացիների անհատական սեփականութիւն էր կազմում: Ինքն ըստինքեան հասկնալի է, որ աղքատ և հողազուրկ կամ սակաւահող գիւղացիները հող գնելու մասին երազել էլ չէին կարող: Եւ թւական տւեալներն իսկապէս հաստատում են, որ յիշեալ 13,2 միլիոն դեսեատինից մինչև 50 դեսեատին հողամասերը 32 տոկոս կամ մի երրորդ մասն են կազմում 50—200 դեսեատին տարածութիւն բռնող հողամասերը մի քառորդը, 200—500 դեսեատինանոց հողամասերը 155 տոկոս, 500—1000 դեսեատինանոց հողամասերը 10 տոկոս և հազար դեսեատինից աւելի մեծ հողամասերը 17 տոկոս:

Այդ գնումի շնորհիւ գիւղացիների հողատիրութիւնը զգալի չափով աճեց: 1877 թւին ընդհանուր մասնաւոր հողատիրութեան 7 տոկոսը կազմելով, գիւղացիների մասնատիրական—ոչ նաղէլնի—հողերը 1905 թւին, արդէն 24 տոկոսըն էին կազմում: 1877 թւին գնած և նաղէլի հողեր գիւղացիներն ունէին 119 միլիոն դեսեատին, իսկ 1905 թւին 150 միլիոն դեսեատին:

Սակայն, ոչ կապալով հող վերցնելը, ոչ գաղթը և ոչ հողի գնումը գիւղացու ցաւ ու դարդին դարման չարին: Նւազելու փոխարէն սակաւահողերի և հողազուրկների թիւը տարեց-տարի աճում էր, աճում էր նաև գիւղացի կալածատէրերի թիւը: 1905 թւին միայն Եւրոպական Ռուսաս-

տանում 1076 գիւղացի կար, որոնցից ամէն մէկը աւելի քան հազար դեսեատին հող ունէր, իսկ բոլորը միասին 2320 հազար դեսեատին: Ռուսաստանում ոչ միայն բազմամիլիոն հողագործի, այլև տնագործի գիւղացիութիւն կայ: Եւրոպական Ռուսաստանի 11 նահանգի վերաբերմամբ գոյութիւն ունեցող ճիշտ տւեալները ցոյց են տալիս, որ ամէն 20 ծխից մէկը տուն չունի, իսկ ամբողջ եւրոպական Ռուսաստանում հողագործիների թիւը հաշոււմ են մինչև 16 միլիոն հոգի: Պաշտօնական տւեալներով, 1905 թւին եւրոպական Ռուսաստանի 50 նահանգում 395 միլիոն դեսեատին հող կար, որից պատկանում էր՝

պետութեանը	138	միլիոն դեսեատին
Ուղէշներին	8	» »
Նկեղեցիներին և		
վանքերին	2,6	» »
Քաղաքներին	2	» »
Կողակներին հողային		
ֆօնդին	3,5	» »
Ձանազան հիմնարկ.	647	հազար »
Մասնաւոր սեփականութիւն	101,7	միլ »
որից պատկանում է՝		
ազնւականներին	53	» »
Վաճառականներին	13	» »
Գիւղացիներին	14	» »
Համայնքներին և		
ընկերութիւններին	16	
գիւղացիների նաղէլի հող	138,8	» »

Գիւղացիների նաղելային հողաբաժինների մասին վերև արդէն խօսեցինք. այդ հողերի համարեա չորս հինգերորդը համայնքներին է պատկանում, և միայն մի հինգերորդը մասնաւոր սեփականութիւն կազմում:

Ինչ վերաբերում է անձնական մասնատիրական հողերին — ազնւական և ոչ-ազնւական, որոնք 1905թ. եւրոպական Ռուսաստանի 50 նահանգում 96 միլ. դեսեատին տարածութիւն էին բռնում, պէտք է ասել, որ նրանց 70 տոկոսը (52 միլ. դես.) խոշոր կալաժատէրի էր պատկանում, որոնցից ամէն

մէկը հազար դեսեատինից աւելի հող ունէր, այն էնչ մինչև հարիւր դեսեատին հող ունեցողները այդ կարգի հողատէրերի 11,4 տոկոսն էին կազմում:

Մասնատիրական հողեր Սիբիրում շատ քիչ կան, մօտ կէս միլիոն դեսեատին, որ 1200 մարդու է պատկանում: Ամենախոշոր հողատէրը երկրի այդ մասում կաթինեան է, որ 43 միլիոն դեսեատին հող ունի:

Անդրկովկասի գիւղացիութիւնն աւելի ծանր հողային պայմաններ է ապրում, քան ներքին Ռուսաստանի գիւղացիութիւնը, մասնաւորապէս որ մեզ մօտ բազմաթիւ գիւղեր դեռ կիսաճորտային դրութեան մէջ են գտնուում:

Անդրկովկասի հինգ նահանգներում — քացի Ղարսի շրջանից — 15,7 միլիոն դեսեատին հող կայ, որի լաւագոյն կտորները պետութեանը և կալաժատէրերին են պատկանում: Պետութեան ձեռքում 8,3 միլիոն և կալաժատէրերի ձեռքում 2,8 միլիոն դեսեատին հող է գտնուում: Գիւղացիները օգտոււմ են ընդամենը 4,6 միլիոն դեսեատինով, որից 3,7 միլիոնը պետական հողեր են, իսկ մնացածը՝ մասնատիրական — 630 հազար դեսեատին, խիղանական — 37 հազար դես. և ժամանակաւոր պարտադիրների հողեր — 22 հազար դեսեատին:

Ճիշտ տւեալներ Անդրկովկասի հողատիրութեան մասին գոյութիւն չունին, այնպէս որ այստեղ առաջ բերած բոլոր թւերը երկրի իսկական դրութեանը միայն մօտաւորապէս են համապատասխանում: Նրանք ութսունական թւականներին են վերաբերում:

Մեզ մօտ մասնատիրական հողերը ըստ նահանգների հետևեալ կերպով էին բաժանուում.

Թիֆլիսի նահանգ	1,3	միլ. դեսեատին
Գուրայիսի »	638	հազար դես.
Գանձակի »	441	» »
Բազուի »	247	» »
Երևանի »	136	» »
Ձաքաթալայի շրջան	27	» »

Փոքրաթիւ հողատէրերի ձեռքում հողի այսքան մեծ տարածութիւններ են գտնուում և այն էլ՝ սովորաբար լաւագոյն հողերի:

Իսկ գիւղացիները !

Անդրկովկասում 51 բոլորովին հողագուրկ գիւղ կայ, 9 գիւղում ծխին մի դեսեատինից պակաս հող է հասնում, 26 գիւղում—մինչև 2 դեսեատին, 197 գիւղում—2—4 դեսեատին, 394 գիւղում՝ 4—7 դեսեատին, 395 գիւղում՝ 7—10 դեսեատին, 1207 գիւղում՝ 10—20 դեսեատին, 734 գիւղում՝ 20—30 դեսեատին, 322 գիւղում՝ 30—40 դես. և 338 գիւղում՝ 40-ից աւելի դես.։ Այս թւերի մէջ են մտնում բոլոր տեսակի հողերը, որոնց մէջ և արօտատեղերը։ Եթէ մի կողմ թողնենք խաղողի և այլ մրգերի այգիները, բամբակի, թութուների և բրնձի դաշտերը, եթէ ուշագրութեան առնենք գիւղացիութեան մեծամասնութեան հողատիրութիւնը, կը տեսնենք, որ նա չափազանց անբաւարար է։ Հողային հարցում Պ. Մասլովի և Ն. Օգանովսկու նման հեղինակաւոր գիտնականները գտնում են, որ Ռուսաստանում դեռ տիրող երեքդաշտեան (трезпольное) հողագործութիւնը, իր պրիմիտիւ, անկատարելագործ տեխնիկայով և կուլտուրայով կարող է մի ընտանիքի բոլոր պահանջները բաւարարել, եթէ ծխին 30—50 դեսեատին հող է հասնում։

Ինչպէս վերեր տեսանք, Անդրկովկասի գիւղերի մեծամասնութիւնը—նրանց 90 տոկոսը, ծխին 40 դեսեատինից պակաս հող ունի, 65 տոկոսը—մինչև 20 դեսեատին և գիւղացիութեան մի երրորդ մասը—մինչև 10 դեսեատին։

Բաւական չէ, որ գիւղացին քիչ հող ունի, երկրի շատ մասերում նա զուրկ է և ջրից։ Եթէ Ռուսաստանի գիւղացին ստիպւած է միայն հողը կապալով վերցնել, միայն հողի համար վճարել, Անդրկովկասի սակաւահող գիւղացին յաճախ վճարում է և հողի և ջրի համար։

Վերև բերած բոլոր տւեալները անցեալ դարի ութսու նախնի թւականներին են վերաբերում։ Այդ նոյն տւեալներինք երևում է, որ մեր ժամանակից 30 տարի առաջ Անդրկովկասի գիւղացիութեան մի քառորդ մասը ստիպւած էր հողի կապալի դիմել։ Թէև ճշգրիտ նորագոյն տւեալներ չկան, բայց կասկածից դուրս է, որ ազգաբնակչութեան ութերորդ շնորհիւ սակաւահողութիւնը մեզ մօտ այսօր աւելի սուր կերպարանք է ստացել, հողի կապալը (արեն-

գան) աւելի լայն չափեր ընդունել։ Իսկ յայտնի է, որ ինչքան կարիքը մեծ է, այնքան համատառասխանօրէն մեծ է և շահագործումը։ Եթէ նկատի առնենք, որ ճորտութեան շատ մնացորդներ մեզ մօտ դեռ կենդանի են, որ գիւղացիութիւնը—մանաւանդ հայ և թուրք գիւղացիութիւնը—դեռ անգիտակից և անկազմակերպ է, հասկանալի կը լինի. թէ ինչու մինչև օրս էլ գիւղացիութեան մի նշանաւոր տուկոսը—երևի նրա մի երրորդ մասից ոչ պակաս—կապալի այնքան ծանր պայմաններով է շրջապատած, որ քաղցած ստրուկից իր կեանքի շատ քիչ կողմերով է տարբերում։ Ֆեդափոխութեան վեցերորդ ամիսն ենք արդէն ապրում, բայց կաւածատէրերի դէմ հայ և թուրք գիւղացիութիւնը այսօր էլ առաջադնման թոյլ ու անզօր է։ Ինչպէս մի քանի օր առաջ հեռագիրը հաղորդեց, Ախալքալաքի կաւածատէրերը չեն համաձայնում բահրան իջեցնել բերքի մի քառորդից մինչև մի տասներորդը։ Երևակայել անկարելի է, թէ ինչ սոսկալի չափերի է հասնելիս եղել նրանց շահագործումը յեղափոխութիւնից առաջ, երբ գիւղացին ոտքից գլուխ նրանց տրամադրութեան տակ էր, երբ ժողովուրդը խօսքի, կազմակերպութեան և դասակարգային կռիւ ազատութիւններից իսպառ զուրկ էր, երբ հայ գիւղում գործող, այնտեղ բառիս բուն նշանակութեամբ թագաւորող Դաշնակցութիւնը դասակարգային կռիւը հայերի մէջ յանցանք էր յայտարարում և յանուն «ազգային շահերի» ամբողջ հայ գիւղացիութեանը գիւղի բռնակցներին ենթարկում։

Հայ ժողովրդի քաղաքական ստրկացման, նրա գիտակցութեան թունաւորման և ինքնուրոյնութեան սպանման գործում Դաշնակցութիւնը մեզ մօտ նոյնքան մեծ չարիք է եղել, ինչքան ամբողջ Ռուսաստանի վերաբերմամբ ազնւականութեան տիրապետութիւնը, ցարի կառավարութիւնը։

Վորոնցով-Դաշկովի վրա սիրահարւած, այդ արիւնարբու գազանին «հայասէր» հռչակող կուսակցութիւնը այսօր իրեն սոցիալիստական է յայտարարել, այսօր իրեն Յ գահերի տապալում է վերագրում։ Բայց այդ «սոցիալիստական» կուսակցութիւնը թող բարի լինի ասել, թէ իր գոր-

ծունէութեան ամբողջ ընթացքում փորձել է երբ և իցէ հայ գիւղացուն կալածատիրոջ կամ գիւղական այլ բառնցք-ներէ դէմ կազմակերպել:

Նամակ X

Գիւղացու ապրուստը

Ռուսաստանի ներկայ յեղափոխութիւնը նախ և առաջ խոշոր հողատիրութեան դէմ է ուղղած: Այդ դասակարգի ձեռքում կենտրոնացած հսկայական հողերն են, որ նրան հնարաւորութիւն էին տալիս դարեր շարունակ իշխողի դերում մնալ, ժողովրդին տնտեսապէս ու քաղաքականապէս շահագործել: Եւ պէտք է խոստովանել, որ ինչպէս ամէնուրեք, մեզ մօտ էլ իշխող դասակարգերը—շատ ընդունակութիւն-ներէ և բարոյական տւեալներից զուրկ լինելով—շահագործման ասպարէզում եզակի ընդունակութիւններ են երևան հանել: Մինչև պատերազմը Ռուսաստանը տարեկան 700—800 միլիոն փութ հաց էր արտահանում, այնպէս որ կողմնակի դիտողին թւալ կարող էր, որպէս թէ մեր երկրի գիւղացիութիւնը եթէ հացի մէջ չի լողում, նրանով դէթ այնքան է ապահոված, որ քաղցից զանգատուել համենայն դէպս չի կարող: Սակայն ամենքին յայտնի իրողութիւն է, որ Ռուսաստանի գիւղացին ոչ միայն անգրագէտ է, ոչ միայն մերկ ու բոբիկ, ոչ միայն պակաս թէյ, շաքար, սուրճ, մանուֆակտուրա, մետաղ և զանազան գործարանային իրեր, այլև պակաս հաց է սպառում, քան Արևմտեան Եւրոպայի գիւղացին:

Մարդագլուխ հաշւած, պատերազմի նախօրեակին Ռուսաստանում տարեկան սպառում էր. հաց—14 (18) փութ, շաքար—15 (100) գրւ., թէյ, սուրճ և կակաօ— $1\frac{1}{4}$ ($8\frac{1}{2}$) գրւ., բամբակ—5 (16) գրւ., քարածուխ—10 (270) փութ, երկաթ— $1\frac{1}{4}$ (13) փութ, պղինձ—10 լոտ ($6\frac{1}{2}$ ֆունտ) և այլն: Համեմատէք այդ թւերը փակագծերում դրած թւերի հետ, որ Անգլիայի կամ Գերմանիայի ժողովրդի սպառ-

մանն են վերաբերում և պարզ կը լինի, թէ Ռուսաստանի ժողովուրդն իր հարեաններից ինչքան է յետ մնացել:

Բայց կայ կենսի մի ասպարէզ, ուր Ռուսաստանը բոլոր կուլտուրական երկրներից անհամեմատ աւելի բարձր է կանգնած, նրանց բոլորին տւել անցել է: Դա թշուառութեան ու քաղցի ասպարէզն է: Պատմականօրէն, Ռուսաստանը քաղցի հայրենիք կարելի է համարել և ինչքան մեր ժամանակին աւելի ենք մօտենում, քաղցի տարիներն այնքան աւելի յաճախ են կրկնում: Բելիակի տւեալներով, 11—16 դարերում Ռուսաստանի ժողովուրդը 100 տարւայ մէջ 8 քաղցած տարի էր ապրում, 17-րդ դարից սկսած քաղցած տարիների թիւն սկսում է աճել և արդէն 18-դ դարը 34 քաղցած տարի է տալիս. իսկ 19-դ դարում միայն 1801—1854 թւականների ընթացքում Ռուսաստանի պատմութիւնը մեզ 35 քաղցած տարի է տալիս: Այդ տարիներին ժողովուրդն ինչով ասէք որ չէր կերակրւում—խոտով, ծառի տերևներով ու կեղևով, ձիու և մարդու մսով: Ճորտութեան անկումից յետոյ երկրի դրութիւնը մի քիչ բարւոքեց, բայց այնքան քիչ, որ հին և նոր կարգերի մէջ եղած տարբերութիւնը գիւղացիների համար այնքան էլ պարզ չէր:

Հողագործութիւնը Ռուսաստանում դեռ այսօր էլ համարեայ նոյն եղանակով է տարւում, ինչ և ճորտութեան դարերում՝ նոյն պապական, անդրջրհեղեղեան գործիքներով ու պարարտացման միջոցներով: Յոգնած հողը տարեց-տարի միշտ աւելի պակաս բերք է տալիս, հացի քանակը—մարդագլուխ վերցրած—նւազում է: Բաւական չէ, որ գիւղացին քիչ հող ունի, ունեցածից էլ հնարաւոր եկամուտն ա չի կարողանում ստանալ: 1915 թւին օրինակ Գութայիսի, Գանձակի, Կազանի և Նիժնի Նովգորոդի մի քանի գաւառներում մէկին հազիւ մէկ ու կէս—երկու բերք ստացւեց, իսկ 1911 թւին Աստրախանի նահանգում դեռ անտի-նից 6 փութ և Օրենբուրգի նահանգում—4 փութ բերք ստացւեց: Մի քանի տարի առաջ Պետական Դումայի պատգամաւոր Շինգարեւը Դումայում մի կտոր հաց ցուցադրեց, որ ճրագկացած էր ինչ որ աղբանման կաշայից, աղած ծղօտից և մոխրից, խոնած ածուխի կտորների հետ:

Հացը ռուս ժողովրդի գլխավոր, համարեայ միակ կերակուրն է։ Հացի այդ խոշոր նշանակութիւնը Ռուսաստանի գիւղացիութեան համար զարմանալի ճշտութեամբ արտայայտուած է և նրա լեզուով։ „ЖИТО“ - հացահատիկ է նշանակում, „ХЛЕБ“ — ապրել։ Միկենոյն արմատն ունեցող այդ երկու բառերի համեմատութիւնը այն է մեզ ասում, որ ռուս գիւղացին հացով է կենդանի։ Հայ գիւղացու կեանքում էլ հացն առաջնակարգ, յաճախ գլխավոր դեր է խաղում։ «Հաց ու պանիր—կեր ու բանիր», ահա մեր գիւղացու իգէալը։ Եւ երկար ու ձիգ դարերի իր չարքաշ կեանքում նա այնքան դառն օրեր է ապրել, այնքան քաղցած տարիներ տեսել, հացի բացակայութիւնը նրան յաճախ ֆիզիքական ու բարոյական այնքան տանջանք է պատճառել, որ նրա տեսակէտից հացը «սուրբ է», նրան չի կարելի գետին գլորել, նրան կոխոտելը յանցանք ու սրբապղծութիւն է։ Գետին ընկած հացը պէտք է բարձրացնել, համբուրել և ամենայն ակնածութեամբ տեղը դնել—ահա գիւղական բոլոր տատիկ-պապիկների, փորձաւոր, կեանքի չարիքների բաժակը ցմրուր պարպած բոլոր աղքատ ծերուկների պահանջը։ Պատի ու ծոմի մասին նրանք ուրիշներից չոն լսել, գրքերում չեն կարդացել—երանց ֆիզիքական կազմը, նրանց ամբողջ հոգեկան աշխարհը պատի ու ծոմի ժառանգութիւն, քաղցի վկայական են ներկայացնում։

Եթէ հացի այդ բարձր գնահատումը գիւղացիների կողմից մինչև օրս շատերի համար կարող էր անհասկանալի լինել, նոյնիսկ ծիծաղելի թւալ, հացի այսօրւայ սոսկալի ճգնաժամը բոլորի աչքերն էլ կը բացի և գիտակցել կը տայ, թէ Ռուսաստանի բոլոր ժողովուրդները ինչու այնքան մեծ թւով պատ օրեր ունեն, թէ ծոմի մրցումն ինչով բացատրել։ Մինչև 1916 թւականի վերջը մենք սովի ուրաւականի առաջ էինք կանգնած, իսկ այսօր սովն արդէն քաղաքացիութեան կատարեալ իրաւունք է ձեռք բերում, կատաղի արագութեամբ նոր ու նոր նւաճումներ անում։ Մանաւանդ ծանր օրեր են սպասում Անդրկովկասին, որի սպառած հացի համարեա կէսը Հիւսիսային Կովկասից և Ռուսաստանից է գալիս։

Մեր գիւղացու աղքատութիւնը մի անհերքելի փաստ է, բայց այդ տխուր փաստը ուղղակի սոսկալի կը թւայ գիւղացուն, երբ նա կիմանայ, թէ կուտուրական երկրներում գիւղացիք կեանքի ինչքան բարեւոք ու ապահով աշամաններ են վայելում։ Բաւական է ասել, որ Անգլիայի ընդհանուր հարստութիւնից մարդագլուխ 3000 ռուբլու հարստութիւն է ընկնում և տարեկան ընդհանուր եկամտից—500 ռ. եկամուտ, այն ինչ Ռուսաստանի ամեն մի բնակչի 400 ռուբլու հարստութիւն է համարում և 88 ռ. տարեկան եկամուտ։ Հետևապէս, Անգլիայի ամեն մի բնակիչ մօտաւորապէս հինգ անգամ աւելի հարուստ, նիւթապէս աւելի ապահով է, քան Ռուսաստանի բնակիչը։ Միջին թւով վերցրած, վեց հոգուց բաղկացած ընտանիքը Անգլիայում տարեկան 3000 ռուբլի եկամուտ ունի, իսկ Ռուսաստանում ընդամենը 528 ռուբլի։

Յայտնի է, որ աղքատութիւնը տկարութիւնների և մահացութեան մի անսպառ աղբիւր է հանդիսանում։ Եւ մենք տեսնում ենք, որ ազգաբնակչութեան ամեն մի հազար հոգուց Ռուսաստանում տարեկան 31 հոգի է մահանում, իսկ Գերմանիայում ու Ֆրանսիայում—19, Հիւս. Ամ. Միացեալ-Նահանգներում—16, Նոր Զիլանդիայում—9 հոգի։

Բայց ամբողջ դժբաղդութիւնը նրանումն է կայանում, որ կեանքի շատ ասպարէզներում գիւղացու դրութիւնը, բարեւելու փոխարէն, յաճախ դեռ աւելի վատթարանում է։ Վերել տեսանք, որ այդ երևոյթը տեղի ունի հացի քանակի վերաբերմամբ։ Հողագործութիւնն առաջ չի գնում, այն ինչ ազգաբնակչութիւնը անընդհատ աճում է և տարէց-տարի հոգուն պակաս հաց է համարում։

Նոյնը պէտք է ասել և անասնապահութեան վերաբերմամբ։ 1905 թին ազգաբնակչութեան ամեն մի հոգու համար էր 25 ձի, 39 խոշոր եղջերաւոր կենդանի, 57 ոչխար և 11 խոզ, իսկ արդէն 1910 թին, ընդամենը հինգ տարի ժամանակամիջոցում, նոյնպէս հարիւր հոգու վրայ հաշւած, ձիերի թիւը նւազել էր մինչև 20 գլուխ, խոշոր եղջիրաւոր կենդանիներին—30, ոչխարին—40 և խոզին—9 գլուխ։ Երբ գիւղացին ինքը կիսաքաղցած դրութեան մէջ է գտնուում, պարզ է, որ իր

տնային կենդանիների համար աւելի բարւոք պայմաններ ստեղծել չի կարող: Մարդու նման, քաղցած կենդանիներն էլ հիւանդութիւնների մեծ հեղտութեամբ են ենթարկուում և անթիւ-անհամար կոտորուում: Բացակայում են թէ առատ սնունդը և թէ բժշկութիւնը: 1910 թւին զանազան հիւանդութիւնների զոհ է գնացել աւելի քան 150 հազար տնային կենդանի: Պարզ է, որ նման պայմաններում իրենց որակով էլ տնային կենդանիները չեն կարող բարձր կանգնած լինել: Բաւական է ասել, որ Ռուսաստանում ընդամենը 200 հազար ձի կայ, որոնք 2 արշին 2 վերջոկէց աւելի բարձր հասակ ունեն՝ բայց գիւղացիութեան մի խոշոր տոկոսը—հարիւրից 38 հոգին—զուրկ է նոյն իսկ այդ կարճահասակ ու թոյլ ձիերից:

Մինչև պատերազմն էլ անասնապահութիւնը Ռուսաստանում շատ աննախանձելի պայմաններում էր գտնուում, իսկ այսօր, պատերազմի չորրորդ տարւայ սկզբում, կոտորած է տնային կենդանիների համարեա կէսը:

Մինչև պատերազմն էլ Ռուսաստանի գիւղացին հազւագիւտ դէպքերում էր մսի երես տեսնում: Իսկ այսուհետեւ այդ մասին նա միայն երազել կարող է: Մինչև պատերազմը ամեն մի բնակիչ Ռուսաստանում գործ էր ածում տարեկան 50 գրամանոց միս, Գերմանիայում—113, Անգլիայում—120, Հ. Ամ. Միացեալ Նահանգներում—175 գրամանոց:

Միսը կարելի էր ձկով փոխարինել: Ռուսաստանն էլ ձկան հազւագիւտ հարուստ աւազաններ ունի, բայց ձուկ մեզ մօտ այնքան քիչ է որսւում, որ հոգուն հազիւ 15 գրամանոց է համարում:

Սովորաբար, Ռուսաստանի գիւղացին հացով ապահովւած չէ, իսկ մսի ու ձկան միշտ էլ սուր կարիք է զգում: Պէտք էր ենթադրել, որ նման պարագաներում նա ապահովւած կը լինի գոնէ բանջարեղէնով, բայց կեանքի այդ ասպարէզում էլ մինչև օրս նա այնքան չնչին առաջադիւժութիւն է ցոյց տւել, որ հարցը նոյն իսկ ուսումնասիրութեան չէ արժանացած: Մեր յետաքննարկութիւնը այդ ասպարէզում ցոյց տալու համար աւելորդ չենք համարում յիշել այստեղ, որ Հ. Ամ. Միացեալ Նահանգներում ժողո-

վուրդը իր այգիներից և բանջարանոցներից տարեկան մօտ 900 միլիոն ուլարի եկամուտ է ստանում:

Հողը յոգնել, ուժասպառ է եղել: Տնային կենդանիները եթէ քաղցի ու համաճարակի զոհ չեն գնում, յաճախ իրենց այնքան թոյլ են զգում, որ տէրերը նրանց փայտի ու թուկի միջոցով մի կերպ ոտքի են կանգնեցնում: Ուժասպառ եղած հողի և կենդանիների վրա յոյս գնող գիւղացին էլ բնական է որ մշտապէս քաղցի ուրւականի առաջ կանգնած լինի, ֆիզիքապէս բայքայած, հոգեպէս մաշւած ու ծերացած: Դժոխային այս պատկերը լրացնելու համար աւելորդ չենք համարում հայ գիւղացուն ծանօթացնել Կովկասում համարեայ անյայտ հետեւալ երեւոյթի հետ, որ շատերին անհաւատալի կարող է թւալ—քաղցած մահից խուսափելու նպատակով ռուս գիւղացին երբեմն երկու-երեք ամսով իր ընդարձակ վառարանն է մտնում, այնտեղ փակւում, ցուրտ երկրներում ապրող մի քանի կենդանիների նման ձմեռայ քուն մտնում:

Ահա Ռուսաստանի գիւղացիութեան մեծ մասի ապրուստը, այն գիւղացիութեան, որը հողով ու տնային կենդանիներով գեւորոջ չափով ապահովւած է: Բայց սրանք չեն, որ գիւղի ամենազրկւած մասսան են հանդիսանում: Գիւղի ազգաբնակչութեան մէջ ամենացած աստիճանը գիւղական պրոլետարիատն է կազմում, այն պրոլետարիատը, որ նոյն իսկ կուլտուրական երկրներում շատ աննախանձելի վիճակում է գտնւում:

Երկրագործական աշխատանքները սեզոնային են, բանւորները մանր խմբերով ամենալայն տարածութիւնների վրա ցրւած, միմեանց անծանօթ: Համախմբւելու, կազմակերպւելու և բողոքելու, պահանջներ ներկայացնելու տեսակէտից նրանք ամենամանապատ պայմանների մէջ են դրած: Եթէ բողոքականներին ապտակ ու մտրակ չէ սպառնում, քաղցի ուրւականը նրանց առաջ միշտ էլ կանգնած է: Գործարանային բանւորի ձեռքում կուրի այնքան զօրեղ միջոց հանդիսացող գործադուլին գիւղական բանւորը հազւագիւտ դէպքում միայն կարող է դիմել: Գիտակցութեամբ էլ նա անհամեմատ աւելի ցած է կանգնած, քան քաղաքի

բանւորը: Իսկ քանի որ գիտակցութիւնն ու գործադուլը բանւորութեան դասակարգային կռոււմ վճռողական դեր են կատարում, կուի այդ սուր և ազդեցիկ գործիքներից զուրկ գիւղական բանւորը շահագործողների հանդէպ նոյնքան է անզօր, ինչքան անզէն մարդը արջի հանդէպ: Հնադարեան ստրուկներից 20-րդ դարի գիւղական բանւորը համարեա ոչնչով չի տարբերւում: Ճիշտ է, նա կարող է աշխատանքից հրաժարւել, տւեալ վայրից բոլորովին հեռանալ, բայց այդ քայլին նա սովորաբար չի դիմում, որովհետև նման ազատութիւնը նրա համար քաղցած մահ է նշանակում: Նկարագրածից դեռ աւելի ուժեղ ստրկութեան մէջ են գտնւում գիւղի տնային ծառաները-նօքարները և գիւղական արհեստանոցներում աշխատող աշակերտները: Դժոխային պատկերների հեղինակներին այս արհեստանոցների բանւորական կեանքը կարող էր ամենահարուստ նիւթ մատակարարել: Նրանց աշխատանքի օրը սովորաբար 15—18 ժամ է տևում, աշխատավարձը կամ իսպառ բացակայում է կամ մի այնքան չնչին գումար է կազմում, որ ներանով հազիւ կարելի է կիսաքաղց կեանք վարել: Աշխարհից կտրւած, չորս պատի մէջ փակւած, կեանքի բոլոր բարիքներից զրկւած այդ դժբաղդ արարածները 16—18 տարեկան հասակում արդէն երիտասարդ ծերուկներ են՝ քայքայւած առողջութիւնով, բթացած նեարդերով: Այդ արհեստանոցների մի խոշոր տոկոսում աշակերտներն աւելի երկար են աշխատում, աւելի վատ կերակրւում ու պակաս քաղաքացիական իրաւունքներ վայելում, քան կալանաւորների բաժանմունքներում:

Բանտային կացութիւն, իսկական դժոխք—ահա ինչպէս կարելի է որակել գիւղի չունեւոր դասակարգերի կեանքը:

Նախալ XI

Երկրագործութեան կախումը գործարանային արդիւնաբերութիւնից:

Երկրագործութիւնը հազար ու մի թելերով կապւած

է արհեստաւորաց աշխատանքի և գործարանային արդիւնաբերութեան հետ, կապւած այնքան անքակտելի կերպով, որ առանց գործարանին դիմելու նրա առաջադիմութիւնն անհնարին է: Կան մարդիկ և ամբողջ քաղաքական հոսանքներ, որոնք գործարանային կեանքը մի չարիք են համարում և կարծում, որ երկրագործութիւնը կարող է գոյութիւն ունենալ և առաջադիմել առանց գործարանի, հետեւապէս և առանց պրոլետարիատի: Բայց այդ տեսակէտը ոչ միայն սխալ է, այլ և գիւղացու շահերի տեսակէտից ուղղակի կործանիչ: Առանց գործիքների ու մեքենաների, առանց պարարտացման միջոցների, առանց հաղորդակցութեան ճանապարհների, ինչպէս և առանց գիտութեան, առանց գիւղատնտեսական մանուգիտական պատրաստականութեան երկրագործութեան առաջադիմութիւնը անհնարին է: Իսկ յայտնի է, որ երկրագործութեան առաջադիմութեան համար անհրաժեշտ այդ բոլոր նախապայմանները առանց գործարանային արդիւնաբերութեան, ուրեմն և առանց վարձու աշխատանքի անհնարին են: Դեռ աւելին կասենք: Երկրագործութեան առաջադիմութիւնը ծնունդ է տալիս գործարանային արդիւնաբերութեան բազմաթիւ հիւղերի: Միայն հացով, մսով ու կաթնեղէնով ապրել գիւղացին չի կարող. այսօր նա ցանկութիւն ունի ճաշակել կուլտուրայի բոլոր բարիքներից, կեանքի հոգեկան և նիւթական ասպարէզներում ունեւորներին հաւասարել: Իսկ դրա համար փող է պահանջւում, որը նա կարող է ձեռք բերել իր արտադրած բարիքների մի մասի վաճառումով: Առանց ճանապարհների և հաղորդակցութեան այլ միջոցների առկայութեամբ անհնարին է: Հետեւապէս, գիւղացին անմիջապէս շահագործուած է, որ տւեալ երկրում երկաթուղու, փոստի, հեռագրաթելի և հեռախօսի հնարաւորապէս լայն ցանց լինի: Գիւղացուն այս ձեռնարկութիւնները անհրաժեշտ են նրա համար, որ նա կարողանայ մեքենաներ և զանազան ապրանքներ ստանալ, ինչպէս և կուլտուրական կենտրոնների հետ մշտական յարաբերութիւնների մէջ լինել: Բայց յայտնի է, որ առանց գործարանային արդիւնաբերութեան այդ ձեռնարկութիւններից և ոչ մէկը գոյու-

թիւն ունենալ չի կարող: Գիւղացին պէտք է հնարաւորապէս մեծ քանակով հաց, միս, իւղ, պանիր, բուրդ և այլ բարիքներ արտադրի, որպէս զի նրանց մի մասը կարողանայ վաճառքի հանել և այդպիսով իր բոլոր պահանջները բաւարարել:

Այդ նպատակին հասնելու համար նա պէտք է օգտւի այն կատարելագործւած միջոցներից, որ երկրագործութեան և անասնապահութեան մէջ ներկայումս գոյութիւն ունին:

Վաճառքի հանած հացահատիկները պէտք է ալիւր գարձնել, իսկ դրա համար, ինչպէս յայտնի է, կապիտալիստական հիմքերի վրայ դրած խոշոր գործարան-շաղագներ են հիմնուում, որոնք շարժւում են շոգիի, գազի կամ էլեքտրականութեան ուժով:

Ինչքան տւեալ երկրում աւելի միս, իւղ, պանիր և այլ գիւղատնտեսական բարիքներ են արտադրւում, այնքան նրանց արտադրութիւնը աւելի ու աւելի մեծ չափերով կապիտալիստական հողի վրայ է դրւում, գործարանային արդիւնաբերութեան նոր ու նոր ձիւղերի ծնունդ տալիս:

Ինչքան գիւղացին աւելի լաւ է հագնւում ու կերակրւում, ինչքան գրքի ու լրագրի պահանջը նրա շարքերում աւելի է տարածւում, այնքան էլ տւեալ երկրում համապատասխան մեծ թւով գործարաններ պէտք է հիմնւեն, որոնք նրա համար ամանեղէն, ուտելեղէն, հագուստ, ոտնաման, թուղթ, գիրք, լրագիր և այլ անհրաժեշտ իրեր արտադրէին:

Նման օրինակների թիւը կարելի է անվերջ մեծացնել, բայց հարցի լուսաբանման համար այսքանն էլ բաւական է:

Գիւղացու համար մի բան պէտք է պարզ լինի, այն, որ երկրագործութեան առաջադիմութիւնը առանց գործարանային արդիւնաբերութեան միանգամայն անհնարին է: Այդ առաջադիմութիւնից է, որ կախած է գիւղացու տնտեսական և հոգեկան կեանքի բարելաւումը: Բայց ինչպէս է կայանում այդ առաջադիմութիւնը: Սոցիալ-դեմոկրատիայի տեսակէտից, հասարակական կեանքի ամեն մի առաջադիմութիւն պայմանաւորւում է նախ և առաջ արտա-

դրողական ուժերի աճումով: Գիւղացին չի կարող ոչ կուշտ լինել և ոչ էլ կրթւած, մտաւորապէս զարգացած, մինչև որ տնտեսապէս չի ապահովւի: Իսկ տնտեսապէս կապահովւի, երբ նրա ամեն մի դեսեատին հողը 3—4 անգամ աւելի բերք կը տայ, քան այսօր, երբ նրա ամեն մի կովը նոյնպէս մի քանի անգամ աւելի կաթ ու միս կը տայ, քան այսօր:

Այս հանգամանքն է, որ հողային հարցի լուծման մէջ սոցիալ-դեմոկրատիան ամենից առաջ նկատի է առնում: Հարցին պէտք է մի այնպիսի լուծում տալ, որ նրա հետեւանքը երկի արտադրողական ուժերի աճումը լինի—ահա սոցիալ-դեմոկրատիայի ելակէտը:

Մեր կուսակցութեան ամբողջ ծրագիրը այս հիմունքների վրայ է դրած: Ժողովրդի շահերի տեսակէտից լաւ, օգտաւէտ և առաջադիմական է համարելու այն տնտեսական ու քաղաքական փոփոխումները միայն, որոնք դէպի արտադրողական ուժերի աճումը, դէպի երկրի ընդհանուր հարստացումն են տանում: Հողային հարցումն էլ սոցիալ-դեմոկրատիան ամբողջովին այդ սկզբունքով է ղեկավարւում, ձգտելով հարցին մի այնպիսի լուծում տալ, որը համապատասխանէր արտադրողական ուժերի զարգացման ներկայ աւտիճանին և նրանց օգտագործումը հնարաւոր դարձնէր:

Մեր ապրած ժամանակը մասնաւոր սեփականութեան մի դարաշրջան է թէ քաղաքում և թէ գիւղում: Չկայ և ոչ մի ուժեղ հոսանք, որը սոցիալիստական հասարակութեան իրականացումը, հետեւապէս և մասնաւոր սեփականութեան վերացումը ներկայումս հնարաւոր համարէր: Ինչպէս վերև տեսանք, երկրագործութեան առաջադիմութիւնը առանց գործարանային արդիւնաբերութեան անհնարին է: Առանց քաղաքի օգնութեան դիմելու, իր բարբարոսական նիստ ու կացից, տնտեսական կեանքի հնադարեան եղանակներից գիւղը երբէք աղատել չի կարող: Իսկ մասնաւոր սեփականութեան վերացումն մի այնքան խոշոր սոցիալական յեղաշրջում է, որ իրագործել այդ միայն գիւղում, միայն հողի վերաբերմամբ սոցիալ-դեմոկրատիան անհնա-

բին է համարում: Դա կը նշանակէ անտես առնել երկրագործութեան կախումը գործարանային արդիւնաբերութիւնից և ենթադրել, որպէս թէ մեր անտեսական կեանքում գիւղատնտեսութիւնը բոլորովին առանձին ճիւղ է կազմում, որը անտեսական կեանքի միւս ճիւղերի հետ կապւած չէ, կարող է առաջադիմել և բաւականանալ միայն իր ներքին ուժերով:

Տնտեսական կեանքը մի ամբողջութիւն է կազմում ոչ միայն Ռուսաստանի սահմաններում, այլև բոլոր կապիտալիստական երկրներում՝ միասին վերցրած: Եւ Ռուսաստանի գիւղատնտեսութեան վիճակը կախում ունի ոչ միայն մեր երկրի գործարանային արդիւնաբերութիւնից: Խնչպէս զարգացած մարմնի մասերը առանձին-առանձին իրենց գոյութիւնը պահպանել չեն կարող, ինչպէս կենդանու գլուխը առանց գլխի երեւակայել չի կարելի, ինչպէս մեր մարմնի առանձնացրած մասերը իսկոյն մեռնում են, այնպէս էլ հողի մասնաւոր սեփականութեան վերացումն անհնարին է, մինչև որ արտադրութեան բոլոր միւս միջոցները դեռ մասնաւոր սեփականութիւն են կազմում, իսկ եթէ որևէ հրաշքով կապիտալիստական երկրում հնարաւոր եղաւ նման արմատական փոփոխում մտցնել, դրա հետևանքն այն կը լինի, որ առաջադիմելու փոխարէն գիւղատնտեսութիւնը կը յետադիմի, ուղղակի արիւնաքամ կը լինի:

Սոցիալ դեմոկրատիան բոլոր շահագործւողների ու ճնշւածների կուսակցութիւնն է: Սոցիալիստական յեղափոխութիւնը ներկայումս անհնարին համարելով, մեր կուսակցութիւնը ձգտում է ներկայ յեղափոխութեան միջոցով գիւղում և քաղաքում այնպիսի կարգեր հաստատել, որ աղքատակութեան շահագործւող տարրերը դասակարգային կուի կատարեալ ազատութիւն վայելեն, կարողանան կազմակերպել, գիտակցութեան գալ, իրենց դրութիւնը բարւոքել և սոցիալիստական յեղափոխութիւնը կատարելու պատրաստութիւններ տեսնել: Տնտեսական շահագործումն ու քաղաքական ճնշումը մինչև մեր վերջնական նպատակի իրականացումը գոյութիւն են ունենալու թէ քաղաքում և թէ գիւղում: Այս պատճառով էլ սոցիալ դեմոկրատիան—

հողային բարենորոգումների հետ միասին—շատ մեծ նշանակութիւն է տալիս այն քաղաքական-հասարակական բարենորոգումներին, որ գիւղացու կիսաճորտային կացութեանը վերջ են դնելու և նրան ազատ քաղաքացու բոլոր իրաւունքները տալու:

Նախորդ նամակներում այդ պահանջների վրայ բաւականաչափ կանգ առանք և այստեղ մեզ մնում է է ասել միայն, որ առանց այդ քաղաքական պահանջների իրականացման գիւղացիութիւնը չի կարող հող ձեռք բերել իսկ հողը ձեռք բերելու դէպքում նրանից կանոնաւոր օգտւելը անհնարին կը լինի: Ռէակցիան այսօր արդէն գլուխ է բարձրացրել և հայ գիւղացիութեան յեղափոխական մասը պէտք է լաւ իմանայ, որ եթէ ամբողջ Ռուսաստանի գիւղացիութեան և բանւորութեան հետ նա չմիանայ և ձեռք բերած քաղաքական դիրքերը չպաշտպանի, հողային հարցի լուծումն էլ անհնարին կը լինի: Տնտեսական բարենորոգումները քաղաքական բարենորոգումներից բաժանել չի կարելի. մեր կեանքը մի ամբողջութիւն է կազմում և նրանք երկուսն էլ այդ ամբողջի արտայայտութիւններն են, միայն թէ տարբեր եղանակներով:

Երբ հողային հարցի լուծման նախապայմանները իրականացած կը լինեն, նախապատրաստական աշխատանքները կատարած, գիւղացիութիւնը անմիջապէս կանցնի իրեն ամենից շատ զբաղեցնող հարցի—հողային հարցի լուծմանը, որ տեղի է ունենալու Հիմնադիր Ժողովում:

Խնչ դիրք է բռնելու այդ հարցում սոցիալ-դեմոկրատիան:

Նամակ XII

Կալաճատիրական հողերի գրաւումը

Մինչև օրս էլ յաճախ այն պապական տեսակէտին ենք հանդիպում, որպէս թէ հողը մասնաւոր սեփականութիւն կազմել չի կարող, որովհետեւ օգի ու ջրի նման նա էլ աստ-

ւածային մի պարզեւ է: Սոցիալ-դեմոկրատիան կարծում է, որ հողը չի կարելի համեմատել ոչ ջրի, ոչ էլ մանաւանդ օդի հետ: Դրա լուսադոյն ապացոյցը հէնց Ռուսաստանի հողերն են: Այսօր երկրագործութեան համար պիտանի դարձրած ահագին տարածութիւններ դարեւ առաջ ծածկուած են եղել անտառներով, թփերով ու ճահիճներով: Հարիւրաւոր տարիներ շարունակ տասնեակ սերունդներ օր ու գիշեր աշխատել, քրտինք են թափել, հողը անտառներից, բարից ու աւազից ազատել, ճահիճները չորացրել, և այդպիսով բնութիւնից նւաճած հողամասերը մշակել, ոռոգել ու պարարտացրել: Ռուսաստանի դաշտերը այդ դարաւոր տաժանակիր աշխատանքի հետեանքն են: Սոցիալ-դեմոկրատիան ձգտում է, որ աշխատանքի պտուղները իրենք աշխատաւորներն էլ վայելեն: Պարզ է, որ ամբողջ ժողովրդի բրտնակոխ աշխատանքի արդիւնք կազմող հողը այդ ժողովրդին էլ պէտք է պատկանի:

Սոցիալ-դեմոկրատիան սեփականագործի անելու հիմքերից մէկն է սա, բայց ոչ գլխաւոր հիմքը: Գիւղացիութեան պատմական իրաւունքն է՝ իր սեփականութիւնը իր ձեռքն առնել: Հողերի էքսպրոպրիացիան այդ պատմական իրաւունքով կարելի է միայն արգարացնել, բայց ոչ հիմնաւորել: Առհասարակ պատմական կամ բարոյական իրաւունքը գործունէութեան մի չափազանց սայթաքուն հող է ներկայացնում և բացառապէս նրա վրայ հիմնել սոցիալ-դեմոկրատիան չի կարող: Կարծում ենք, ընթերցողի համար պարզ պէտք է լինի, որ որոշ պարագաներում այդ պատմական արգարացումը կարող է և բացակայել:

Սոցիալ-դեմոկրատիան յեղափոխական կուսակցութիւն է, որ դէպի ժողովրդի բարեկեցութիւնն է ձգտում: Նրա տեսակէտից, արդարացի, բարոյական և անհրաժեշտ է ամեն մի քայլ, որ մեզ դէպի բարեկեցութիւն, դէպի արտադրողական ուժերի աճումն է տանում:

Հարցին այդ տեսակէտից մօտենալով, սոցիալ-դեմոկրատիան գտնում է, որ կալւածատիրական և պետական հողերը ժողովրդի ձեռքն անցնելու դէպքում այսօրւանից աւելի լաւ կը շահադորձեն, ժողովրդի գոյութեան միջոց-

ները դրանով նշանաւոր չափերով կաճեն և գիւղացիութիւնը կազատւի այն ահագին հարկից, որ վճարում է ներկայումս կալւածատէրերին: Յեղափոխութեան առաջ ոչ թէ բարոյական, այլ գոյութեան, առաջագիմութեան հարցեր են դրած, որոնց լուծումը միայն ուժեղ դասակարգային կազմակերպութիւնների և յամառ կոււի միջոցով է հնարաւոր:

Սոցիալ-դեմոկրատիան արամագրութեան տակ եղած ամբողջ քաղաքական և տնտեսական զօրութիւնը պէտք է դեմոկրատիզացիայի ենթարկւի, այսինքն՝ ժողովրդի ձեռքն անցնի—ահա ինչ է պահանջում սոցիալ-դեմոկրատիան, ամենց երկար ու բարակ կանգ առնելու տիրացուական այնպիսի հարցերի վրայ, թէ այդ քայլը ինչքան արդարացի կամ բարոյական է: Ժողովրդի բարեկեցութիւնը, նրա գեղեցիկ ապագան այն միակ օրէնքն է, որով սոցիալ-դեմոկրատիան ղեկավարւում է իր ամբողջ գործունէութեան մէջ:

Ահա ինչու մեր կուսակցութիւնը պահանջում է՝ գրաւել ըլոր եկեղեցական, վանքական, կայսերական տանը եւ անձամբ կայսրին պատկանող, պետական եւ մասնատիրական հողերը, բացի մանր հողատիրութիւնից:

Մանր հողատէրերին սեփականագործի անելը սոցիալ-դեմոկրատիան անսպասակայարմար է գտնում, որովհետեւ երկրի տնտեսական կեանքը դրանով մի քայլ անգամ չի առաջագիմի, այն ինչ յեղափոխութիւնը կարող է չափազանց տուժել: Բազմամիլիոն մանր հողատէրերը յեղափոխութեան կատաղի թշնամիներ կը դառնան, իմանալով, որ այդ յեղափոխութեան հետեանքներից մէկը իրենց սեփականադրութիւնն է լինելու: Հին կարգերը նախ և առաջ խոշոր հողատիրութեան վրայ էին հենւում և յեղափոխութեան գլխաւոր հարւածը պէտք է այդ հողատիրութեան դէմ ուղղած լինի: Կոխը նրա դէմ չափազանց դժւար է և իր յաջողութեան համար պահանջում է, որ բոլոր դեմոկրատիկ ուժերը միացած լինեն: Իսկ եթէ ասպարէզի վրայ դրւի մանր հողատէրերի սեփականագրկումը, վերջիններս անմիջապէս ռեակցիոն ուժերի կողմը կանցնեն և յեղափո-

խական բանակի շարքերը ուժեղացնելու փոխարեն՝ ուժակցիայի շարքերը կուժեղացնեն:

Սոցիալ-դեմոկրատիայի ծրագրով Հիմնադիր ժողովը որոշում է միայն, որ պէտք է գրաւել բոլոր վերոյիշեալ հողերը, իսկ թէ գրաւման գործում հողատիրութեան ինչ նազագոյն չափի վրայ պէտք է կանգ առնել, այդ հարցի լուծումը տեղային ինքնավարութեան մարմիններին է յանձնուում: Որոշ տարածութեան հողաբաժին, որ սե-հողային շրջանում կարելի է գրաւման ենթարկել, մի այլ շրջանում կարող է այնքան վատ որակի լինել, որ գիւղացու անհրաժեշտ պահանջներին հազիւ բաւարարի: Ռուսաստանը ոչ միայն չափազանց լայնածաւալ երկիր է, այլև մի երկիր, որի զանազան շրջաններում հողը հաւասարապէս պտղաբեր չէ կամ միատեսակ չի շահագործուում: Այս պատճառով էլ գրաւման ենթակայ հողերի նազագոյն չափը պէտք է երկրի ամեն մի շրջանի համար առանձնապէս որոշել: Սա մի շատ բարդ հարց է, որի լուծումը կենտրոնական օրէնսդրական մարմնի ուժերից վեր պէտք է համարել: Տեղային ժողովուրդն է միայն, յանձինս իր դեմոկրատիկ ինքնավարութեան մարմինների, որ նման հարցերին կարող է հնարաւորապէս անսխալ լուծում տալ:

«Գրաւումը» ենթադրում է, որ կալածատէրերից հողը վերցնելու է առանց որևէ վարձատրութեան: Սկզբունքով, այդ հողերի համար սոցիալ-դեմոկրատիան որևէ վճարում չի էլ կարող ընդունել, քանի որ այդ կուսակցութեան տեսակէտից հողը և երկրի բոլոր միւս հարստութիւնները ամբողջ ժողովրդի աշխատանքի հետեանք են և նրա սեփականութիւն պէտք է կազմեն: Դեմոկրատիան այսօր այնքան ուժեղ է, որ 1861 թւի ազատագրման տխուր օրինակի կրկնութիւնը չի կարող հանդուրժել: Ինչպէս յայտնի է, 1861 թ. Ռուսաստանի գիւղացին իր ազատութիւնը շատ թանգ գնով ձեռք բերեց:

Ստացած հողի և ազատութեան համար մինչև 1906 թիւը նա վճարել է մօտ 1600 միլիոն ռուբլի: Ներկայ յեղափոխութեան յաղթանակը գիւղացիութեան համար ամենից առաջ այն նշանակութիւնը կունենայ, որ խոշոր կալ-

ւածատէրերի 500-ից մինչև 600 միլիոն ռուբլու հասնող տարեկան եկամուտը գիւղացիութեան ձեռքը կանցնի:

Սակայն, կայ մի հանգամանք, որ հարցի լուծումը չափազանց դժւարացնում է: Այստեղ մենք նկատի ունենք կալածատիրական հողերի վրայ ընկնող ահագին պարտքերը, մօտ 2300 միլիոն ռուբլի: 1914 թւի վերջում Ռուսաստանի զանազան բանկերում գրաւ էր դրած 145 հազար կալածք, մօտ 50 միլիոն դեսեատին տարածութեամբ, այդ հողերը գնահատած էին 4300 միլիոն ռուբլի: Հողատէրերը 2 միլիարդ 300 միլիոն ռուբլի փող են ստացել, բայց այդ փողն արդէն գոյութիւն չունի. նա ծախսւած է: Հարկւորաւոր տարիներ կալածատէրերը հողից օգտւել են և հողը դրաւ դնելով, նրա արժէքի կիսից աւելին (54 տոկոս) ստացել ու սպառել: Այդ պարտքը այնքան հսկայական է, որ հողերի գրաւումը շատ կալածատէրերի համար իսկական փրկութիւն կը նշանակի—դրանով նրանք մի ակնթարթում ազատուում են հողի վրայ ընկած բոլոր պարտքերից:

Բայց ինչ վիճակ է սպասում այն հիմնարկութիւններին և այն անձանց, որոնք վճարել են այդ միլիարդները: Նկատի առնելով Ռուսաստանի տնտեսական յետախնայութիւնն ու ժողովրդի աղքատութիւնը, հաստատ կարող ենք ասել, որ երկրի ֆինանսական ու տնտեսական կեանքում դա մի իսկական սառնամուկ, կատաստրոֆա կառաջացնէր: Եթէ այդ ահագին գումարները վճարած լինէին նոյն իսկ միայն բանկերը, այդ դէպքում էլ երկրի ֆինանսական, հետեապէս և ամբողջ տնտեսական կեանքին մի զարհուրելի հարած կը հասցնէր: Բայց հարցը նրանումն է, որ այդ գումարները բանկերը չեն վճարել, այլ բանկերի միջոցով աղգարնակութեան բոլոր տարրերը: Բանկերը բաց են թողնում գրաւատոմսեր (закладные листы) և նրանց վաճառումից ստացած գումարներով բաւարարում գրաւատէրերի պահանջները: Յայտնի է, որ այդ տոկոսաբեր տոմսերը մեծ քանակութեամբ ձեռք են բերում և աղգարնակութեան միջին դասակարգերը, յաճախ նոյնիսկ չունենոր մարդիկ, որոնք իրենց վերջին կողմէններով մէկ-երկու գրաւատոմս են գնում:

Եթէ Հիմնադիր Ժողովը այս հանգամանքը նկատի չառնի, նա գիւղացիներին հող կը տայ ի հաշիւ ոչ թէ կալւածատէրերի, այլ ազգաբնակութեան այն տարրերի, որոնք հողատիրութեան և գիւղացիների շահագործման հետ ոչ մի կապ չեն ունեցած: Բաւական է ասել, որ 1915 թւի վերջում Ռուսաստանի խնայողական դրամարկղներում 810 միլիոն ռուբլու գրաւատումս էր գտնուում, իսկ յայտնի է, որ այդ դրամարկղների գումարները մեծ մասամբ միջին կարողութեան տէր մարգկանց են պատկանում: Իրաւունքի, արդարութեան և նման բազմաթիւ այլ հարցեր մի կողմ թողնելով, իր որոշումները կայացնելիս Հիմնադիր Ժողովը չի կարող ամեն անգամ նկատի չառնել յեղափոխութեան շահերը: Գրաւատումսերի տէրերի մեծամասնութիւնը յեղափոխութեան բարեկամներ են և ոչ թէ նրա թշնամիներ: Բայց էթէ իրենց խնայողութիւններից նրանք զրկւելու լինեն, հաստատ կարելի է ասել, որ նրանց մի խոշոր տոկոսը հակայեղափոխականների բանակը կանցնի: Յեղափոխական կազմակերպութիւնների տակտիկան պէտք է այնպէս հաշւած լինի, որ նրանց ամեն մի քայլը յեղափոխութիւնը խորացնի, նրա կողմնակիցների շարքերը խտացնի և ոչ թէ պառակտումների ու անջատման հիմք ծառայի: Յեղափոխութեան շահերից բոլոր այս տեսակէտի վրայ կանգնելով, Հիմնադիր Ժողովը ստիպւած կը լինի զրաւման ենթակայ հողերի վրայ ընկնող բոլոր պարտքերի վճարումը պետութեանը յանձնել: Ուրիշ ելք չկայ:

Հիմնադիր Ժողովը յեղափոխական մարմին չէր լինի, եթէ այդ վճարումները գիւղացիութեան վրիզը փաթաթէր: Այդ դէպքում գիւղացիները հող գնած կը լինէին և ոչ թէ յեղափոխական ճանապարհով հող գրաւած: Հողերը պէտք է գիւղացիութեանն անցնեն առանց որևէ վճարումների, բայց որովհետև ինքնըստինքեան վճարումն—որպէս գրաւատումսերի տէրերի բաւարարում—անխուսափելի է, Հիմնադիր Ժողովը պէտք է մի այնպիսի ճանապարհ գտնի, որ իր ամբողջ ծանրութեամբ այդ վճարումը ունևոր դասակարգերի ուսերին բարդւի: Այդ ճանապարհն է՝ պարտքին համապատասխան գումարի փոխառութիւն կնքել, պարտքն

ամբողջապէս պետութեան վրա վերցնել և բարձր եկամտային ու գոյքային հարկ մտցնել, որի վճարումից ազգաբնակչութեան չունևոր տարրերը—տարեկան մօտաւորապէս 1000 ռուբլի եկամտով—ազատ լինէին: Գիւղացիների ճշնշող մեծամասնութիւնը այդքան եկամուտ չի ստանոււմ, այնպէս որ հողային պարտքերի վճարումը այդ մեծամասնութեանը չի դիպչի:

Պետական պարտքերի այդ նոր աճումը ցանկալի չէ ի հարկէ: Բայց Հիմնադիր Ժողովը ստիպւած կ'լինի երկու չարիքից փոքրագոյնը ընդունել: Երբ նրա առաջ հարց կ'ըլլէ՝ զրաւել կալւածատիրական հողերը և դրանով պետական պարտքի վրա նոր միլիարդներ աւելացնել, թէ պարտքից խուսափել ու գիւղացիութիւնը իր ներկայ ծանր կացութեան մէջ թողնել—ինչ կ'ասկած, որ Հիմնադիր Ժողովը առաջին ելքը կ'ընտրի, որպէս զի գիւղացիութեան գլխաւոր պահանջը բաւարարած լինի:

Այժմ տեսնենք, թէ զրաւած հողերից ով և ինչպէս պէտք է օգտւի:

Նամակ XIII

Դրաւած հողերից ինչպէս կ'արելի է օգտել:

Հողերի զրաւումով հարցը դեռ չի լուծոււմ: Գիւղացիութիւնը պէտք է նախօրօք իմանայ, թէ ձեռք բերած հողերը ինչպէս պէտք է բաժանել ու մշակել, որպէս զի նրանցից հնարաւորապէս բարձր օգուտ քաղած լինի և իր ոյժերը չվատնի: Սա մի դուռ տնտեսական, գործնական հարց է, որի լուծումը կախած է ամբողջովին տեղի և ժամանակի պայմաններից:

Ռուսաստանը չափազանց լայնածաւալ երկիր է, որի զանազան շրջաններն ունեն տարբեր կուլտուրաներ ու տարբեր պատմական անցեալ, հողատիրութեան և երկրագործութեան տարբեր եղանակներ: Հողը գիւղացիների մէջ հաւասար չէ բաժանած, ամենուրեք միևնոյն տեսակի չէ,

կլիմայի, ջրի և հաղորդակցութեան ճանապարհների վերաբերմամբ ամենուրեք միևնույն պայմաններում չի գտնուում։ Հողային հացի այն լուծումը, որ Հիւսիսային Ռուսաստանի կամ Սիբիրի գիւղացիութեան համար կարող է շատ օգտաւէտ ու բարենպաստ լինել, Անդրկովկասի կամ Մալո-րոսիայի գիւղացիութեան շահերի տեսակէտից կարող է անօգուտ և վնասակար գուրս գալ։ Հետեւապէս, Հիմնադիր ժողովը ներկայ հարցում ինչ որոշում էլ ընդունի, երկրի ամբողջ գիւղացիութեան պահանջներին այդ որոշումով բաւարարել չպէտք է կարողանայ։ Հիմնադիր ժողովի ընդունած ամենալաւ որոշումն անգամ երկրի որոշ շրջանների վերաբերմամբ անիրագործելի կը մնայ, կամ այդ շրջանների գիւղացիութեանը օգնելու փոխարէն, նրա տնտեսութեանը դեռ որոշ հարւած կը հասցնի։

Երկրագործութեան մէջ և գիւղացիութեան կեանքում արմատական փոփոխումներ են կատարւելու, շարժման յաղթանակի դէպքում ամեն ինչ յեղաշրջւելու է։ Բայց երկնքից չէ, որ յեղափոխութիւնը վայր է ընկնում։ Նա տեւալ երկրի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական ամբողջ կեանքի առաջադիմութեան հետեւանք է և կարող է այն դէպքում միայն յաղթանակով պսակւել, երբ կեանքում խոր արմատներ ունի թողած։ Սոցիալ-դեմոկրատիան, օրինակ, սոցիալիստական կարգերի հաստատման է ձգտում, բայց իր այդ վերջնական նպատակի իրականացումն այսօր անհնարին է համարում, գտնելով, որ նման խոշոր յեղափոխութեան համար պատրաստի հող դեռ չկայ։ Հողային հարցի լուծմանն էլ նոյն տեսակէտից պէտք է մօտենալ, համոզւած լինելով, որ ամեն մի բարենորոգում այդ ասպարէզում կարող է յաջողութիւն ունենալ, եթէ նրա համար պահանջները նիւթական և հոգեկան պայմանները հասունացած են արդէն, եթէ երկրի տեւալ շրջանի բնակչութեան և տնտեսական կեանքի համար նա մի անհրաժեշտ առաջադիմական քայլ է հանդիսանում։ Ինչպէս բնութեան մէջ ամեն մի պտուղ երկար ու ձիգ աճման կամ զարգացման արդիւնք է ներկայացնում, այնպէս էլ յեղափոխութիւնը տեւալ երկրի ամբողջ նախընթաց պատմութեան հետեւանք է և պայմանաւորւում է այդ պատմութեան ժառան-

գութիւն կազմող նիւթական ու բարոյական հարստութիւններով։ Ինչպէս ամեն մի պտուղ ենթադրում է կոկոն, ծաղիկ և տնունդ իր աճման համար, այնպէս էլ յեղափոխութիւնը ենթադրում է, որ—մինչև նրա ծագումը—երկրում նրանից ունեցած սպասելիքներին համապատասխան առաջադիմութիւն է տեղի ունեցել։ Այլ կերպ անողք պատմութիւնը ամեն մի հասարակական շարժում էլ պարտութեան է դատապարտում։

Կեանքում ամեն ինչ պէտք է հող ունենայ, արմատներ թողած լինի։ Ամենահմուտ այգեպանն անգամ չի կարող խնձորի ծառից խաղող ստանալ, կամ խաղողի թփից նարինջ։ Հարցն այստեղ ոչ թէ լաւ ու վատի, ոչ թէ ցանկութիւնների ու ձգտումների, այլ հնարաւորութեան մէջն է։

Հողային խնդրում էլ սոցիալ-դեմոկրատիան այդ նոյն տեսակէտով է դիւրաւարւում։ Նա պահանջում է, որ Հիմնադիր ժողովը լուծի այդ հարցը ընդհանուր առմամբ, լայն շրջանակներում, վերջնականապէս որոշելով հարցի այն կողմերը, որ ընդհանուր են ամբողջ երկրին, ընդունելի ամբողջ գիւղացիութեան կողմից։ Հիմնադիր ժողովը պէտք է հաստատ հիմքերի վրայ դնի և վերջնականապէս որոշի հողերի գրաւման անհրաժեշտութիւնը յօգուտ գիւղացիութեան, առանց որ և է վճարումների, իսկ ինչ վերաբերում է գրաւած հողերից օգտւելու եղանակին, սոցիալ-դեմոկրատիան կարծում է, որ այդ հարցի լուծումը Հիմնադիր ժողովի ուժերից վեր է, քանի որ հողատիրութիւնը և երկրագործութիւնը Ռուսաստանի զանազան շրջաններում չափազանց տարբեր պայմաններում են գտնուում։ Այս պատճառով էլ մեր կուսակցութիւնը աւելի նպատակայարմար է գտնում, որ հողի գրաւումը կատարւելուց յետոյ երկրի ամեն մի շրջանում ազգաբնակչութիւնը ինքը որոշի, թէ ձեռք բերած հողերի հետ ինչպէս վարւել։ Ի հարկէ, որևէ խոշոր շրջանի կամ նահանգի ամբողջ ժողովուրդը չի կարող մի տեղ հաւաքւել, բայց ամենամօտ ապագայում արդէն ամենուրեք կը ստեղծւեն տեղային ինքնավարութեան խոշոր մարմիններ, որոնց և կը յանձնւի մեզ զբաղեցնող հարցի լուծումը։ Այդ մարմինների ընտրութիւնը կը կատարւի ա-

մենալայն և ամենադեմոկրատիկ ընտրական օրէնքի հիման վրայ, նրանց գործունէութիւնը տեղի կունենայ քաղաքական ազատութիւնների միջնորոտում, գիւղացիութեան անմիջական հսկողութեան տակ, այնպէս որ իրենց կազմով և աշխատանքով նրանք անպայման կը ներկայացնեն տեւալ շրջանի ազգաբնակչութեան կամ այլ կերպ ասած իրենց ընտրողների իղձերն ու ցանկութիւնները: Իսկ որովհետեւ այդ ընտրողների մեծամասնութիւնը Ռուսաստանի բոլոր շրջաններում հէնց իրենք գիւղացիներն են կազմում, այստեղից ամենքի համար էլ պարզ պէտք է լինի, որ դեմոկրատիկ հիմունքներով ընտրած տեղային ինքնավարութեան մարմինները չեն կարող չարտայայտել գիւղացիների մեծամասնութեան ձգտումները, նրանց ցանկութիւնների թարգման չհանդիսանալ:

Սոցիալ-դեմոկրատիայի ծրագրով, տեղային ինքնավարութեան խոշոր մարմիններն են միայն, որ կարող են հնարաւորապէս անսխալ որոշել թէ գրաւման ենթակայ հողամասերի նազազոյն չափը և թէ գրաւած հողերից օգտուելու եղանակը:

Ռուսաստանի գիւղացիութեան մէջ ամենատարածւած հողատիրական սխառեմն է համայնական հողատիրութիւնը, բայց երկրում կան և ահագին շրջաններ, ուր տիրող է հանգիստնում գիւղացիական մասնաւոր սեփականութիւնը: Թէեւ համայնքը երկրի շատ շրջաններում արդէն քայքայման և կազմալուծման շէմքին է կանգնած, բայց և այնպէս պէտք է ենթադրել, որ գիւղացիութեան մի խոշոր տոկոսը դեռ յօգուտ հողատիրութեան այդ եղանակի ձայն կը տայ: Նման շրջաններում էլ համայնքը կը շարունակի իր գոյութիւնը: Բայց դժւար է ենթադրել, որ յօգուտ համայնական հողատիրութեան որոշում կը կայացնէր երկրի այն շրջաններում, ուր մասնաւոր հողատիրութիւնն է տիրող հանդիսանում, ուր գիւղացին համայնքի մասին գաղափար չունի, հողատիրութեան այդ եղանակի հետ գործնականապէս ծանօթ չէ և հոգեբանօրէն նրան օտար է: Ինչ կասկած, որ նման շրջաններում տեղային ինքնավարութիւնը հողի մասնաւոր սեփականութիւնից համայնական սեփականութեան չի անցնի:

Իրաւած հողերը տեւալ շրջանի ամբողջ ազգաբնակչութեան սեփականութիւն են կազմելու և ոչ թէ անհատների կամ համայնքների սեփականութիւն: Տեղային ինքնավարութեան խոշոր մարմիններն են որոշում, թէ այդ հողերի հետ ինչպէս վարել: Կան կալւածատիրական հողեր, որ գիւղացիները տասնակ տարիներ շարունակ կապալով վերցրել, շահագործել են: Շատ հողաբաժիններ այդ ժամանակամիջոցում միևնոյն ձեռքերում են գտնւել, այնպէս որ փաստօրէն այդ հողի տէրը գիւղացին է եղել, բայց իրաւաբանօրէն ոչ ձևակերպւած: Պէտք է ենթադրել, որ տեղային ինքնավարութեան մարմինները այդ հողերը այն գիւղացիներին կը յանձնեն, որ նրանց երկար ժամանակ մշակել են: Մի ուրիշ տեղ կալւածատէրը կարող էր սեփական տնտեսութիւն վարել, իր կենդանիներով և մեքենաներով: Եթէ նման շրջանում գիւղացիները իրենց աղքատութեան շնորհիւ սեփական տնտեսութիւն վարել չեն կարող, կամ եթէ գրաւած հողը այնքան քիչ է, որ բոլոր հողազուրկ և սակաւահող գիւղացիներին նազազոյն չափերով անգամ չի ապահովի, ամենից հնարաւորն այն է, որ տեղային ինքնավարութեան մարմինները այդ հողերի վրայ սեփական տնտեսութիւն կը վարեն, իրենց կենդանիներով և մեքենաներով: Վերջիններից զուրկ գիւղացիութիւնը սեփական տնտեսութիւն ունենալ չի կարող, բայց ինքնավարութեան մարմինների կազմակերպած տնտեսութիւններում աշխատանք կը գտնի: Որովհետեւ այդ մարմինները դեմոկրատական են լինելու և գլխաւորապէս գիւղացիների ձայներով ընտրած, պարզ է, որ այդ տնտեսութիւններում աշխատող գիւղացիների դրութիւնը հնարաւորութեան սահմաններում ապահովւած կը լինի: Իսկ եթէ տեղային ինքնավարութեան մարմինների համար սեփական տնտեսութիւն վարելը այս կամ այն շրջանում դժւար կամ անհնարին կը լինի, այդ դէպքում նա կը յարմարի տեղային պայմաններին: Եթէ տեւալ շրջանի գիւղացիները գրաւած հողերը շահագործելու հնարաւորութիւն ունենան, այդ հողերը նրանց էլ կը յանձնեն, որոշ կապալարձով ինարկէ: Հսկառակ դէպքում, խոշոր հողաբաժիններ կարելի է կա-

պիտալիստներին կապալով տալ: Բոլոր պարագաներում էլ կապալավարձը և մոնիցիպալ տնտեսութիւնից ստացած ամբողջ եկամուտը կը ծախսուի տեւալ շրջանի տնտեսական ու կուլտուրական առաջադիմութեան գործի վրայ:

Երկրագործութիւնը միւսնոյն մեծած կէտի վրայ կանգնած մնալ չի կարող: Յեղափոխութիւնից յետոյ նա խոշոր և արագ փոխոխումներ է ենթարկելու, որոնց համապատասխան կը փոփոխեն և հողատիրութեան պայմանները: Այս տեսակէտից էլ մոնիցիպալիզացիան լաւագոյն ելքն է հանդիսանում: Շատ գիւղացիներ այնքան մաւր հողաբաժիններ ունեն այսօր և յեղափոխութիւնից յետոյ էլ կուսենան, որ նրանց վրայ տնտեսութիւն վարելն անհնարին է: Նրանք կը գերազասեն իրենց հողաբաժինը տեղային ինքնավարութեան մարմիններին յանձնել կամ մշակելու համար նրանցից կապալով հող վերցնել:

Կարելի է ենթադրել և մի այլ դէպք, երբ գրաւած հողերը աշխարհագրականօրէն այնպէս են դասաւորած և այնքան մեծ տարածութիւն են բռնում, որ գիւղացիներին նրանցից լրացուցիչ հողաբաժիններ տալով, հողի քանակի տեսակէտից նրանց տնտեսութիւնն արդէն ապահոված կը լինի: Հաւանօրէն, նման շրջաններում գրաւած հողերը կը բաժանուեն սակաւահող գիւղացիներին մէջ:

Ռուսաստանի նման բնական և հասարակական այնքան տարբեր պայմաններ ունեցող երկրում հողային հարցը բոլոր շրջաններին համար միատեսակ լուծել չի կարող: Ամեն անգամ անհրաժեշտ է նկատի առնել տեւալ երկրամասի պայմանները, նրա ազգաբնակչութեան պահանջներով դեկավարել: Սոցիալ դեմոկրատիան պնդում է, որ այդ նըպատակին հասնելու լաւագոյն միջոցը՝ հողերի մոնիցիպալիզացիան է, այսինքն նրանց յանձնումը տեղային ինքնավարութեան մարմիններին ի կարգադրութիւն: Իսկ համապետական նշանակութիւն ունեցող անտառները, ջրերը և գաղթականական ֆոնդի համար անհրաժեշտ հողերը դեմոկրատական պետութեանն են յանձնուում: Խնդրի լուծման այս եղանակը այն առաւելութիւնն ունի, որ երկրի ոչ մի շրջանում նա չի կարող գիւղացիութեան շարքերում դժգո-

հուժիւն առաջացնել և ամենուրեք համապատասխանելու է տեւալ երկրամասի տնտեսական առաջադիմութեան պահանջներին ու շահերին: Հարցի միատեսակ լուծումն ամբողջ Ռուսաստանի համար վտանգաւոր է շարժման յաղթանակի տեսակէտից: Յեղափոխութեանը օգնելու փոխարէն, նման ընդհանուր լուծումից դժգոհ գիւղացիք յեղափոխութիւնից հետո կը քաշեն կամ որոշ պայմաններում կարող են նոյնիսկ յետադէմ ուժերի ձեռքն ընկնել ու նըրանց հետ միասին յեղափոխութեանը կռիւ յայտարարել:

Հողերը տեղային ինքնավարութեանը յանձնելու եղանակը, կամ նրանց մոնիցիպալիզացիան հարցի լուծման ոչ միայն ամենանպատեալ շարժման, այլ և ամենադեմոկրատիկ եղանակն է—ամեն մի շրջանի ժողովուրդ ինքն է որոշում, թէ գրաւած հողերը ինչպէս շահագործել:

Գիւղացիներին իր այս հողային ծրագիրն առաջարկելով, սոցիալ-դեմոկրատիան յայտարարում է, որ ինչպէս բանւորի դրութիւնը՝ նրանց դրութիւնն էլ ներկայ յեղափոխութիւնից յետոյ որոշ չափով կը բարւոքի, բայց որ նըրանք իրենց վրայ ծանրացող տնտեսական ու հասարակական ճնշումից դեռ չեն ազատուի: Տնտեսական հաւասարութիւն միայն սոցիալիստական յեղափոխութիւնը մեղ կը տայ և այս պատճառով սոցիալ-դեմոկրատիան կոչ է անում բոլոր չունևոր, շահագործող գիւղացիներին՝ օգտուել ներկայ յեղափոխութեան շնորհիւ ձեռք բերած քաղաքական ազատութիւններից և տնտեսական բարւոքումից, յանուն ապագայ մեծ սոցիալիստական յեղափոխութեան կազմակերպելու և կռիւի համար:

Հաւասարութիւնն ու ազատութիւնը նախ և առաջ տնտեսական պէտք է լինեն, իսկ տնտեսական հաւասարութեան մասին երազել անգամ չի կարելի մի հասարակութեան մէջ, ուր մասնաւոր սեփականութիւն է տիրում: Դժբաղդաբար գիւղացիութեան համար, գրաւած հողերի հաւասար բաժանումն էլ միանգամայն անհնարին է: Կան հաւասար բաժանումն էլ միանգամայն անհնարին է: Կան գաւառներ, ուր մի դեսեատին գրաւելու հող չէք գտնի, այնպէս որ հողատիրութեան տեսակէտից նման գաւառների գիւղացիութեան դրութիւնը յեղափոխական շարժման շնոր-

հիւ փոխել չի կարող: Ռուսաստանի մօտաւորապէս կիսում հողագութիւնը և սակաւահող գիւղացիներին թիւն այնքան մեծ է, որ գրաւման ենթակայ բոլոր հողերով նրանց տալահովելն անհնարին է: Միայն մի քանի շրջաններում հողի այնքան մեծ տարածութիւններ են գրաւելու, որ այդ շրջանների գիւղացիութիւնը հողով կատարելապէս կապուհովի, բայց և այնպէս այդտեղ էլ եթէ տեխնիքապէս հնարաւոր եղաւ բոլորին հաւասար հողաբաժիններ տալ, մի քանի տարուց յետոյ այդ հաւասարութիւնը կը խախտուի: Յամենայն դէպս, հաւասարութիւնը կարող է իրագործուել ժամանակաւորապէս և այն էլ որոշ շրջանների վերաբերմամբ, իսկ ամբողջ երկրում նա անհնարին է: Դրա համար հարկաւոր կը լինէր Ռուսաստանի բոլոր գիւղերն ու քաղաքները քանդել և հողը նորից բաժանել՝ ազգաբնակչութեան թւին համապատասխան:

Ռուսաստանում մօտաւորապէս 30 միլիոն գետնաթիւն գրաւելիք հող կայ, որ ընդունակ է մշակման: Դոյութիւն ունեցող հողային պահանջի հետ համեմատած, այդ տարածութիւնը չափազանց անբաւարար է: Բայց եթէ մի բոլե ենթադրենք, որ հողի աւելի մեծ պաշար գոյութիւն ունի և որ նրանով հնարաւոր է բաւարարել բոլոր սակաւահող և հողագութիւն գիւղացիներին, այդ դէպքում էլ կը տեսնենք, որ միայն հողի քանակով խնդիրը չի լուծուում: Ազգաբնակչութեան աճումը ամենամօտ ապագայում այն հետեւանքը կունենայ, որ կրկին հողի պակասութիւն կը զգացուի: Յայտնի է, որ իրենց պատմութեան արշալոյսին բոլոր հողագործ ժողովուրդներն էլ հողի մեծ պաշար են ունենում, բայց և այնպէս հողի առատութիւնը նրանց անտեսապէս չի ապահովում, որովհետեւ հողից օգտուել, նրան կանոնաւոր մշակել նրանք դեռ չեն իմանում: Նոյնը պէտք է ասել և մեր գիւղացիութեան վերաբերմամբ: Նա էլ դեռ չի իմանում, թէ հողի խորքերում թաքնւած բոլոր ուժերը ինչպէս օգտագործել, հողից ստացւող բերքը ինչպէս կրկնապատկել ու եռապատկել: Հողի մեծութիւնը երկրագործութեան մէջ շատ մեծ նշանակութիւն ունի, բայց և այնպէս գիւղացին քաղ-

ցած կը մնայ, եթէ իր ամբողջ յոյսը հողի տարածութեան և ընական ուժերի վրայ դնէ: Իր արեւմտեան եղբայրներին հաւասարելու, մի գետնաթիւնից 120—150 փութ ցորեն ստանալու համար Ռուսաստանի գիւղացին պէտք է նրանց օրինակին հետեւի, հողի պարարտացումն ու մշակումը նոյն գիտական հիմքերի վրայ դնի, որոնցով ղեկավարուում են առաջադէմ երկիրների գիւղացիները: Ահա մի քանի օրինակ: Հողերի կանոնաւոր և առատ ոռոգման շնորհիւ բերքը կրկնապատկւում և եռապատկւում է: Ծոգիով շարժւող գութանը այնքան խորն է վարում, որ ազատում է բոյսը թէ ուժեղ խոնաւութեան և թէ երաշտի կործանիչ աղբեցութիւնից, միաժամանակ նա բոյսի արմատներին աւելի ճոխ սնունդ է մատակարարում և միայն այդ գութանով վարելը այն հետեւանքն է ունենում, որ բերքը կրկնապատկւում է: Ահագին տարբերութիւն կայ նոյնպէս ձեռքով և մեքենայով ցանելու մէջ: Վերջին դէպքում մի գետնաթիւն հողից 20—30 փութ աւելի բերք է ստացւում:

Այս օրինակներն այնքան պերճալիս են, որ մեկնութեան կարիք չկայ: Ամեն գիւղացու համար էլ պարզ է, որ մշակող հողերի տարածութիւնը կրկնապատկել կատարելապէս անհնարին է, բայց եւրոպայի օրինակը ցոյց է տալիս մեզ, որ այդ նոյն նպատակին կարելի է ուրիշ ճանապարհով հասնել—չոգեգութանի միջոցով, որի գործածութեան շնորհիւ, ինչպէս տեսանք, բերքը կրկնապատկւում է:

Կուսակցական ծրագրների մէջ լաւագոյնը այն ծրագիրը պէտք է համարել, որ ձգտում է բաւարարել չունեւոր դասակարգերի պահանջները, հիմնւելով ոչ թէ բարի ցանկութիւնների, այլ կեանքի առաջադիմութեան պայմանների վրայ:

Բաւական չէ պահանջներ մշակել, այլ պէտք է և նրանց իրականացման ուղիղ ճանապարհներ ցոյց տալ: Այդ տեսակէտից հարցին մօտենալով, տեսնում ենք, որ սօցիալ-դեմոկրատիայի գիւղացիական ծրագիրը միակն է, որ ոչ միայն գիւղացու ցաւ ու դարդերի արտայայտիչ է հանդիսանում, այլ և նրանց դարմանելու այնպիսի միջոցներ է ա-

ռաջարկում, որոնք կեանքի պահանջներին կատարելապէս համապատասխանում են:

Գրաւած հոգերի մունիցիպալիզացիան գրաւական է այն բանի, որ նրանք գիւղացիութեան թշնամիների ձեռքը չեն ընկնի, որ այս կամ այն կերպ նրանք անպայման կը շահագործւեն, շահագործումից ստացած եկամուտը ամբողջովին տւեալ շրջանի դեմոկրատիայի ձեռքը կանցնի և որ յեղափոխութեան ընթացքում Ռուսաստանի և ոչ մի շրջանում գիւղացիները յեղափոխութեան դէմ չեն զինւի: Մունիցիպալիզացիայի գլխաւոր առաւելութիւնը նրանում է կայանում, որ նրա իրականացման դէպքում ամեն մի շրջանի ազգաբնակչութիւն կատարեալ ազատութիւն է վայելելու ձեռք բերած հոգերի բաշխումը կամ շահագործումը այնպիսի շրջանակների մէջ դնելու, որոնք նրա տեսակէտից լաւագոյնը կը համարեն: Հոգերի մունիցիպալիզացիան հընարաւորութիւն է տալիս յարմարելու տւեալ շրջանի տնտեսական ու կուլտուրական կեանքի բոլոր պահանջներին: Նա հարցի լուծման ամենադեմօկրատիկ եղանակն է, քանի որ դեմօկրատիայի համար խոշոր կենսական նշանակութիւն ունեցող այդ խնդիրը հէնց իրեն՝ դեմօկրատիայի ձեռքն է յանձնում: Ժողովուրդը չի կարող իր չարը ցանկանալ, այնպէս որ երբ գրաւած հոգերը տեղային ինքնավարութեան խոշոր մարմիններին կը յանձնւին, վերջիններս նկատի կառնեն տեղային ազգաբնակչութեան բոլոր պահանջներն ու նրանց իրագործման միջոցները:

Ռուսաստանի նման լայնածաւալ ու տարրեր կուլտուրաներ ունեցող երկրում մունիցիպալիզացիան հողային խնդրի լուծման միակ եղանակն է, որ հակասութիւնների աղբիւր չի հանդիսայ, չունեւոր գիւղացիութեան շարքերում դժգոհութիւն չի առաջացնի: Մունիցիպալիզացիան մանաւանդ մեծ արժէք է ստանում, երբ գիւղացիական հարցը վերցնում ենք իր ամբողջ մեծութեամբ և ոչ թէ նրա մի մասը՝ հողային խնդիրը: Սա մի չափազանց կարևոր հարց է, որի վրայ հայ գիւղացիութիւնը մինչև օրս համարեա ուշադրութիւն չի դարձրել:

Հողային խնդրի լուծման լաւագոյն եղանակն անգամ գիւղացուն իր ներկայ անել դրութիւնից դուրս չի բերի, եթէ նրան չյաջողւի քաղաքական և կուլտուրական կեանքի աւելի բարձր մակարդակի հասնել և իր շուրջը գտնուող բոլոր բնական հարստութիւնները շահագործել: Հողային խնդիրը ընդհանուր գիւղացիական հարցի մի մասն է միայն:

Եւ երբ գործին այդ տեսակէտից մօտենանք, կը տեսնենք, որ գիւղացու գլխաւոր պահանջներին միայն մունիցիպալիզացիան կարող է բաւարարութիւն տալ: Վերցնենք օրինակի համար այն մասնատիրական անտառների շահագործման հարցը, որ նոյնպէս գիւղացիների ձեռքն են անցնելու: Նրանց բաժանումը գիւղացիների մէջ կատարեալ անմտութիւն է, քանի որ դա անտառների ոչնչացում կը նշանակէր: Անտառները չի կարելի և առանձին համայնքների յանձնել, որովհետեւ անտառային տնտեսութիւնը շատ մասնագէտների աշխատանք է պահանջում, իսկ ամէն մի գիւղական համայնք մասնագէտներ պահել չի կարող: Տեղային ինքնավարութեան խոշոր մարմիններն են միայն, որ կարող են գիտութեան ներկայիս պահանջներին համապատասխան անտառային տնտեսութիւն վարել և նրանից ստացած եկամտով տեղային ազգաբնակչութեան հազար ու մի կարիքներին ընդառաջ գնալ: Եթէ անտառային տնտեսութիւնը կանոնաւոր լայն հիմունքների վրա դրւի, ապաւանդող և հողագուրկ գիւղացիութեան համար աշխատանքի մի անընդհատ աղբիւր կը հանդիսանայ: Մունիցիպալիզացիայի նշանակութիւնը նոյնքան մեծ է և հոգերի ոռոգման գործում: Յայտնի է, որ մեր երկրում սակաւաջուր կամ ջրից զուրկ ահագին տարածութիւններ կան, որոնց ոռոգման գէպքում գիւղացու հողային ապահովումը նշանաւոր չափով կուժեղանար, բայց նոյնքան յայտնի է, որ այդ հոգերի ոռոգումը առանձին համայնքների ոյժից վեր է: Ներկայ գէպքում էլ տեղային ինքնավարութեան խոշոր մարմիններն են միայն, որ հարցին կարող են բաւարար լուծում տալ:

Երկրագործութեան հետ կապած միւս կարևոր խնդիրների ըննութիւնն էլ մեզ նոյն եզրակացութեանն է բե-

րում, այն է, որ գիւղացիական հարցի լուծման լաւագոյն եղանակը հողերի մօռնիցիպալիզացիան է:

Գիւղացիութիւնը պէտք է լաւ իմանայ, որ ներկայ յեղափոխութիւնը ճշշած դասակարգերի համար դրախտային պայմաններ չի ստեղծելու: Այդ դասակարգերի համար յեղափոխութեան գլխաւոր արժէքը նրանում է կայանում, որ նրանք գործունէութեան լայն ասպարէզ են ձեռք բերում, կուի ազատ պայմաններ ստանում: Բայց և այնպէս նոր կարգերը հաստատելուց յետոյ հնի ու նորի մէջ անհաղին անգունդ է գոյանալու: Գիւղացու տրամադրութեան տակ մօտ 80 միլիոն գետնատին հող է դրելու, որ ինքնըստինքեան նրա տնտեսական ապահովութեան մի խոշոր աճումն է նշանակում: Երկրի ընդհանուր կուլտուրական և տնտեսական առաջադիմութիւնը գիւղացուն հնարաւորութիւն կը տայ իր հողերը նոր եղանակով մշակել ու պարարտացնել, միջադպային շուկայում եղած բոլոր երկրագործական մեքենաներն ու գործիքները իր շահերին ծառայեցնել: Տնտեսական և կուլտուրական կեանքում գիւղացին յեղափոխութիւնից մեծ սպասելիքներ կարող է ունենալ, իր դասակարգային կուի ասպարէզում մեծ յաղթանակներ տանել:

Գիւղացու դրութեան բարւոքումը պակաս նշանակութիւն չունի և պրոլետարիատի համար: Հողազուրկների և սակաւահողների թիւը նշանաւոր չափերով կը նւագի. գիւղական շրջաններում վաղու աշխատանքի բաղմաթիւ նոր աղբիւրներ կը բացեն. աղքատ գիւղացիները ստիպւած չեն լինի բոլորն էլ իրենց յոյսը քաղաքի վրա դնել: Գործազուրկների թիւի նւագումը և ամբողջ գիւղացիութեան տնտեսական ապահովման մակարդակի բարձրացումը գիւղի և քաղաքի բանւորների համար կուի աւելի նպաստաւոր պայմաններ կը ստեղծի: Ինչքան աշխատանքի շուկայում պակաս գործազուրկ բանւոր կայ, այնքան կուի կապիտալիստների դէմ աւելի թեթեւանում է: Ինչ չափով նւագում է շահագործւող մասսաների կարիքը, նոյն չափով էլ աճում է նրանց աշխատավարձը, թուլանում է նրանց շարքերում եղած կուի, ուժեղանում նրանց համերաշխութիւնը:

Գիւղացու քաղաքական ու տնտեսական ազատագրման մէջ բանւոր դասակարգը վերին աստիճանի շահագրգռւած է և—ամէն ինչ մի կողմ թողած—հէնց յանուն իր դասակարգային շահերի պէտք է ամեն ջանք գործ դնի, որ չունւոր գիւղացիութիւնը իր կեանքի դժոխային պայմաններից ազատի, ներկայիս կուլտուրայի բոլոր բարիքներից օգտւելու հնարաւորութիւն ստանայ:

Յեղափոխութիւնից յետոյ դասակարգային կուի գիւղում և քաղաքում այսօրանից աւելի սուր կերպարանք կը ստանայ: Բայց միաժամանակ պրոլետարիատի և չունւոր գիւղացիութեան տրամադրութեան տակ այսօրանից անհամեմատ աւելի ուժեղ կուլտուրական, տնտեսական և քաղաքական դէնք կը դրւի, որ նրանց հնարաւորութիւն կտայ կաղմակերպել և արագ քայլերով ընթանալ դէպի գիտակից բանւորութեան վերջնական նպատակի իրականացումը—դէպի սօցիալիստական հասարակութիւնը:

Շահագործւող գիւղացիութիւնը պէտք է լաւ իմանայ, որ իր տնտեսական ու քաղաքական ստրկացմանը միայն սօցիալիստական հասարակութիւնը կարող է վերջ դնել, որ իր փրկութիւնը և ազատագրումը ամեն տեսակի շահագործումից և ճնշումից սօցիալիզմի մէջ է փնտրելու:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Նամակ I.—Գիւղացիութիւնը և դասակարգային կռիւը — 3
- » II.—Գիւղացիութեան անել դրութիւնը — 8
- » III.—Նախապատրաստական կազմակերպչական աշխատանք — 14
- » IV.—Գիւղացիութեան ներկայացուցիչները Հիմնադիր ժողովում — 21
- » V.—Քաղաքական պահանջներ—ընդհանուր ընտրական իրաւունք — 28
- » VI.—Քաղաքական պահանջներ—հասարակապետութիւն տեղային լայն ինքնավարութիւնով — 34
- » VII.—Քաղաքական պահանջներ—հարկային, զինւորական, կրօնական և ազգային ճշնշուֆների վերացումն: Դպրոց — 43
- » VIII.—Ինչքան հող կայ Ռուսաստանում — 54
- » IX.—Հողատիրութիւնը Ռուսաստանում — 61
- » X.—Գիւղացու ապրուստը — 74
- » XI.—Երկրագործութեան կախումը գործարանային արդիւնաբերութիւնից — 80
- » XII.—Կալւածատիրական հողերի գրաւումը — 85
- » XIII.—Գրաւած հողերից ինչպէս կարելի է օգտուել — 91

ՀՀ Ազգային գրադարան



NL0185692

